Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԼՈՒՍԱԼՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԼԵՌՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԷՈՒՄՈՊԱՏԵԼԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹԿԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

**www.freebooks.do.am**

ՀԱՐՀԱՎԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱԿԵԼԻ ՀԱՂԹԵՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

# ՆԻԿՈԼՈ ՄԱՔԻԱՎԵԼԻ

# ՏԻՐԱԿԱԼԸ



Նիկոլո Մաքիավելի

# ՏԻՐԱԿԱԼԸ

*Ալբերտ Բարսեղյանի*
*թարգմանությամբ*

Երևան
2010

ՀՏԴ 93/99:32 001
ԳՄԴ 63 3+66
Մ 411

Մաքիավելի Նիկոլո
Տիրակալը/թարգմ Ա.Բարսեղյան Եր
Հեղինակային հրատարություն 2010 - 200էջ

*Իտալացի գրող, պատմաբան, փիլիսոփա Նիկոլո Մաքիավելու (1469-1527) «Տիրակալը» դարեր ի վեր գրավել է լուսավորյալ մարդկության ուշադրությունը Այն բացառիկ հուշարձան է պետական կառավարման արվեստի, երկրի ղեկավարի դերի, նրա ռազմավարության և մարտավարության նրբությունների մասին ժողովրդի և տիրակալի, Տիրակալի և բանակի, Տիրակալի և նրա մերձավորների բարդ ու նուրբ հարաբերությունների տաղանդավոր մեկնաբանություն է այս գիրքը որ հայերեն լույս է տեսնում առաջին անգամ*

*Գիրքը հետաքրքիր ուղեցույց կլինի քաղաքագետների գիտնականների, պատմաբանների և անշուշտ, միրօրյա «տիրակալների» համար*

ՀՏԴ 93/99 32 001
ԳՄԴ 63 3+66

ISBN 978-9939-53-579-1

© Ա Բարսեղյան 2010թ

# Նիկոլո ՄԱՔԻԱՎԵԼԻԻ ընծայագիրը նորին պայծառափայլություն Լորենցո ՄԵԴԻՉԻԻՆ

*Տիրակալների բարեհաճությանը արժանանալու համար մարդիկ սովորաբար նվիրաբերում են իրենց ունեցած ամենաթանկարժեք իրը, կամ էլ մի այլ բան, ինչով հույս ունեն մեծագույն բավականություն պատճառել նրան. այսինքն՝ նժույգ ձի, զենք, թանկարժեք դիպակ ու քար և տիրակալների մեծությանը վայել զանազան այլ ընծաներ Իսկ ես, կամենալով Ձերդ պայծառափայլությանը հավաստել իմ նվիրվածությունը՝ ինչքիս մեջ չգտա առավել թանկ ու արժեքավոր մի բան, քան երևելի մարդկանց վարքի մասին իմ գիտելիքները, որոնք ձեռք եմ բերել առկա եղելության բազմամյա փորձի և անցյալի անցուդարձի անխոնջ ուսումնասիրության շնորհիվ: Շատ ժամանակ ու ջանքեր ներդնելով իմ ամբարածը իմաստավորելու համար, փորձ արեցի խոհերս ամփոփել մի երկասիրության մեջ և որպես նվեր մատուցանել Ձերդ պայծառափայլությանը՝ Թեև ենթադրում եմ, որ սույն մատյանը անարժան է*

Ձեր ուշադրությանը, այնուամենայնիվ, հուսով եմ՝ Դուք Ձեր ներողամտությամբ հանդերձ հաճությամբ կընդունեք՝ քաջ գիտակցելով, որ ես ի զորու չեմ Ձեզ ավելի արժեքավոր նվեր մատուցանել: Դրա շնորհիվ, կարճ միջոցում, հաղորդակից կլինեք բազում վտանգներով ու տագնապներով ձեռք բերված իմ գիտելիքների չտեմարանին: Աստ չեմ հոգացել ոչ զարդարուն ոճի, ոչ խոսքի ճոխության, բարեհնչունության, ոչ էլ արտաքին զարդարանքի ու փայլի մասին, որոնցով բազում գրիչներ ջանում են պաճուճել իրենց երկերը:

Ցանկությունս է, որ գրվածքս մնա անհայտության մեջ, կամ էլ ճանաչ դառնա շնորհիվ նյութի անսովորության ու կարևորության:

Թող հանդգնություն չհամարվի, որ ստորին ու աննշան կոչումով մեկը հանձն է առնել քննել տիրակալների գործքն ու խորհուրդներ տալ նրանց· Ինչպես ընանկար վրձնելիս գեղանկարիչը պետք է իջնի հովիտ՝ հայացք գցի բլուրների ու լեռների վրա և վեր բարձրանա՝ հայացքով զննի հովիտը, ճիշտ այդպես էլ ժողովրդի էությունը ըմբռնելու համար հարկ է լինել տիրակալ, իսկ տիրակալների էության

մեջ թափանցելու համար պետք է սերված լինել ժողովրդի ծոցից.

Ձերդ պայծառափայլությունը սույն համեստ նվերը թող ընդունի նույն զգացումով, որով ես եմ համակված: Եթե բարեհաճեք ուշի ուշով ընթերցել իմ մատյան գիրքը ու խորհել նրա շուրջ, կզգաք, որ կամեցել եմ Ձերդ պայծառափայլությանը տեսնել այնպես վեհ, ինչպես վերուստ հաստել է ճակատագիրը Ձեր արժանիքների հանգույն:

Ու այն բարձունքից, ուր թևածում է Ձերդ պայծառափայլությունը, եթե երբևէ հայացք նետի այն ստորոտի վրա, ուր դեգերում եմ ես, կտեսնի, թե որքան անողոք է եղել ճակատագիրն իմ հանդեպ՝ պես պես ծանր փորձությունների ենթարկելով նվաստիս:

## ԳԼՈՒԽ I
## Քանի տեսակի պետություններ են լինում և ինչպես են ձեռք բերվում

Անցյալում կամ ներկայում մարդկանց վրա իշխած բոլոր պետությունները և տերությունները եղել են հանրապետություն, կամ միահե-

ծան կառավարվող միապետություն Վերջիններս կարող են լինել ժառանգած, եթե տիրակալի տոհմը իշխել է երկար ժամանակ, կամ նորելուկ. Նոր կարող է լինել ամբողջ պետությունը (այդպիսին է Միլանը Ֆրանչեսկո Սֆորցայի համար), կամ դրա մի մասը, որը նվաճման հետևանքով միացվել է ժառանգված պետությանը (այդպիսին է Նեապոլի թագավորությունը Իսպանիայի թագավորի համար) Նոր պետությունները լինում են երկու տեսակի՝ պետություններ, որտեղ հպատակները ընտելացել ու հնազանդվել են տիրակալներին, և պետություններ, որտեղ նրանք վաղնջական ժամանակներից ապրել են ազատ· Պետությունները ձեռք են բերվում սեփական կամ ուրիշի զենքով, ճակատագրի բարեհաճությամբ կամ քաջությամբ.

## ԳԼՈՒԽ II
## Ժառանգական մենիշխանության մասին

Ես չեմ անդրադառնա հանրապետություններին, քանզի դրանց մասին խոսելու եմ այլ տեղում Այստեղ խոսքը կվերաբերի միահեծան

կառավարմանը և, հետևելով վերը նախանշած կարգին, կբացատրեմ, թե տիրակալներն ինչ միջոցներով կարող են ղեկավարել պետություններն ու պահպանել պետական իշխանությունը։

Սկսեմ նրանից, որ ի տարբերություն նոր տիրակալի, ժառանգություն ստացածի համար շատ ավելի հեշտ է պահպանել իշխանությունը, որի հպատակները հասցրել են համակերպվել իշխող տան կարգուկանոնին, քանզի դրա համար բավական է, որ նա չխախտի նախնյաց ավանդույթներն ու հետագայում ելնելով նոր հանգամանքներից փոփոխություններ կատարի առանց շտապելու. Նման գործելակերպի դեպքում նույնիսկ միջակ տիրակալը չի կորցնի իշխանությունը, եթե միայն գահընկեց չանեն հզոր ու ահեղ ուժերը, թեև այդ դեպքում էլ նա օգտվելով նվաճողի առաջին իսկ անհաջողությունից կարող է հետ խլել իշխանությունը.

Մեզ մոտ՝ Իտալիայում, ասվածի օրինակ կարող է ծառայել Ֆեռարայի դուքսը, ով իշխանությունը չկորցրեց 1484 թվականին վենետիկցիներից և 1510-ին Հուլիոս պապից կրած պարտություններից հետո, միմիայն շնորհիվ այն բանի, որ նրա տոհմը Ֆեռարայում իշխել էր

հնագույն ժամանակներից: Քանզի իշխանությունը ժառանգաբար ստացած տիրակալը, հպատակներին ճնշելու ավելի քիչ պատճառներ ու անհրաժեշտություն ունի, ուստիև նրանք նրա հանդեպ մեծ սիրով են համակված· Ու եթե նա չափից ավելի մեծ արատներ չունի, որոնք կարող են ատելություն հարուցել, ապա օրինաչափորեն վայելում է համաքաղաքացիների համակրանքը. Վաղեմի և սերնդե-սերունդ ձգվող կառավարումը մոռանալ է տալիս երբեմնի հեղաշրջումներն ու դրանք ծնող պատճառները, մինչդեռ, եթե սկսես փոփոխություններ կատարել, դրանց անպայման հաջորդելու են նորերը:

## ԳԼՈՒԽ III
## Խառը պետությունների մասին

Նոր տիրակալը դժվարությամբ է իր ձեռքում պահում իշխանությունը Նույնիսկ պետությանը նոր տիրույթներ կցած գահաժառանգած տիրակալը մի տեսակ խառը դարձնելով այն, դժվարությամբ է իշխում նախևառաջ այն բնական պատճառով, որ նման իրավիճակը

հեղաշրջումներ է առաջացնում բոլոր նորաստեղծ պետություններում.

Բանն այն է, որ մարդիկ, հույս ունենալով, որ նոր տիրակալը ավելի լավը կլինի, ըմբոստանում են հնի դեմ, բայց շուտով փորձով համոզվում, որ խաբվել են, քանզի նոր տիրակալը միշտ էլ հնից վատն է լինում, ինչն, այնուամենայնիվ, բնական է և օրինաչափ, որովհետև նվաճողը ճնշում է նոր հպատակներին՝ նրանց վրա զանազան հարկեր դնելով ու հարկադրելով օթևան տալ զորքին, մի բան, որ անխուսափելի է նվաճման ժամանակ: Եվ, այսպիսով, դառնում է ճնշվածների թշնամին և կորցնում այն մարդկանց բարեկամությունը, ովքեր աջակցել էին նվաճմանը, քանզի չի կարող պարգևներ տալ նրանց ակնկալիքի չափով, բայց և պարտական լինելով, չի կարող նրանց նկատմամբ կտրուկ միջոցներ ձեռնարկել՝ Զէ որ առանց այդ մարդկանց օգնության նա չէր կարող մտնել երկիր, որքան էլ որ ուժեղ լիներ նրա զորքը. Հենց դա էր պատճառը, որ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XII-ը արագորեն գրավելով Միլանը, նույնպիսի արագությամբ էլ այն կորցրեց: Եվ դուքս Լոդովիկոյին հենց

այն բանի շնորհիվ հաջողվեց այդ անգամ սեփական ուժերով հետ խլել Միլանը, որովհետև ժողովուրդը, որն ինքն էր արքայի առաջ բացել դարպասները, շատ շուտ հուսախաբվելով հրաժարվեց կրել նոր տիրակալի լուծը

Ճիշտ է, եթե խռովարար երկիրը կրկին անգամ է նվաճվում, տիրակալի համար ավելի դյուրին է այնտեղ ամրապնդել իր իշխանությունը, քանզի խռովությունը նրան առիթ է տալիս նվազ զգուշավորությամբ պատժել մեղավորներին, մերկացնել կասկածյալներին, պաշտպանական միջոցներ ձեռնարկել առավել խոցելի տեղերում. Առաջին անգամ Ֆրանսիան Միլանը հանձնեց, երբ հազիվ էր դուքս Լոդովիկոն մի փոքր աղմկել նրա սահմանների վրա, բայց երկրորդ անգամ Ֆրանսիան Միլանն իր ձեռքում պահեց այնքան ժամանակ, մինչև որ նրա դեմ ոտքի ելան բոլոր իտալական պետությունները ու ցիրուցան անելով նրա զորքերը, վտարեցին Իտալիայի սահմաններից, ինչը տեղի ունեցավ վերոհիշյալ պատճառներով. Այնուամենայնիվ, Ֆրանսիան երկու դեպքում էլ կորցրեց Միլանը: Թագավորի առաջին անհաջողության պատճառը, որն ընդհանուր է բոլոր

նմանատիպ դեպքերի համար, ես նշեցի, մնում է պարզել երկրորդի պատճառը և հասկանալ, թե ինչ միջոցներ ուներ Լյուդովիկոսը և նրա փոխարեն յուրաքանչյուր ոք, որպեսզի նվաճումն ավելի խելացի ձևով ամրապնդեր, քան դա արեց Ֆրանսիան

Սկսեմ նրանից, որ նվաճված և իբրև ժառանգություն ստացած տիրույթները կարող են պատկանել մեկ երկրի և ունենալ մեկ լեզու, կամ տարբեր երկրների և ունենալ տարբեր լեզուներ. Առաջին դեպքում դժվար չէ նվաճյալը պահել, հատկապես, եթե նոր հպատակները նախկինում էլ ազատ չեն եղել Նրանց վրա իշխանությունն ամրապնդելու համար բավական է բնաջնջել նախկին տիրակալի տոհմը սովորույթների ընդհանրության և հին կարգերը պահպանելու դեպքում ուրիշ ոչ մի բանից խռովություններ չեն ծագի

Մենք գիտենք, որ բանն այդպես էր Բրետանում, Բուրգունդիայում, Նորմանդիայում և Գասկոնում, որոնք վաղուց են մտել Ֆրանսիայի կազմի մեջ Ճիշտ է, նրանց բարբառները իրարից փոքր-ինչ տարբերվում են, բայց սովորույթների նմանության շնորհիվ նրանք իրար

հետ համերաշխ են։ Նման դեպքերում նվաճողը պետք է ձեռք առնի նախազգուշության լոկ երկու միջոց. առաջին՝ հետևի, որ նախկին տիրակալի տոհմը ընաջնջվի, երկրորդ՝ պահպանի նախկին օրենքներն ու հարկերը,- այդժամ նվաճված հողերը կարճ ժամանակամիջոցում կմիավորվեն զավթիչի բուն պետության հետ

Բայց եթե նվաճված երկիրն այն երկրից, որի մասն է դարձել, տարբերվում է լեզվով, սովորույթներով ու բարքերով, ապա այստեղ, հիրավի, դժվար է պահել իշխանությունը, այստեղ պահանջվում են և՛ մեծ հաջողություն և՛ մեծ հմտություն։ Դրան հասնելու ամենաճիշտ ու անմիջական ուղիներից մեկը բնակության համար այնտեղ տեղափոխվելն է. Նման քայլը, կամրապնդի ու վտանգից զերծ կպահի նվաճումը. Հունաստանը նվաճելով, հենց այդպես վարվեց թուրքական սուլթանը, որն ինչքան էլ ջանար, չէր կարող իր իշխանության ներքո պահել այդ երկիրը, եթե մայրաքաղաքը չտեղափոխեր այնտեղ: Քանզի միայն երկրում ապրելով կարելի է նկատել սկսվող խռովությունն ու ժամանակին դրա դեմն առնել, այլապես այդ մասին կիմանաս այն ժամանակ, երբ դա այնքան կխո-

*բանա, որ ուշ կլինի միջոցներ ձեռնարկել. Հաստատվելով նվաճված երկրում, տիրակալը, նաև երկիրը կազատի պաշտոնյաների կողոպուտից, որովհետև հպատակները հնարավորություն կստանան անմիջականորեն դիմել նրա դատաստանին, ինչը հնազանդներին նրան սիրելու, իսկ անհնազանդներին՝ վախենալու ավելի շատ առիթներ կտա: Եվ, եթե նույնիսկ հարևան երկրներից որևէ մեկը մտքին դրել էր հարձակվել, ապա հիմա ավելի մեծ զգուշավորություն հանդես կբերի, այնպես որ տիրակալը հազիվ թե կորցնի նվաճած երկիրը, եթե բնակության համար տեղափոխվի այնտեղ. Մյուս արդյունավետ միջոցը մեկ-երկու գաղութ հիմնելն է այն վայրերում, որոնք նոր հողերը միացնում են նվաճողի պետությանը: Ընդսմին, դա երկրում մեծ քանակությամբ հեծելազոր ու հետևակ տեղաբաշխելու միակ հնարավորությունն է: Գաղութները մեծ ծախսեր ու աշխատանքներ չեն պահանջում, և դրանք պահելը գրեթե ոչինչ չի նստում տիրակալի վրա: Դրանք ունեզրկում են լոկ այն բնակիչներին, որոնց հողակտորներն ու տներն անցնում են նորաբնակներին, այսինքն տուժում են միայն մի բուռ մարդիկ, որոնք աղ-*

քատանալով ու երկրով մեկ սփռվելով, ոչնչով չեն կարող վնասել տիրակալին, իսկ մնացածները ձեռնպահ մնալով կխաղաղվեն, և բացի այդ, կվախենան անհնազանդություն ցուցաբերելով արժանանալ ընչազրկված հարևանների բախտին: Այնպես որ, գաղութները տիրակալի վրա էժան են նստում, նրան ծառայում են հավատարմորեն և սնանկացնում են սոսկ փոքրաթիվ մարդկանց, ովքեր աղքատանալով ու ցաքուցրիվ լինելով տիրակալի համար վտանգավոր չեն. Այս առիթով տեղին կլիներ նկատել, որ մարդկանց կամ պետք է սիրաշահել կամ ոչնչացնել, քանզի պատճառած փոքր չարիքի համար մարդը կարող է վրեժխնդիր լինել, իսկ մեծ չարիքի համար՝ չի կարող, ինչից հետևում է, որ մարդուն պետք է վիրավորանք հասցնել այն հաշվարկով, որ վրեժից չվախենաս Իսկ եթե գաղութների փոխարեն զորք մտնի երկիր, որին պահելը շատ ավելի թանկ է նստելու և կլանելու է նոր պետությունից ակնկալվող բոլոր եկամուտները, ձեռքբերումը կվերածվի վնասի. Բացի այդ, կտուժեն շատ ավելի մեծ թվով մարդիկ, քանի որ զորքին կացարանով ապահովելը դրվում է ամբողջ բնակչության ուսերին, դրա

համար էլ նեղությունների մեջ հայտնված յուրաքանչյուր ոք դառնում է տիրակալի թշնամին։ Իսկ այդքան մեծ թվով թշնամիներ վաստակելը վտանգավոր է, քանզի նրանք թեև պարտված, բայց իրենց տանն են։ Եվ այսպես, որ կողմից էլ, որ նայես, նման կայազոր պահելը վնասավոր է, մինչդեռ դաղութներն օգտաբեր են։

Սովորույթներով ու լեզվով օտար երկրում նվաճողը պետք է դառնա ավելի թույլ հարևանների ղեկավարն ու պաշտպանը՝ աշխատելով թուլացնել ուժեղներին, և բացի այդ, հետևելով, որ հանկարծ երկիր չմտնի իրեն ուժով չզիջող օտարերկրացի մի այլ տիրակալ։ Այդպիսիներին միշտ հրավիրում են երկրում դժգոհ մնացած մարդիկ՝ ավելորդ փառասիրության կամ վախի պատճառով։ Ժամանակին այդ կերպ էտոլացիները Հունաստան կանչեցին հռոմեացիներին։ Ասենք, մյուս բոլոր երկրներ էլ նրանց նույնպես տեղի բնակչությունն էր հրավիրել։ Իսկ իրավիճակն այնպիսին է, որ, երբ հզոր տիրակալը մտնում է երկիր, պակաս ուժեղ պետությունները անմիջապես կիպ-կպչում են նրան, սովորաբար իրենցից ավելի ու-

ժեղների հանդեպ ունեցած նախանձի պատճառով, այնպես որ նա կարիք չունի նրանց իր կողմը գրավելու, որովհետև նրանք հաճույքով կմիանան նրա ստեղծած պետությանը: Միայն թե պետք է թույլ չտալ, որ նրանք ընդարձակվեն ու ամրանան և այնժամ սեփական ուժերով ու նրանց աջակցությամբ դժվար չի լինի զսպել ավելի խոշոր տիրակալներին ու դառնալ տվյալ երկրի լիիրավ տերը. Իսկ եթե տիրակալը չհոգա այդ ամենի մասին, նա շուտով կզրկվի նվաճածից, բայց մինչ այդ կունենա բազմաթիվ անախորժություններ:

Հռոմեացիները, նվաճելով երկիրը, հետևում էին նշյալ բոլոր կանոններին, հիմնում էին գաղութներ, հովանավորում թույլերին՝ այդուհանդերձ, նրանց թույլ չտալով ուժեղանալ, սանձում էին ուժեղներին ու միջոցներ ձեռք առնում, որ երկիր չթափանցի հզոր օտարերկրացիների ազդեցությունը: Կսահմանափակվեմ Հունաստանի օրինակով: Հռոմեացիներն իրենց կողմը գրավեցին աքայացիներին ու էտոլացիներին, նվաստացրին մակեդոնական թագավորությունը, այնտեղից վտարեցին Անտիոքոսին: Բայց հաշվի չառնելով ոչ մի ծառայություն,

աքայացիներին ու էտոլացիներին թույլ չտվեցին ընդլայնել իրենց տիրույթները, տեղի չտվեցին Փիլիպոսի շողոքորթությանն ու նրա հետ դաշինք չկնքեցին, քանի դեռ նրան ուժաբեկ չէին արել և չնահանջեցին Հունաստանում տիրույթներ ձեռք բերելու Անտիոքոսի համառ նկրտումների առաջ: Հռոմեացիները գործում էին այնպես, ինչպես պետք է գործեն բոլոր իմաստուն տիրակալները, այսինքն՝ մտածում էին ոչ միայն ներկայի, այլև գալիքի մասին և աշխատում էին բոլոր ուժերով կանխել հնարավոր աղետները, ինչը դժվար չէր անել, եթե ժամանակին անհրաժեշտ միջոցներ ձեռք առնվեին: Եթե սպասենք աղետի վրա հասնելուն, ապա էլ ոչ մի միջոց չի օգնի, քանզի հիվանդությունը կդառնա անբուժելի:

Այս երևույթը նման է թոքախտի. բժիշկներն ասում են, որ սկզբում այդ հիվանդությունը դժվար է ախտորոշել, բայց հեշտ է բուժել, իսկ եթե այն աչքաթող է արված, ապա հեշտորեն է ախտորոշվում, բայց բուժելը դժվար է: Այդպես էլ պետական գործերում՝ եթե նոր սկսվող հիվանդությունը ժամանակին հայտնաբերվի, ինչն անելու ընդունակ են լոկ խելացի տիրա-

կալները, ապա դրանից ազատվելը դժվար չէ, բայց եթե դա խորացել է այնքան, որ տեսանելի է բոլորին, ապա ոչ մի կերպ հնարավոր չէ դարմանել.

Հռոմեացիները կանխատեսելով աղետը, անմիջապես միջոցներ էին ձեռք առնում, և առանց հապաղելու աներկյուղ պատերազմ սկսում, քանզի գիտեին, որ չի կարելի պատերազմից խուսափել, այն կարելի է լոկ հետաձգել հօգուտ հակառակորդի Ուստիև, նրանք Փիլիպոսի և Անտիոքոսի դեմ պատերազմ սկսեցին Հունաստանի տարածքում, որպեսզի հետո ստիպված չլինեն նրանց հետ Իտալիայում կռվել: Այդ ժամանակ դեռ հնարավորություն կար խուսափելու ինչպես մեկի, այնպես էլ մյուսի դեմ պատերազմելուց, բայց հռոմեացիները չկամեցան դա անել. Նրանց հաճո չէր մերօրյա իմաստակների սիրած ասացվածքը՝ հույսներդ դրեք բարենպաստ պահի վրա Նրանց համար բարենպաստ էին լոկ իրենց քաջությունն ու հեռատեսությունը Մինչդեռ հապաղումը հղի է վտանգներով, քանզի ժամանակը չարիքի հետ բերում բարիք, բարիքի հետ չարիք:

Սակայն, վերադառնանք Ֆրանսիային և

տեսնենք, թե նա կատարե՞լ է արդյոք իմ նշած պայմաններից գոնե մեկը Ես պիտի խոսեմ ոչ թե Կարլի, այլ Լյուդովիկոսի մասին. նա ավելի երկար ժամանակ է մնացել Իտալիայում, ուստի նրա գործելակերպը մեզ ավելի տեսանելի է,-և դուք կհամոզվեք, որ նա արել է ճիշտ հակառակն այն ամենի, ինչ պետք է աներ տիրակալը սովորույթներով ու լեզվով օտար երկրում իշխելու համար:

Լյուդովիկոս արքան Իտալիա մտավ վենետիկցիների շնորհիվ, որոնք կամենալով իրենց տիրույթներն ընդլայնել, աջակցության դիմաց պահանջեցին Լոմբարդիայի կեսը: Ես այդ գործարքի համար արքային չեմ մեղադրում: Ցանկանալով թեկուզ մեկ ոտքով մտնել Իտալիա և այնտեղ չունենալով դաշնակիցներ, հատկապես այն բանից հետո, երբ Կարլի պատճառով Ֆրանսիայի առաջ փակվել էին բոլոր դռները, նա հարկադրված էր դաշինքներ կնքել առանց խտրականության Անշուշտ, նա կարող էր հաջողություն ակնկալել, եթե հետագայում սխալներ թույլ չտար Նվաճելով Լոմբարդիան, նա անմիջապես վերադարձրեց Ֆրանսիայի՝ Կարլի օրոք կորցրած հեղինակությունը. Ջենովան

հպատակվեց, Ֆլորենցիացիները դաշինք առաջարկեցին, Մանտուայի մարքիզը, Ֆեռարայի դուքսը, Բենտիվոլիոյի տունը, կոմսուհի Ֆորլին, Ֆաենցայի, Պեզարոյի, Ռիմինիի, Կամերինոյի, Պիոմբինոյի, Լուկայի, Պիզայի, Սիենայի տերերը,-բոլորն էլ բարեկամության հավաստիացումներով շտապեցին Լյուդովիկոսի մոտ: Հենց այստեղ էլ վենետիկցիները հասկացան, թե որքան թեթևամիտ քայլ են արել՝ հանուն լոմբարդական երկու քաղաքի արքայի իշխանությանը հանձնելով Իտալիայի երկու երրորդը:

Հիմա դատեք, թե արքան ինչ հեշտությամբ կարող էր ամրապնդել իր գերազանցությունը. դրա համար հարկավոր էր լոկ հետևել նշված կանոններին և ապահովել դաշնակիցների անվտանգությունը: Բազմաթիվ, բայց թույլ, վախով համակված, որը եկեղեցու, որը վենետիկցիների հանդեպ՝ այդ դաշնակիցները պարզապես ստիպված էին փնտրել նրա հովանավորությունը: իսկ նա կարող էր նրանց միջոցով իրեն ապահովել դեռևս ուժեղ հակառակորդներից: Սակայն, նա հազիվ էր Միլան մտել, երբ ձեռնարկեց հակառակը՝ Ալեքսանդր պապին օգնեց զավթելու Ռոմանիան, չնկատելով, որ դրանով

խարխլում է իր հզորությունը, վանում դաշնակիցներին ու նրանց, ովքեր կամովին իրենց բախտը հանձնել էին նրա հովանավորությանը: Ընկատեց նաև, որ զգալիորեն ամրապնդում է պապականության աշխարհիկ իշխանությունը, որն առանց այդ էլ ամուր էր հոգևոր իշխանությամբ: Առաջին սխալը կատարելով, նա ստիպված էր ընթանալ նույն ուղով, այնպես որ հարկադրված եղավ անձամբ գալ Իտալիա, որպեսզի սանձի Ալեքսանդրի փառասիրությունն ու նրան թույլ չտա նվաճել Տոսկանան: Բայց Լյուդովիկոսի համար կարծես թե քիչ էր եկեղեցին ուժեղացնելն ու դաշնակիցներին վանելը: Զգտելով տիրանալ Նեապոլի թագավորությանը, նա այն կիսեց Իսպանիայի թագավորի հետ, այսինքն Իտալիա՝ իր տնօրինության տակ գտնվող երկիր կանչեց հավասարազոր մրցակցի, երևի նրա համար, որ դժգոհ ու պատվախնդիր մարդիկ իմանան, թե ում մոտ ապաստան փնտրեն. Վտարելով մի տիրակալի, որ կարող էր նրա հարկատուն դառնալ, նա թագավորություն հրավիրեց մի այլ տիրակալի, որը կարող էր հենց նրան վտարել:

Հիրավի, նվաճումների կիրքը բնական ու

սովորական բան է, և նրանց, ովքեր այդ անելիս ծանրութեթև են անում իրենց հնարավորությունները, բոլորը հավանություն են տալիս և կամ չեն դատապարտում, բայց դատապարտման արժանի սխալ են գործում նրանք, ովքեր հաշվի չառնելով իրենց հնարավորությունները, նվաճումների են ձգտում՝ ինչ գնով էլ որ դրանք ձեռք բերվելու լինեն: Ֆրանսիան պետք է փորձեր Նեապոլին տիրել սեփական ուժերով, բայց նա չպիտի դրան հասներ թագավորությունը բաժան-բաժան անելու գնով: Եթե վենետիկցիների հետ Լոմբարդիան կիսելը դեռ կարելի է արդարացնել այն հանգամանքով, որ դա թագավորին թույլ տվեց հաստատվել Իտալիայում, ապա այս երկրորդ բաժանումը միայն դատապարտման է արժանի, քանզի չի կարող արդարացվել նման անհրաժեշտությամբ :

Եվ այսպես, Լյուդովիկոսը ընդհանուր հաշվով հինգ սխալ կատարեց. վտարեց մանր տիրակալներին, օգնեց, որ Իտալիայի ներսում ուժեղ տիրակալն ավելի ուժեղանա, երկիր հրավիրեց իրեն հավասարազոր օտարերկրացու, չտեղափոխվեց Իտալիա, այնտեղ գաղութներ չհիմնեց·

Այս հինգ սխալը կարող էին նրա կենդանության օրոք այնքան էլ կործանարար չլինել, եթե նա չգործեր վեցերորդը՝ ոտնձգություններ չկատարեր վենետիկցիների տիրույթների վրա Վենետիկին նա պիտի սաստեր դեռ մինչև եկեղեցու հզորացմանը սատարելն ու իսպանացիներին հրավիրելը, բայց գործելով այդ երկու սխալները, չէր կարելի թույլ տալ, որ Վենետիկը կործանվի: Քանզի մնալով ուժեղ, նա ուրիշներին թույլ չէր տա գրավել Լոմբարդիան, թեկուզ այն պատճառով, որ ինքն էլ նրա վրա աչք ուներ, բացի այդ, որ ոչ ոք չէր կամենա պատերազմել Ֆրանսիայի հետ հանուն այն բանի, որ Լոմբարդիան բաժին ընկնի Վենետիկին, իսկ միաժամանակ Ֆրանսիայի ու Վենետիկի դեմ ոչ ոք չէր համարձակվի կռվել: Եթե ինձ առարկեն, ասելով, թե Լյուդովիկոսը Ռոմանիան Ալեքսանդրին, իսկ Նեապոլը Իսպանիայի թագավորին է զիջել պատերազմից խուսափելու համար, ես կպատասխանեմ նախորդ փաստարկներով, այն է. չի կարելի անկարգությունների վրա աչք փակել, որպեսզի խուսափես պատերազմից, քանզի դրանից խուսափել չես կարող, իսկ ռազմական գերազանցությունդ էլ

կկորցնես: Եթե իմ աչքը խոթեն այն, որ թագավորն իր ամուսնալուծությունը գլուխ բերելու և Ռուանի արքեպիսկոպոսին կարդինալի գլխարկ շնորհելու դիմաց էր պապին խոստացել օգնել նվաճելու Ռոմանիան, ապա դրան կպատասխանեմ այն գլխում, որտեղ խոսքը տիրակալների խոստումների և այն մասին է, թե ինչպես պետք է դրանք կատարել:

Եվ այսպես, Լյուդովիկոսը կորցրեց Լոմբարդիան որովհետև չեղվեց այն կանոններից, որոնց հետևում էին նվաճած երկիրը պահել կամեցող տիրակալները: Եվ դրանում ոչ մի անսովոր բան չկա, ընդհակառակն՝ ամեն ինչ սովորական է և օրինաչափ: Ես այդ մասին Նանտում խոսել եմ Ռուանի կարդինալի հետ, երբ Վալենտինոն (ժողովուրդն այդպես էր անվանում Չեզարե Բորջային՝ Ալեքսանդր պապի որդուն) գրավեց Ռոմանիան. Կարդինալը նկատեց, որ իտալացիներն անվարժ են ռազմական գործում, ես նրան պատասխանեցի, որ ֆրանսիացիներն էլ թույլ են քաղաքականության ասպարեզում, այլապես նրանք թույլ չէին տա, որ եկեղեցին այդքան հզորանա: Ինչպես փորձը ցույց տվեց, եկեղեցին ու Իսպանիան Ֆրանսի-

այի շնորհիվ Իտալիայում ընդլայնեցին իրենց տիրույթները, իսկ Ֆրանսիան նրանց պատճառով այնտեղ կորցրեց ամեն ինչ: Այստեղից կարելի է բազմիցս հաստատված մի հետևություն անել. վա՜յ նրան, ով կբազմապատկի ուրիշի հզորությունը, քանզի հզորության հասնում են խելամտությամբ կամ ուժով, և մոլորություն է կարծել, թե նա, ով հզորացել է ոչ թե իր, այլ քո արժանիքների շնորհիվ, կդառնա քո բարեկամը:

## ԳԼՈՒԽ IV
## Թե ինչու Դարեհի թագավորությունը, որը նվաճվել էր Ալեքսանդրի կողմից, Ալեքսանդրի մահից հետո չապստամբեց նրա հաջորդների դեմ

Խորհրդածելով այն մասին, թե ինչ ջանքեր են պահանջվում նվաճված պետությունում իշխանությունը պահպանելու համար, կարելի է միայն ապշել, թե ինչու Ալեքսանդր Մեծի ամբողջ տերությունը նրա անժամանակ մահից հետո հակառակ սպասումների ոչ միայն չլուծարվեց, այլև առանց արյունահեղության անցավ նրա հաջորդներին, ովքեր այն կառավարելիս

այլ հոգսեր չունեին սեփական փառասիրության պատճառով իրենց համար ստեղծած հոգսերից բացի: Ի բացատրության դրա, պետք է ասել, որ բոլոր միահեծան կառավարվող տերությունները, որքանով որ դրանք մնացել են մարդկանց հիշողության մեջ, բաժանվում են պետություններից, որտեղ տիրակալն իշխում է շրջապատված ծառաներով, որոնք նրա ողորմածությամբ ու բարեհաճությամբ բարձր պաշտոններ են զբաղեցնում և օգնում նրան կառավարել պետությունը, և պետություններից, որտեղ տիրակալն իշխում է բարոններով շրջապատված, որոնք կառավարում են ոչ թե տիրակալի ողորմածության, այլ տոհմի հնության շնորհիվ: Այդ բարոններն ունեն ժառանգություն ստացած պետություններ ու հպատակներ, որոնք խոնարհվում են նրանց իշխանության առջև և ի ծնե պարտավոր են նրանց սիրել. Այնտեղ, որտեղ տիրակալը կառավարում է ծառաների միջոցով, ունի մեծ իշխանություն, որովհետև հպատակներն ամբողջ երկրում ճանաչում են միայն մեկ տիրակալի, և եթե հնազանդվում են նրա ծառաներին, ապա սոսկ որպես աստիճանավորների ու պաշտոնատար ան-

ձանց՝ նրանց նկատմամբ առանձնապես ոչ մի սեր էլ չտածելով:

Մեր ժամանակներում տարակերպ կառավարման օրինակներ են հանդիսանում թուրքական սուլթանն ու Ֆրանսիայի թագավորը: Թուրքական միապետությունը ենթարկվում է մեկ միապետի. տերության մեջ մնացած բոլորը նրա ծառաներն են: Երկիրը բաժանված է օկրուգների՝ սանջակների, որտեղ սուլթանը կուսակալներ է նշանակում, որոնց փոխում ու վերանշանակում է ըստ իր ցանկության. Ֆրանսիայի թագավորը, ընդհակառակն, շրջապատված է բազմաթիվ տոհմիկ ազնվականներով, որոնք ընդունելի ու սիրելի են հպատակների համար, և, բացի այդ, օժտված առանձնաշնորհումներով, որոնց վրա թագավորը չի կարող անպատիժ կերպով ոտնձգություններ կատարել:

Եթե մենք համեմատենք այդ պետությունները, ապա կտեսնենք, որ սուլթանի միապետությունը դժվար է նվաճել, բայց նվաճելուց հետո հեշտ է պահել, և, ընդհակառակը, Ֆրանսիայի նման պետությունը որոշ իմաստով ավելի հեշտ է նվաճել, բայց պահելն անհամեմատ դժվար է: Սուլթանի պետությանը դժվար է տիրանալ,

որովհետև նվաճողը չի կարող հույս ունենալ, որ կհրավիրվի որևէ տեղական տիրակալի կողմից, կամ, որ սուլթանի մերձավորների մեջ հասունացած խռովությունը կդյուրացնի իշխանության զավթումը· Ինչպես վերն ասված է, սուլթանի մերձավորները նրա ստրուկներն են, և, քանի որ ամեն ինչով կախված են նրա ողորմածությունից, ապա նրանց կաշառելն ավելի դժվար է, ասենք, այդ կաշառվածներից էլ առանձնապես օգուտ լինել չի կարող, քանզի հիշյալ պատճառով նրանք չեն կարող ժողովրդին տանել իրենց հետևից: Հետևաբար, սուլթանի վրա հարձակվողը պետք է պատրաստ լինի միահամուռ հակահարվածի, և ավելի շատ ապավինի սեփական ուժերին, քան հույսը դնի ուրիշների անմիաբանության վրա: Բայց, եթե սուլթանի դեմ հաղթանակ է տարված ու նրա զորքերը ճակատամարտում գլխովին ջախջախվել են, նվաճողը սուլթանի արյունակից հարազատներից բացի, թերևս էլ ոչ մեկից զգուշանալու կարիք չունի: Իսկ եթե նրանք էլ են բնաջնջվել, ապա կարելի է ոչ մեկից չվախենալ, քանզի ուրիշ ոչ ոք չի կարող հպատակներին տանել իր հետևից, և ինչպես մինչև հաղթանա-

կը պետք չէր հույս դնել ժողովրդի օգնության վրա, այնպես էլ հաղթանակից հետո չարժե նրանից զգուշանալ:

Բանն այլ է այնպիսի պետություններում, ինչպիսին Ֆրանսիան է: Դժվար չէ այդ երկիր ներխուժել՝ համաձայնության գալով բարոններից որևէ մեկի հետ, որոնց մեջ միշտ էլ կգտնվեն դժգոհներ ու փոփոխությունների սիրահարներ: Նշված պատճառներով նրանք կարող են ապահովել նվաճողի ներխուժումը և դյուրացնել նրա հաղթանակը: Բայց այդպիսի երկիրը դժվար է պահել, որովհետև վտանգ է սպառնում ինչպես նրանց կողմից, ովքեր քեզ օգնել են, այնպես էլ նրանց կողմից, ում հաղթել ես ուժով: Եվ այստեղ արդեն բավական չէ բնաջնջել տիրակալի տոհմը, քանզի միշտ էլ կլինեն բարոններ՝ պատրաստ գլխավորելու մի նոր խռովություն, և քանի որ չես կարող բավարարել նրանց պահանջները և կամ ոչնչացնել նրանց, ապա նրանք առաջին իսկ հնարավորության դեպքում քեզ գահընկեց կանեն:

Եթե հիմա դառնանք Դարեհի պետությանը, ապա կտեսնենք, որ դա նման էր սուլթանի պետությանը, որի պատճառով էլ Ալեքսանդրն այն

պետք է խորտակեր մեկ հարվածով՝ ճակատամարտում գլխովին ջախջախելով Դարեհի զորքը՝ Բայց այդ հաղթանակից ու Դարեհի զոհվելուց հետո նա, նշված պատճառով, կարող էր չանհանգստանալ իր իշխանության ամրության համար՝ Եվ նրա հաջորդներն էլ հոգսեր չէին ունենա, եթե փոխհամաձայնության գային: Երբեք նրանց պետության մեջ այլ խռովություններ չեն ծագել, բացի նրանցից, որոնց հարուցողը հենց իրենք են եղել:

Մինչդեռ, այն պետություններում, որոնք իրենց կառուցվածքով նման են Ֆրանսիային, տիրակալի գլխին շատ ամպեր կկուտակվեն: Իսպանիայում, Ֆրանսիայում, Հունաստանում, որտեղ մանր տիրակալներ շատ կային, մերթ ընդ մերթ հռոմեացիների դեմ ապստամբություններ էին բռնկվում : Եվ քանի դեռ թարմ էր հիշողությունը նախկին կարգերի մասին, Հռոմի իշխանությունը դեռևս խախուտ էր: Բայց այդ հիշողության խամրելուն զուգընթաց հռոմեացիներն իրենց հզորության ու երկարատև տիրապետության շնորհիվ այդ երկրներում ավելի ու ավելի էին ամրապնդում իրենց իշխանությունը: Այնպես որ, ավելի ուշ, երբ

*հռոմեացիները կռվում էին միմյանց դեմ, կողմերից յուրաքանչյուրը պայքարի մեջ էր ներգրավում այն նահանգները, որտեղ ավելի ամուր արմատներ ուներ: Եվ տեղացիները, որոնց բնիկ տերերը բնաջնջվել էին, հռոմեացիներից բացի այլ իշխողներ չէին ճանաչում: Եթե այս ամենը նկատի առնենք, ապա կհասկանանք, թե ինչպես էր Ալեքսանդրն այդքան հեշտությամբ իր ձեռքում պահում ասիական տերությունը, մինչդեռ Պյուռոսից և ուրիշ շատերից հսկայական ջանքեր էին պահանջվում իրենց նվաճած երկրները պահելու համար: Պատճառն այստեղ ոչ թե հաղթողի ավելի կամ պակաս քաջությունն է, այլ նվաճված պետությունների կառուցվածքի առանձնահատկությունը.*

## ԳԼՈՒԽ V

## Ինչպես կառավարել այն քաղաքներն ու պետությունները, որոնք մինչև նվաճվելը ապրել են սեփական օրենքներով

*Եթե, ինչպես ասված է, նվաճված պետությունն անհիշելի ժամանակներից ապրում է ազատ և իր օրենքներով, ապա այն պահելու երեք միջոց կա: Առաջին՝ կործանել, երկրորդ՝*

բնակության համար տեղափոխվել այնտեղ, երրորդ՝ քաղաքացիներին իրավունք տալ ապրել իրենց օրենքներով, ընդսմին նրանց վրա տուրքեր դնել և կառավարումը հանձնել սակավաթիվ մարդկանց, որոնք կերաշխավորեին քաղաքի բարեկամական վերաբերմունքը տիրակալի նկատմամբ· Այդ վստահյալ անձինք ամեն կերպ օգնելու են տիրակալին՝ գիտակցելով, որ իշխանությունը նրանից են ստացել և ուժեղ են լոկ նրա բարեկամությամբ ու հզորությամբ: Ընդորում, եթե ազատ ապրելու սովոր քաղաքը կործանել չես ուզում, ապա գերադասելի է այն պահել տվյալ բնակավայրի քաղաքացիների միջոցով:

Դիմենք Սպարտայի ու Հռոմի օրենակին: Սպարտացիներն իրենց ձեռքում էին պահում Աթենքն ու Թեբեն՝ այնտեղ ստեղծելով խմբիշխանություն, սակայն հետագայում երկու քաղաքն էլ կորցրին: Հռոմեացիները Կապուան, Կարթագենն ու Նումանցիան պահելու համար դրանք ավերեցին ու պահեցին իրենց իշխանության ներքո: Հունաստանը նրանք փորձեցին պահել սպարտացիների նման, այսինքն այնտեղ խմբիշխանություն հաստատելով և չխլեցին

ազատությունն ու սեփական օրենքներով ապրելու իրավունքը, այնուամենայնիվ, անհաջողություն կրեցին, և, որպեսզի ամբողջ Հունաստանը չկորցնեն, հարկադրված եղան այնտեղ շատ քաղաքներ կործանել:

Քանզի իրականում չկա քաղաքին տիրելու ավելի հուսալի միջոց, քան կործանելը: Եթե մեկը զավթի վաղնջական ժամանակներից ազատության համը տեսած քաղաքն ու խնայի այն, քաղաքը նրան չի խնայի: Այնտեղ միշտ մի առիթ կգտնվի խռովություն բարձրացնելու համար՝ հանուն ազատության ու հին կարգերի, որոնք մոռանալ չեն ստիպի ոչ ժամանակը, ոչ էլ նոր իշխանության բարի գործերը. Ինչ էլ անես, ինչքան էլ որ ջանաս, եթե չտարանջատես ու ցաքուցրիվ չանես քաղաքի բնակիչներին, նրանք երբեք չեն մոռանա ոչ երբեմնի ազատությունը, ոչ էլ նախկին կարգերը, և առաջին իսկ հարմար պահն ընտրելով կփորձեն դրանք վերականգնել, ինչպես արեց Պիզան Ֆլորենցիացիների տիրապետության տակ ընկնելուց հարյուր տարի հետո.

Բայց, եթե քաղաքը կամ երկիրը սովոր են ապրել տիրակալի իշխանության ներքո, իսկ

նրա տոհմը բնաջնջված է, ապա քաղաքի բնակիչներին դժվար է զենքի կոչել, քանզի, մի կողմից ենթարկվելու սովոր լինելով, մյուս կողմից՝ կորցրած լինելով հին տիրակալին, նրանք չեն կարող համաձայնության գալ նորի ընտրության հարցում, ոչ էլ կարող են ազատ ապրել. Այնպես որ, նվաճողը բավականաչափ ժամանակ կունենա շահելու նրանց համակրանքն ու դրանով ապահովելու իր անվտանգությունը: Մինչդեռ, հանրապետություններն ավելի լեցուն են կյանքով, խոր ատելությամբ, վրեժի առավել մեծ պաշարով. Այնտեղ երբեք չի մեռնում և հավերժ կենդանի է երբեմնի ազատության հիշողությունը: Ուստի, դրանք իշխանության ներքո պահելու ամենահուսալի միջոցը կործանելն է, կամ էլ այնտեղ բնակություն հաստատելը.

## ԳԼՈՒԽ VI

## Նոր պետությունների մասին, որոնք ձեռք են բերվում սեփական զենքով կամ քաջությամբ

Զարմանալի ոչինչ չկա, որ, խոսելով իշխանության նվաճման, տիրակալի և պետության

մասին, ես պիտի վկայակոչեմ մեծագույն այրերի օրինակները. Մարդիկ, սովորաբար, գնում են ուրիշների հարթած ուղիներով և գործում՝ աչքի առաջ ունենալով որևէ մեկի օրինակը, բայց քանի որ հնարավոր չէ ոչ անշեղորեն ընթանալ այդ ուղիներով, ոչ էլ քաջությամբ մրցել նրանց հետ, ում ուզում ենք ընդօրինակել, ապա խելացի մարդը պետք է ընտրի մեծագույն մարդկանց բացած ուղիներն ու ընդօրինակի արժանավորագույններին, որպեսզի, եթե քաջության առումով չհամեմատվի էլ նրանց հետ, ապա գոնե տոգորվի նրանց ոգով: Պետք է սովորել փորձառու նետաձիգներից. նրանք տեսնելով, որ թիրախը չափից ավելի հեռու է դրված, ավելի բարձր են նշան բռնում ոչ թե, որ նետը վեր սլանա, այլ ծանոթ լինելով աղեղի ուժին, նշանն ավելի բարձր բռնելով հասնեն հեռու նպատակակետին.

Այսպիսով, նոր պետություններում իշխանությունը պահելը հեշտ կամ դժվար է լինում՝ կախված նոր տիրակալի քաջության աստիճանից: Կարող է թվալ, որ եթե սովորական մարդուն իշխանություն են պարգևում քաջությունը կամ բարեհաճ ճակատագիրը, ապա հենց

դրանք էլ հետագայում հավասարապես կօգնեն հաղթահարել բազում արգելքներ: Մինչդեռ, իրականում նա, ով ավելի քիչ է հույսը դնում ճակատագրի բարեհաճության վրա, նա ավելի երկար ժամանակ է մնում իշխանության ղեկի մոտ: Գործն ավելի է հեշտանում նաև նրանով, որ նոր տիրակալը, այլ տիրույթներ չունենալով, հարկադրված է բնակություն հաստատել նվաճած երկրում:

Այն այրերից, ովքեր իշխանություն ձեռք են բերել ոչ թե ճակատագրի բարեհաճությամբ, այլ անձնական քաջությամբ, որպես ամենաարժանավորներ ես կանվանեմ Մովսեսին, Կյուրոսին, Թեսևսին ու նրանց նմաններին: Ու թեև Մովսեսի մասին խոսելու անհրաժեշտություն չկա, քանզի նա սոսկ Բարձրյալի կամակատարն էր, այնուամենայնիվ, պետք է խոնարհվել այն շնորհքի առջև, որը նրան արժանացրեց աստծո հետ հաղորդակցվելու պատվին: Սակայն, անդրադառնանք Կյուրոսին և կայսրություններ նվաճողներին ու հիմնադիրներին: Անհնար է չհիանալ այդ մարդկանց մեծագործությամբ, և, մեր խորին համոզմամբ, նրանց գործերն ու օրենքները չեն զիջում Մովսեսին վերուստ

պատգամված գործերին: Խորհելով սույն այրերի կյանքի ու սխրանքների մասին, համոզվում ենք, որ ճակատագիրը նրանց լոկ դիպված է առաքել, այսինքն տվել է մի նյութեղեն բան, որին կարելի էր տալ ցանկացած ձև: Զլիներ այդ դիպվածը, նրանց քաջությունը կմարեր առանց կիրառման: Եթե նրանք չունենային քաջություն, ապա դիպվածը կդառնար անիմաստ:

Մովսեսը Իսրայելի ժողովրդին չէր համոզի գերությունից ազատագրվելու համար հետևել իրեն, եթե հրեաներին չգտներ Եգիպտոսում՝ եգիպտացիներից ստրկացված ու կեղեքված վիճակում: Հռոմուլոսը չէր դառնա Հռոմի թագավոր ու պետության հիմնադիր, եթե ծնված օրից չմատնվեր ճակատագրի քմահաճույքին, ու եթե Ալբան նրա համար խիստ նեղ չդառնար: Կյուրոսը չէր հասնի նման մեծության, եթե այդ ժամանակ պարսիկները չարացած չլինեին միդացիների տիրապետությունից, իսկ միդացիները՝ երկարատև խաղաղության հետևանքով, թուլացած ու զգոնությունը կորցրած չլինեին: Թեսևսը չէր կարող դրսևորել իր քաջությունը, եթե աթենացիները անմիաբան չլինեին: Եվ

այսպես, այս մարդկանցից յուրաքանչյուրին մի-մի բարեբախտ դիպված է բաժին ընկել, բայց միայն արտակարգ քաջությունն է նրանց թույլ տվել օգտվել դիպվածից, ինչի շնորհիվ նրանց հայրենիքները փառաբանվել են ու ձեռք բերել բարօրություն·

Ով այդ մարդկանց նման գնում է քաջագործության ճանապարհով, նրա համար դժվար է իշխանություն նվաճելը, բայց պահելը հեշտ է: Դժվարությունն ամենից առաջ այն է, որ նրանք ստիպված են լինում մտցնել նոր օրենքներ ու կարգեր, առանց որոնց չի կարելի ստեղծել պետություն ու ապահովել սեփական անվտանգությունը. Մինչդեռ, պետք է գիտենալ, որ չկան այնպիսի գործեր, որոնց կազմակերպումն ավելի դժվար, վարումն ավելի վտանգավոր, իսկ հաջողությունն ավելի կասկածելի լինի, քան հին կարգերը նորերով փոխարինելը: Ով էլ որ հանդես գա նմանօրինակ նախաձեռնությամբ, նրան սպասում է այն մարդկանց թշնամությունը, ում ձեռնտու էին հին կարգերը, և նրանց սառը վերաբերմունքը, ում ձեռնտու են նորերը: Իսկ այդ սառնությունը մասամբ բացատրվում է այն հակառակորդի նկատմամբ ու-

նեցած երկյուղով, որի կողմն են օրենքները, մասամբ էլ՝ մարդկանց անվստահությամբ, ովքեր իրականում չեն հավատում նորին, քանի դեռ այն չի ամրապնդվել երկարատև փորձով։ Երբ հնի կողմնակիցները գործելու հնարավորություն են տեսնում, նրանք հարձակվում են կատաղաբար, մինչդեռ նորի կողմնակիցները պաշտպանվում են ծուլորեն ահա թե ինչու նրանց վրա հենվելով, քեզ վտանգի ես ենթարկում:

Ասվածը հիմնավորապես ըմբռնելու համար, պետք է սկսել նրանից, թե անկա՞խ են արդյոք այդ վերափոխիչները, թե՞ նրանք կողմնակի օգնության կարիք ունեն, այլ կերպ ասած՝ իրենց գործի հաջողության համար նրանք պիտի համաձայնությո՞ւն խնդրեն, թե՞ կարող են ուժ գործադրել: Առաջին դեպքում նրանք դատապարտված են, իսկ երկրորդ, այսինքն ուժ գործադրելու դեպքում՝ հազվադեպ են անհաջողություն կրում: Ահա թե ինչու բոլոր զինված մարգարեները հաղթել են, իսկ անզենները՝ զոհ դարձել. Քանզի, ի հավելումն ասվածի, պետք է նկատի ունենալ, որ մարդկանց բնույթն անկայուն է, ու, եթե նրանց քո հավա-

տին դարձնելը դյուրին է, ապա նրանց մեջ այդ հավատը պահպանելը դժվար է Ուստի, պետք է պատրաստ լինես, որ, երբ ժողովրդի հավատը սպառվի, նրան ուժով ստիպես հավատալու: Եթե Մովսեսը, Կյուրոսը, Հռոմուլոսն ու Թեսևսը, լինեին անզեն, չէին կարողանա երկար պահել իրենց ձեռամբ ստեղծած օրենքները: Մեր օրերում նույն բանը պատահեց եղբայր Ջիրոլամո Սավոնարոլայի հետ· Նրա մտցրած կարգերը փուլ եկան՝ հենց որ ամբոխը դադարեց հավատալ, իսկ նա միջոցներ չուներ ամրապնդելու իր հետևորդների հավատը, և դարձի բերելու հավատակորույս մարդկանց:

Այն մարդկանց ճանապարհին, ովքեր նման են թվարկածս անձանց, ծառանում են բազում դժվարություններ ու բազում վտանգներ, որոնք հաղթահարելու համար մեծ քաջություն է պահանջվում: Բայց, եթե նպատակը ձեռք է բերված, եթե տիրակալն արժանացել է հպատակների գնահատությանն ու վերացրել նախանձողներին, ապա կարելի է ասել, որ նա իր համար երկար ժամանակ ապահովել է հզորություն, հանգիստ, հարգանք ու երջանկություն:

Այսքան բարձրաշխարհիկ օրինակների շար-

*քում կկամենայի տեղ տալ ավելի համեստ, սակայն համադրելի, և կարծում եմ, բավականաչափ հիմնավորված մի օրինակի: Խոսքս վերաբերում է Հիերոն Սիրակուզացուն, ով սովորական մարդուց դարձավ Սիրակուզայի թագավոր, թեպետ ճակատագիրը նրան մի բարեբախտ դիպվածից բացի ուրիշ ոչինչ չէր նվիրել: Սիրակուզայի հարստահարվող բնակիչները նրան ընտրեցին իրենց զորապետ, իսկ նա իր արժանիքների շնորհիվ դարձավ նրանց թագավորը: Դեռ մինչև բարձր դիրքի հասնելը, նա աչքի էր ընկնում այնպիսի քաջությամբ, որ հին մատենագրի խոսքերով* «nihil illi deerat ad regnandum praeter regnum»[1]: *Նա ցրեց հին աշխարհազորն ու հավաքեց նորը, խզեց հին դաշինքներն ու կնքեց նորերը: Իսկ այնպիսի հիմքի վրա, որպիսին սեփական զորքերն ու սեփական դաշնակիցներն են, նա կարող էր ցանկացած շենք կառուցել: Այնպես որ, իշխանությունը նվաճելիս նրանից պահանջվեցին ավելի մեծ ջանքեր, քան պահպանելիս:*

---

*1 Թագավորելու համար նրան պակասում էր լոկ թագավորությունը (լատ.)*

## ԳԼՈՒԽ VII
## Նոր պետությունների մասին, որոնք ձեռք են բերվում ուրիշի զենքով կամ ճակատագրի բարեհաճությամբ

*Ովքեր թագավոր են դառնում ճակատագրի բարեհաճությամբ և ոչ թե քաջության շնորհիվ, իշխանության հասնելը դյուրին է, բայց այն պահելը՝ դժվար· Հեշտությամբ անցնելով դեպի նպատակն ընկած ամբողջ ճանապարհը, նրանք հետագայում բախվում են բազմաթիվ դժվարությունների.*

*Ես խոսում եմ այն քաղաքացիների մասին, ում իշխանությունը բաժին է ընկել փողի միջոցով կամ շնորհվել է ի նշան բարեհաճության: Դա հաճախ էր պատահում Հունաստանում, Հոնիա և Հելլեսպոնտոս քաղաքներում, որտեղ Դարեհը կառավարիչ էր նշանակում ի պետս յուր փառքի ու անվտանգության: Այդպես հաճախ է պատահել նաև Հռոմում, որտեղ պատահական մարդիկ կայսր էին հռչակվում գինվորներին կաշառելով:*

*Նման դեպքերում տիրակալներն ամբողջովին կախված են նրանց կամքից ու բարեհաճու-*

թյունից, ում պարտական են իրենց իշխանությամբ, այսինքն՝ երկու ծայրաստիճան անկայուն և քմահաճ ուժերից: Նրանք իշխանությունն իրենց ձեռքում պահել ի վիճակի չեն և չեն էլ կարող. Ի վիճակի չեն, քանզի որտե՞ղ պիտի իշխել սովորեր ակներև շնորհքից ու քաջությունից զուրկ մարդը, որն ամբողջ կյանքում համեստ պաշտոններ է վարել: Չեն կարող նաև այն պատճառով, որ չունեն դաշնակից և հուսալի հենարան: Զգիտես որտեղից որտեղ լույս ընկած այդ տիրակալները, ինչպես բնության մեջ ամեն ինչ, որ ծլում ու շատ արագ է աճում, չեն հասցնում արմատներ ձգել ու ճյուղավորվել, այդ իսկ պատճառով էլ ոչնչանում են եղանակի առաջին հարվածից. Միայն ճշմարիտ քաջը կարող է, անսպասելիորեն բարձր դիրքի արժանանալով, ձեռքից բաց չթողնել ճակատագրի պարգևը, այսինքն տիրակալ դառնալով ստեղծել այն հիմքերը, որոնք ուրիշները ստեղծում են մինչև իշխանության հասնելը.

Քաջության շնորհիվ և բախտի քմահաճույքով բարձր դիրքի հասնելու հնարավորությունները ցույց կտամ Ֆրանչեսկո Սֆորցայի ու Չեզարե Բորջայի՝ մեզ համար հավասարա-

պես անմոռանալի օրինակներով. Ֆրանչեսկոն Միլանի դուքս դարձավ պատշաճ ձևով՝ ցուցաբերելով մեծ քաջություն և առանց դժվարության իր ձեռքում պահեց մեծ ջանքերի գնով իրեն բաժին ընկած իշխանությունը: Չեզարե Բորջան, որին հասարակ ժողովուրդն անվանում էր դուքս Վալենտինո, իշխանություն ձեռք բերեց ճակատագրի շնորհիվ, որն այդքան բարձր դիրք էր պարգևել նրա հորը: Բայց հորից զրկվելով, նա զրկվեց նաև իշխանությունից, թեև որպես խելացի ու քաջ մարդ, գործադրեց բոլոր հնարավոր ջանքերն ու բոլոր ճիգերը, որպեսզի խոր արմատներ ձգի այն պետություններում, որոնք նրա համար նվաճվել էին ուրիշի զենքով և ուրիշի ճակատագրով: Քանի որ, ինչպես արդեն ասել եմ, եթե հիմքերը նախօրոք չեն գցվում, ապա մեծ քաջության առկայության դեպքում, դա կարելի է հետո էլ անել, թեկուզև շինարար վարպետի մեծ ջանքերի ու ամբողջ կառույցի համար վտանգավորության գնով:

Քննության առնելով դքսի գործելակերպը, դժվար չէ համոզվել, որ նա ամուր հիմք էր գցել ապագա հզորության համար, և, կարծում եմ,

ավելորդ չի լինի այդ մասին խոսել, քանզի ավելի լավ խորհուրդ չեմ տեսնում նոր տիրակալի համար: Ու եթե, այնուամենայնիվ, դքսի կառավարման շնորհքը նրան անկումից չփրկեց, ապա մեղավորը ոչ թե նա էր, այլ դժխեմ ճակատագիրը:

Ալեքսանդր VI-ը ցանկանում էր իշխանությամբ օժտել դքսին՝ իր որդուն, բայց դրա համար շատ խոչընդոտներ էր տեսնում և՛ ներկայում, և՛ ապագայում: Ամենից առաջ, նա գիտեր, որ տնօրինում է միայն այն տիրույթները, որոնք գտնվում են եկեղեցու իշխանության ներքո, բայց դրանցից մեկնումեկը դքսին տալու ցանկացած փորձի դեմ կընդդիմանային ինչպես Միլանի դուքսը, այնպես էլ վենետիկցիները, որոնք արդեն իրենց հովանավորության տակ էին առել Ֆաենցան ու Ռիմինին: Բացի այդ, զորքերն Իտալիայում, հատկապես նրանք, որոնց օգնությանը կարելի էր դիմել, կենտրոնացել էին Օրսինիի, Կոլոննայի ու նրանց մանկլավիկների՝ այսինքն, այնպիսի մարդկանց ձեռքում, ովքեր զգուշանում էին պապի հզորացումից: Այսպիսով, ամենից առաջ պետք էր կազմալուծել գոյություն ունեցող

կարգն ու խռովություն սերմանել պետությունների միջև՝ դրանցից մի քանիսին անարգել տիրելու համար: Պարզվեց, որ դա հեշտ է անել շնորհիվ այն բանի, որ վենետիկցիներն իրենց շահերից ելնելով Իտալիա են հրավիրել ֆրանսիացիներին, ինչին պապը ոչ միայն չխանգարեց, այլև աջակցեց՝ ամուսնալուծելով Լյուդովիկոս թագավորին:

Եվ այսպես, թագավորն Իտալիա մտավ վենետիկցիների օգնությամբ ու Ալեքսանդրի համաձայնությամբ և Միլան հասնելուն պես պապին մի ջոկատ ուղարկեց Ռոմանիան նվաճելու, ինչը վերջինիս հաջողվեց լոկ թագավորի աջակցության շնորհիվ: Այսպիսով, Ռոմանիան հայտնվեց դքսի իշխանության ներքո, իսկ Կոլոննայի զորախումբը պարտություն կրեց, բայց դուքսն այդժամ չէր կարող առաջ գնալ, քանի որ գոյություն ուներ դեռ երկու խոչընդոտ. առաջինը անհուսալի թվացող զորքն էր, երկրորդը՝ Ֆրանսիայի մտադրությունները: Այլ կերպ ասած, նա վախենում էր, որ Օրսինիի զորքը, որին նա ծառայության էր վերցրել, կգրկի հենարանից, այսինքն՝ կամ կլքի, կամ, որ ավելի վատ է՝ կխլի նվաճվածը, և, որ ճիշտ այդպես

կվարվի նաև թագավորը: Օրսինիի զինվորներին նա սկսեց կասկածել այն բանից հետո, երբ գրավելով Ֆաենցան, նրանց շարժեց դեպի Բոլոնիա ու նկատեց, որ նրանք փութաջանություն հանդես չեն բերում: Ինչ վերաբերում է թագավորին, ապա դուքսը հասկացավ նրա մտադրությունները այն ժամանակ, երբ Ուրբինոն գրավելուց հետո շարժվեց դեպի Տոսկանա, և թագավորը նրան հրամայեց նահանջել: Ուստի, դուքսը վճռեց այլևս հույս չդնել ոչ ուրիշի զենքի, ոչ էլ որևէ մեկի հովանավորության վրա:

Նրա առաջին գործը եղավ Հռոմում թուլացնել Օրսինիի և Կոլոննայի զորախմբերը: Նրանց կողմնակից բոլոր նոբիլներին իր կողմը գրավելով, ծառայության կարգեց՝ նշանակելով բարձր ռոճիկ և ըստ արժանիքների՝ տեղեր բաշխելով զորքերում ու կառավարման ոլորտում, այնպես որ, մի քանի ամսում նրանք ձեռք քաշեցին իրենց զորախմբերից՝ դառնալով դքսի կողմնակիցներ: Այնուհետև, նա Կոլոննայի հետ հաշիվները մաքրելով, սպասեց պատեհ ժամի՝ հաշվեհարդար տեսնելու Օրսինիի զորախմբի պարագլուխների հետ. Եվ երբ, բարեպատեհ առի-

թը ներկայացավ, նա դրանից հմտորեն օգտվեց: Օրսինականները, հասկանալով, որ եկեղեցու հզորացմամբ իրենց կործանում է սպառնում, խորհուրդ գումարեցին Պերուջայի մոտ գտնվող Մաջոնա տեղավայրում: Այդ խորհուրդը դքսի համար ունեցավ բազմաթիվ աղետալի հետևանքներ. նախ՝ Ուրբինոյում սկսվեց խռովություն և ապա՝ հուզումներ առաջացան Ռոմանիայում, որոնց նա վերջ դրեց ֆրանսիացիների օգնությամբ:

Վերականգնելով նախկին ազդեցությունը, դուքսը որոշեց իրեն այլևս վտանգի չենթարկելու համար չվստահել ոչ Ֆրանսիային, ոչ էլ որևէ այլ արտաքին ուժի, և դիմեց խաբեության՝ մոլորեցնելով օրսինականներին, որոնք նրա հետ հաշտվեցին սենիոր Պաոլոյի միջնորդության շնորհիվ, որին դուքսն ընդունեց հարգալիրության բազմապիսի դրսևորումներով և ընծայեց հագուստներ, ձիեր ու փող: Իսկ հետո, Սինիգալիայում օրսինականները դյուրահավատություն դրսևորելով, անձնատուր եղան: Այսպես հաշվեհարդար տեսնելով զորախմբերի պարագլուխների հետ և իր կողմը գրավելով նրանց կողմնակիցներին, դուքսն իր հզորու-

թյան համար դրեց հույժ ամուր հիմքեր: Նրա իշխանության տակ էր գտնվում ամբողջ Ռոմանիան՝ Ուրբինոյի դքսությամբ հանդերձ և, որ առանձնապես կարևոր է՝ նա վստահ էր, որ շահել է իր կառավարման օգտավետությունը գնահատող ժողովրդի համակրանքը:

Դքսի գործունեության այդ մասն արժանի է ուշադրության և ընդօրինակման, ուստի ես կուզենայի հատուկ կանգ առնել դրա վրա: Մինչև նվաճվելը, Ռոմանիան գտնվում էր աննշան իշխողների տիրապետության ներքո, որոնք հոգում էին ոչ այնքան իրենց հպատակների մասին, որքան թալանելու, նրանց մեջ համերաշխության փոխարեն սերմանելով անմիաբանություն: Այնպես որ, ամբողջ երկրամասն ուժասպառ էր եղել կողոպուտներից, թշնամանքից ու անօրինությունից: Նվաճելով Ռոմանիան, դուքսը որոշեց գերագույն իշխանությունը հանձնել մի հուսալի անձնավորության, երկրամասը խաղաղեցնելու և հպատակեցնելու համար և այդ նպատակի համար ընտրեց մեսսեր Ռամիրո դե Օրկոյին՝ մի խստաբարո ու վճռական մարդու, որին օժտեց աննահմանափակ լիազորություններով: Վերջինս կարճ ժամանա-

կամիջոցում խաղաղեցրեց Ռոմանիան, վերջ դրեց գժտություններին ու սարսափ տարածեց ամբողջ երկրամասում: Այդժամ դուքսը որոշեց, որ իշխանության չափից ավելի կենտրոնացումն արդեն պետք չէ, քանզի կարող է զայրացնել հպատակներին և պատվարժան մարդու նախագահությամբ հիմնադրեց գործող քաղաքացիական դատարան, որտեղ յուրաքանչյուր քաղաք ներկայացված էր դատապաշտպանով: Բայց հասկանալով, որ նախկին խստությունները, այնուամենայնիվ, իր դեմ են տրամադրել ժողովրդին, նա որոշեց վերականգնել իր վարկն ու շահել հպատակների համակրանքը, նրանց ցույց տալով, որ եթե դաժանություններ, այնուամենայնիվ, եղել են, ապա դրանց մեղավորը ոչ թե ինքն է, այլ իր անգութ տեղապահը: Եվ ահա մի օր առավոտյան Զեզենայի հրապարակում նրա հրամանով դրեցին մեսսեր Ռամիրո դե Օրկոյի երկու կես արված մարմինը՝ արյունոտ թրի ու կոճղի կողքին: Այդ վայրագ տեսարանը միաժամանակ և՛ գոհացրեց և՛ ապշեցրեց ժողովրդին.

Բայց վերադառնանք նրան, ինչից շեղվեցինք: Այսպիսով, դուքսն ունեցավ իր զինվոր-

ներն ու ջախջախեց իր հարևան զորքերի մի մասը, որ իր համար սպառնալիք էր: Դրանով հաստատեց իր հզորությունն ու մասամբ ապահովեց իր անվտանգությունը: Հիմա նրա ճանապարհին կանգած էր միայն Ֆրանսիայի թագավորը, որն ուշացումով նկատելով իր սխալը, արդեն նոր նվաճումներ չէր հանդուրժի: Ուստի, դուքսն սկսեց նոր դաշնակիցներ փնտրել և իրեն խուսափողաբար դրսևորել Ֆրանսիայի նկատմամբ հենց այն ժամանակ, երբ ֆրանսիացիներն արշավանք սկսեցին Նեապոլի ուղղությամբ՝ Գաետան պաշարած իսպանացիների դեմ: Նա մտքին դրել էր կապազերծ լինել Ֆրանսիայից, և դա նրան կհաջողվեր, եթե Ալեքսանդր պապն ավելի երկար ապրեր:

Այսպիսին էին դքսի գործողությունները ներկայում: Իսկ ինչ վերաբերում էր ապագային, ապա նրա գլխավոր մտահոգությունն այն էր, թե ով է լինելու Ալեքսանդրի հնարավոր փոխարինողը, որը կարող էր ոչ միայն իրեն բարեկամաբար չպահել, այլև խլել այն ամենն, ինչ դքսին տվել էր Ալեքսանդրը: Դրանից խուսափելու համար նա մտածեց նախազգուշության չորս միջոց. առաջին՝ ընտանիքների հետ միա-

սին ոչնչացնել իր սնանկացրած իշխողներին, որպեսզի նոր պապին առիթ չտա հանդես գալու նրանց պաշտպանությամբ, երկրորդ՝ իր կողմը գրավել հռոմեացի նոբիլներին, որպեսզի նրանց աջակցությամբ զսպի Ալեքսանդրի ապագա հաջորդին, երրորդ՝ կարդինալների կոլեգիայում հնարավորին չափ ավելի շատ հավատարիմ մարդիկ ունենալ, չորրորդ՝ մինչև Ալեքսանդր պապի մահը իր տիրույթներն այնքան ընդարձակել, որ կարողանա ինքնուրույնաբար դիմակայել առաջին իսկ արտաքին հարվածին: Երբ Ալեքսանդրը մահացավ, դուքսն արդեն կատարել էր իր ծրագրի մասերից երեքը, իսկ չորրորդը մոտ էր ավարտին: Իր սնանկացրած իշխողներից նա սպանեց բոլոր նրանց, ովքեր նրա ձեռքն ընկան, լոկ քչերին հաջողվեց փրկվել, հռոմեացի նոբիլներին հակեց իր կողմը, կոլեգիայում իր համար ապահովեց կարդինալների մեծ մասի համակրանքը: Ինչ վերաբերում է տիրույթների ընդարձակմանը, ապա մտադրվելով դառնալ Տոսկանայի տիրակալ, նա հասցրեց նվաճել Պերուջան ու Պիոմբինոն և իր հովանավորության տակ առնել Պիզան: Արդեն այդ ժամանակ նա կարող էր էլ չվախենալ Ֆրանսիա-

յից: Իսկ այն բանից հետո, երբ իսպանացիները ֆրանսիացիներին վերջնականապես դուրս մղեցին Նեապոլի թագավորությունից, և՛ մեկը, և՛ մյուսը ստիպված եղան փնտրել դքսի բարեկամությունը, այնպես որ՝ ևս մի քայլ, և նա կնվաճեր Պիզան: Որից հետո անմիջապես կհանձնվեին Սիենան և Լուկան, մասամբ՝ վախից, մասամբ՝ ի հեճուկս ֆլորենցիացիների. իսկ իրենք՝ ֆլորենցիացիները, կընկնեին անելանելի վիճակի մեջ: Եվ այդ ամենը կարող էր կատարվել դեռևս մինչև այն տարվա վերջը, երբ մահացավ Ալեքսանդր պապը, ու եթե կատարվեր, ապա դուքսն այնպիսի հզորություն և ազդեցություն ձեռք կբերեր, որ ոչ մեկի հովանավորության կարիքն էլ չէր զգա և կախում չէր ունենա ուրիշի զենքից կամ ուրիշի բարեհաճությունից՝ լիովին ապավինելով սեփական քաջությանն ու ուժին: Սակայն, դուքսն առաջին անգամ սուրը մերկացրել էր հոր մահից ընդամենը հինգ տարի առաջ: Եվ հասցրեց իշխանությունն ամրապնդել լոկ մեկ պետությունում՝ Ռոմանիայում, մնալով մյուսներին տիրելու կես ճանապարհին, երկու ահեղ թշնամական բանակների արանքում ու մահացու հիվանդ:

Բայց այնպիսի անզուսպ քաջությամբ ու խիզախությամբ էր դուքսն օժտված, այնքան հմուտ էր մարդկանց իր կողմը գրավելու և վերացնելու գործում, այնքան ամուր էին կարճ ժամանակամիջոցում նրա ստեղծած իշխանության հիմքերը, որ նա կարող էր հաղթահարել ցանկացած դժվարություն, եթե նրան երկու կողմից չսեղմեին թշնամական բանակները կամ չնեղեր հիվանդությունը: Որ նրա իշխանությունը խարսխված էր ամուր հիմքի վրա, դրանում մենք համոզվեցինք. Ռոմանիան ավելի քան մեկ ամիս պատսպարեց նրան, Հռոմում, գտնվելով մահամերձ վիճակում, նա, այնուամենայնիվ, անվտանգության մեջ էր: Բալյոնին, Օրսինին և Վիտելին այնտեղ հայտնվելով, այդպես էլ կողմնակիցներ չգտան: Նրան հաջողվեց պապ ընտրել տալ եթե ոչ նրան, ում նա ուզում էր, ապա գոնե ո՛չ նրան, ում չէր ուզում. Եթե դուքսը մահամերձ չլիներ. այն ժամանակ, երբ մահացավ Ալեքսանդր պապը, նա հեշտությամբ կհաղթահարեր բոլոր խոչընդոտները: Հուլիոս II պապի ընտրության օրերին նա ինձ ասաց, որ ամեն ինչ նախատեսել էր ի դեպս հոր մահվան, գտել էր բոլոր իրադրություններից դուրս գա-

լու ելքը, սակայն մի բան չէր կանխատեսել՝ այն, որ այդ ժամանակ ինքն էլ դամված կլինի անկողնուն

Քննելով դքսի գործողությունները, ես չեմ գտնում մի բան, ինչի համար նրան կարելի էր հանդիմանել, ավելին, իմ կարծիքով, նա կարող է օրինակ ծառայել բոլոր նրանց համար, ովքեր իշխանություն են ստանում ճակատագրի բարեհաճությամբ կամ ուրիշի զենքով: Քանզի, ունենալով մեծ ծրագիր ու վեհ նպատակ, նա չէր կարող այլ կերպ գործել Միայն Ալեքսանդրի անժամանակ մահն ու իր հիվանդությունը նրան խանգարեցին իրագործել մտահղացումները Այսպիսով, նրանք, ում նոր պետությունում անհրաժեշտ է թշնամիներից պաշտպանվել բարեկամներ ձեռք բերել, հաղթել ուժով կամ խորամանկությամբ, ժողովրդին՝ երկյուղ ու սեր, իսկ զինվորներին՝ հնազանդություն ու հարգանք ներշնչել, ունենալ նվիրված ու հուսալի զորք, վերացնել այն մարդկանց, ովքեր կարող են վնասել կամ պետք է վնասեն, բարեփոխել հին կարգերը, ձերբազատվել անհուսալի զորքից ու ստեղծել սեփականը, հանդես բերել դաժանություն ու գթասրտություն, մեծա-

հոգություն ու շռայլություն և, վերջապես, իշխողների ու արքաների հետ այնպես բարեկամություն անել, որ նրանք կամ քաղաքավարությամբ ծառայություններ մատուցեն, կամ խուսափեն հարձակումներից,-բոլոր այդ մարդիկ ավելի վառ օրինակ չեն գտնի, քան դքսի գործերը:

Նրան կարելի է միայն մի բանում մեղադրել՝ Հուլիոսին եկեղեցու ղեկավար ընտրելու հարցում: Այստեղ նրա հաշվարկները սխալ դուրս եկան, որովհետև, եթե նա չկարողացավ անցկացնել իր ցանկալի մարդուն, ապա կարողացավ, ինչպես արդեն ասվել է, բացարկել անցանկալիին: Իսկ եթե այդպես է, ապա ոչ մի դեպքում պետք չէր պապական իշխանությանը մոտ թողնել այն արքեպիսկոպոսներին, ովքեր նրանից նախկինում կամ վիրավորված էին, կամ էլ, ընտրվելու դեպքում, կարող էին նրանից ապագայում վախենալ: Քանզի մարդիկ վրեժ են լուծում կամ վախից կամ ատելությունից դրդված: Նրանից վիրավորվածների թվում էին Սան Պյետրո ին Վինկուլան, Կոլոննան, Սան Ջորջոն, Ասկանիոն, իսկ մյուսները գահ բարձրանալով կուներային նրանից վախենալու

պատճառներ Բացառություն էին կազմում իսպանացիներն ու Ռուանի արքեպիսկոպոսը, առաջինները՝ ազգակցական կապերի ու պարտավորությունների, իսկ երկրորդը՝ իր թիկունքին կանգնած ֆրանսիական թագավորության հզորության պատճառով· Ուստի, նախ անհրաժեշտ էր հոգ տանել, որ ընտրվի իսպանացիներից որևէ մեկը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Ռուանի արքեպիսկոպոսը, և ոչ մի դեպքում՝ Սան Պյետրո ին Վինկուլան· Մոլորության մեջ է նա, ով կարծում է, թե նոր լավությունները կարող են այս աշխարհի հզորներին ստիպել մոռանալ հին վիրավորանքները Այնպես որ, դուքսը սխալ թույլ տվեց, ինչն էլ ի վերջո նրան կործանեց·

## ԳԼՈՒԽ VIII
## Նրանց մասին, ովքեր իշխանության են հասնում ոճրագործությամբ

Կա տիրակալ դառնալու ևս երկու միջոց, որոնք կապ չունեն ոչ ճակատագրի բարեհաճության, ոչ էլ քաջության հետ: Դրանց մասին լռելը, կարծում եմ, ճիշտ չի լինի, թեև դրանցից

մեկին տեղին կլիներ անդրադառնալ այնտեղ, որտեղ խոսվելու է հանրապետությունների մասին: Ես նկատի ունեմ այն դեպքերը, երբ սովորական մարդը գերագույն իշխանության է հասնում հանցագործության ճանապարհով կամ իր հանդեպ համաքաղաքացիների բարեհաճության շնորհիվ: Խոսելով առաջին միջոցի մասին, կվկայակոչեմ երկու դեպք. մեկն՝ անցյալից, մյուսը՝ ժամանակակից կյանքից և դրանով կսահմանափակվեմ, քանզի ենթադրում եմ, որ այդ երկուսը բավական են օրինակներ փնտրողների համար:

Սիցիլացի Ագաթոկլեսը դարձավ Սիրակուզայի արքա, թեև ուներ ոչ միայն հասարակ, այլև ստորակարգ ու արհամարհելի կոչում: Նա ծնվել էր բրուտի ընտանիքում, վարում էր անազնիվ կյանք, բայց պատանեկությունից աչքի էր ընկնում հոգեկան ու մարմնական այնպիսի ուժով ու քաջությամբ, որ մտնելով զինվորական ծառայության, ժամանակի ընթացքում հասավ Սիրակուզայի պրետորի աստիճանին: Այդ պաշտոնում հաստատվելով, նա որոշեց դառնալ Սիրակուզայի տիրակալ, և, այդպիսով, սեփականել այն, ինչը հոժարակամ

վստահվել էր նրան Այդ մտադրության մասին տեղյակ պահելով Համիլկար Կարթագենցուն, որն այդ ժամանակ գտնվում էր Սիցիլիայում, նա մի առավոտ Սիրակուզայի ժողովրդին ու սենատը հրավիրեց, քննարկելու իբր հանրապետությանը վերաբերող գործեր և, երբ բոլորը հավաքվեցին, նրա զինվորները պայմանավորված նշանի համաձայն կոտորեցին բոլոր սենատորներին ու ժողովրդի ամենահարուստ ներկայացուցիչներին: Նման հաշվեհարդարից հետո Աղաթոկլեսն սկսեց իշխել՝ քաղաքացիների կողմից չհանդիպելով անգամ նվազագույն դիմադրության Ու թեև նա երկու անգամ պարտվեց կարթագենցիներից և նույնիսկ պաշարված էր նրանց զորքերով, այնուամենայնիվ, ոչ միայն չհանձնեց քաղաքը, այլև մարդկանց մի մասին թողնելով այն պաշտպանելու, մյուս մասի հետ ներխուժեց Աֆրիկա և կարճ ժամանակում Սիրակուզան պաշարումից ազատելով կարթագենցիներին ստիպեց գնալ ծայրահեղ քայլի՝ պայմանագիր կնքել, համաձայն որի, նրանք սահմանափակվելով Աֆրիկայում ունեցած տիրույթներով, Սիցիլիան զիջում էին նրան:

Եթե խորը մտածենք, Աղաթոկլեսի կյանքում ու գործերում ոչինչ կամ գրեթե ոչինչ չենք գտնի, որը նրան բաժին ընկած լիներ ճակատագրի բարեհաճությամբ, քանի որ, ինչպես արդեն ասվել է, նա իշխանության հասավ ոչ թե ինչ-որ մեկի հովանավորությամբ, այլ զինվորական ծառայության շնորհիվ, ինչը կապված է բազում վտանգների ու զրկանքների հետ: Նա իշխանությունն իր ձեռքում պահեց համարձակ գործողություններով, դրսևորելով վճռականություն ու խիզախություն: Եվ, այնուամենայնիվ, քաջություն էլ չի կարելի անվանել համաքաղաքացիների սպանությունը, դավաճանությունը, ուխտադրժությունը, դաժանությունն ու անմարդկայնությունը: Այդ ամենով կարելի է իշխանության հասնել, բայց փառքի՝ երբեք: Այնպես որ, եթե նրա մասին դատենք ըստ այն քաջության, որով նա ելնում էր վտանգի դեմ հանդիման, ըստ հոգեկան կորովի, որի շնորհիվ նա դիմակայում էր դժվարություններին, ապա նա հազիվ թե զիջի ցանկացած փառապանծ զորապետի, բայց հիշելով նրա դաժանությունն ու անմարդկայնությունը և նրա բոլոր ոճրագործությունները, մենք չենք

կարող նրան հավասարեցնել մեծագործ մարդկանց Այսպիսով, չի կարելի ճակատագրի բարեհաճությանը կամ քաջությանը վերագրել այն, ինչը ձեռք է բերվել առանց մեկի կամ մյուսի։

Արդեն մեր ժամանակներում, Ալեքսանդր պապի օրոք տեղի ունեցավ մի ուրիշ դեպք։ Օլիվերոտտոն, որը ծնվել էր Ֆերմոյում, մանուկ հասակում որբանալով, մեծացավ քեռու՝ Ջովաննի Ֆոլյանիի տանը. Տակավին պատանի, նա զինվորական ծառայության մտավ Պաոլո Վիտելիի մոտ, այն հույսով, որ զինվորական գործը յուրացնելով, զորքերում կզբաղեցնի մի պատվավոր տեղ Պաոլոյի մահից հետո նա տեղափոխվեց նրա եղբոր՝ Վիտելոցոյի մոտ, և շատ շուտով, խելացի, ուժեղ և քաջ մարդ լինելով, բանակում դարձավ առաջին դեմքը. Սակայն, գտնելով, որ ուրիշներին ենթարկվելն իր համար նվաստացուցիչ է, որոշեց Վիտելիի համաձայնությամբ և համաքաղաքացիներից մի քանիսի օժանդակությամբ տիրանալ Ֆերմոյին Այդ մարդիկ հայրենիքի ատրկությունը գերադասում էին նրա ազատությունից Ջովաննի Ֆոլյանիին հղած նամակում նա գրում է, որ

բազմամյա բացակայությունից հետո կուզենար այցելել քեռուն ու հարազատ վայրերը և միաժամանակ պարզել ժառանգության չափերը: Իր գործերում նա փառքից բացի այլ բանի մասին չի մտածել և ցանկանալով համաքաղաքացիներին ապացուցել, որ ժամանակն իզուր չի վատնել, խնդրում է, որ հարյուր ձիավորից բաղկացած շքախմբով, իր ընկերներին ու ծառաներին թույլ տան քաղաք մտնել պատվավոր ձևով: Ֆերմոյի բնակիչները իրենց հերթին թող չմերժեն նրան պատվավոր ընդունելություն ցույց տալ, ինչը հաճելի կլիներ ոչ միայն իրեն, այլև իր հորը փոխարինած քեռուն: Ջովաննի Ֆոլյանին կատարեց ազգականի խնդրանքն ու հոգ տարավ, որ քաղաքացիները նրան ընդունեն հարգ ու պատվով:

Տեղավորվելով իր տանը, նա սպասեց մի քանի օր, մինչև որ կավարտվեին ծրագրված շարագործության նախապատրաստությունները, և ճոխ խնջույք կազմակերպեց՝ հրավիրելով Ջովաննի Ֆոլյանիին ու Ֆերմոյի բոլոր անվանի մարդկանց: Երբ խրախճանքն ավարտվեց, Օլիվերոտտոն դիտավորյալ վտանգավոր խոսակցություն բացեց Ալեքսանդր պապի և նրա որ-

դու՝ Ջեզարեի գործերի ու նրանց մեծության մասին: Բայց, երբ Ջովաննին և մյուսները սկսեցին նրան պատասխանել, նա հանկարծ տեղից ելնելով հայտարարեց, թե նման խոսակցություններն ավելի լավ կլինի թաքուն տեղում շարունակել և ուղղվեց դեպի խորքի սենյակները, ուր նրա հետևից գնացին քեռին ու մյուս անվանի մարդիկ: Սակայն, նրանք դեռ չէին հասցրել նստել, երբ դուրս վազեցին դարանակալած զինվորներն ու կոտորեցին բոլոր ներկաներին: Այդ կոտորածից հետո ճիավոր Օլիվերոտտոն սլացավ ամբողջ քաղաքով մեկ և պալատում պաշարեց բարձրագույն մագիստրատը, որն էլ վախենալով, հնազանդվեց ու հիմնեց նոր կառավարություն. Օլիվերոտտոն հռչակվեց քաղաքի տիրակալ:

Ոչնչացնելով նրանց, ովքեր դժգոհության պատճառով կարող էին իրեն վնասել, Օլիվերոտտոն իր իշխանությունն ամրապնդեց ռազմական ու քաղաքացիական նորամուծություններով և այդ ժամանակից ի վեր ոչ միայն Ֆերմոյում անվտանգություն ձեռք բերեց, այլև պատուհաս դարձավ բոլոր հարևանների համար: Նրան քաղաքից դուրս բերելը նույնքան

դժվար էր, որքան և Աղաթոկլեսին, եթե նրան խորամանկությամբ չգերազանցեր Ջեզարե Բորջան, որը Սինիգալիայում, ինչպես արդեն ասվել է, ծուղակը գցեց Օրսինիի ու Վիտելիի զորախմբերի պետերին: Օլիվերոտտոն այնտեղ գնաց քաջության ու ոճրագործության հարցերում իր ուսուցիչ Վիտելոցոյի հետ. այնտեղ էլ նրա հետ միասին խեղդամահ եղավ, ինչը տեղի ունեցավ նկարագրված հայրասպանությունից մեկ տարի հետո:

Ոմանք կարող են չհասկանալ, թե ինչու է Աղաթոկլեսին ու նրա նմաններին հաջողվել դաժանությամբ ու դավաճանությամբ իրենց համար ուղի հարթելով, երկար տարիներ բարեհաջող կյանք վարել հայրենիքում, իրենց պաշտպանել արտաքին թշնամիներից, չդառնալ համաքաղաքացիների նյութած դավադրության զոհ, մինչդեռ շատ ուրիշների չի հաջողվել իշխանությունը դաժանության միջոցով պահպանել նույնիսկ խաղաղ, էլ չենք ասում՝ պատերազմական խառը ժամանակներում: Անշուշտ, դաժանություն էլ կա, դաժանություն էլ: Դաժանությունը լավ է իրագործվում այն դեպքերում, եթե թույլատրելի է վատը լավ անվանել,

երբ այն դրսևորում են միանգամից ու անվտանգության նկատառումներով՝ չկորցնելով չափի զգացումը Եվ ըստ հնարավորին այն ծառայեցնում են հպատակների օգտին: Իսկ վատ է իրագործվում այն դեպքերում, երբ հաշվեհարդարները սկզբում հազվադեպ են պատահում, բայց ժամանակի ընթացքում պակասելու փոխարեն ավելի հաճախակի են դառնում: Առաջին եղանակով գործելու դեպքում Աղաթոկլեսի նման աստծո ու մարդկանց օգնությամբ կարելի է պահպանել իշխանությունը, գործելով երկրորդ եղանակով՝ անտարակույս ոչ՝

Սրանից հետևում է, որ նա, ով պետություն է նվաճում, պետք է նախապատրաստի բոլոր չարագործություններն ու միանգամից գլուխ բերի՝ այլևս դրանց չվերադառնալու համար և ոչ թե ամեն օր շարունակի անել նույն բանը: Այդժամ մարդիկ կամաց-կամաց կհանդարտվեն, իսկ տիրակալը կկարողանա բարիք գործելով, աստիճանաբար նվաճել նրանց համակրանքը: Ով որ այլ կերպ վարվի անվճռականության կամ անմտության պատճառով, նա արդեն էլ երբեք սուրը պատյանը չի դնի ու էլ երբեք չի կարողանա ակնկալել իր հպատակների աջակ-

ցությունը, որոնց հանգիստը խաթարվել է նոր ու անվերջ փորձություններով: Այնպես որ, մարդկանց ցավ պետք է պատճառել միանգամից. որքան հազվադեպ է դա համտեսվում, այնքան քիչ է դրանից սպասվող վտանգը, իսկ բարեգործությունները պետք է անել չնչին չափաբաժիններով, որպեսզի ավելի լավ համտեսվեն: Իսկ ամենմակարևորը տիրակալի համար այն է, որ նա պետք է հպատակների հետ այնպես վարվի, որ ոչ մի իրադարձություն՝ վատ, թե լավ, նրան չստիպի իր վերաբերմունքը փոխել նրանց նկատմամբ, քանի որ, եթե վրա հասնեն դժվար ժամանակներ, չարիք գործելն արդեն ուշ է, իսկ բարիք գործելն անօգուտ, որովհետև կհամարեն, որ դա հարկադրյալ է արվում և երախտագիտությամբ չեն հատուցի:

## ԳԼՈՒԽ IX
## Քաղաքացիական մենիշխանության մասին

Հիմա անցնեմ այն դեպքերին, երբ մարդն իր հայրենիքի տիրակալ է դառնում ոչ թե ոճրագործությունների ու անօրինականությունների ճանապարհով, այլ համաքաղաքացիների հո-

ժար կամքով, ինչի համար պահանջվում է, իսկն ասած, ոչ թե քաջություն կամ հաջողություն, այլ ավելի շուտ՝ հաջողակ խորամանկություն:

Հարկ է նշել, որ այդպիսի մենիշխանությունը, որը կարելի է քաղաքացիական անվանել, հիմնվում է ազնվականության, կամ ժողովրդի պահանջով: Քանզի չկա մի քաղաք, որտեղ հակասության մեջ չլինեն այս երկու խավերը: Ազնվականությունն ուզում է իրեն ենթարկել ու կեղեքել ժողովրդին, իսկ ժողովուրդը չի ցանկանում ճնշվել ու կեղեքվել, ուստի այդ երկու խավերի բախումը լուծվում է երեք ճանապարհով՝ մենիշխանությամբ, անիշխանությամբ կամ ազատությամբ:

Մենիշխանությունը հիմնվում է ազնվականության կամ ժողովրդի կողմից՝ նայած թե նրանցից ում է առաջինը հարմար առիթ ներկայանում: Ազնվականությունը, տեսնելով, որ չի կարող դիմակայել ժողովրդին, իր շարքերից մեկին գահ բարձրացնելով, նրան հուչակում է տիրակալ՝ նրա թիկունքում իր ցանկություններին հագուրդ տալու նպատակով: Ճիշտ նույն կերպ էլ ժողովուրդը, տեսնելով, որ չի կարողանում դիմադրել ազնվականությանը, գահ է

բարձրացնում որևէ մեկին՝ պատսպարվելու նրա իշխանության ներքո: Ազնվականության օգնությամբ իշխանություն ձեռք բերած տիրակալի համար ավելի դժվար է պահպանել իշխանությունը, քան նրա, ում ժողովուրդն է իշխանության հասցրել: Քանի որ, եթե տիրակալը շրջապատված է ազնվականներով, որոնք իրենց նրան հավասար են համարում, նա չի կարող ոչ հրամայել, ոչ էլ ինքնուրույնաբար գործել: Մինչդեռ նա, ում ժողովուրդն է իշխանության բերել, իշխում է մենակ, և նրա կողքին չկա կամ գրեթե չկա մեկը, որը համարձակվի չենթարկվել նրան: Ընդսմին, անհնար է ազնվորեն, առանց մյուսներին նեղացնելու, բավարարել ազնվականների պահանջները, բայց ժողովրդի պահանջները բավարարել կարելի է, որովհետև ի տարբերություն ազնվականության, ժողովրդի նպատակն ավելի ազնիվ է: Ազնվականությունն ուզում է կեղեքել ժողովրդին, իսկ ժողովուրդը չի ուզում կեղեքվել: Ավելացնեմ, որ թշնամաբար տրամադրված ժողովրդին անհնար է հնազանդեցնել, որովհետև նա բազմաբյուր է, իսկ ազնվականությանը կարելի է, որովհետև սակավաթիվ է: Ժողովուրդը, վատագույն դեպ-

*քում, երես կթեքի տիրակալից, մինչդեռ թշնամաբար տրամադրված ազնվականությունը ոչ միայն երես կթեքի, այլև նույնիսկ կելնի նրա դեմ, քանզի ազնվականությունը հեռատես է, խորամանկ, նախօրոք է ծրագրում նահանջի ուղիներ, և գիտի՝ ինչպես հաճոյանալ ավելի ուժեղներին: Ավելացնեմ նաև, որ տիրակալը չի կարող ժողովուրդ ընտրել, բայց ազնվականների մեջ կարող է ընտրություն կատարել, քանզի նա օժտված է պատժելու և ներում շնորհելու, իրեն մերձավոր դարձնելու կամ շնորհազրկելու իրավունքով:*

*Փորձեմ այս վերջին մասն ավելի հանգամանորեն բացատրել: Ազնվականների հետ պետք է վարվել այնպես, ինչպես որ նրանք են քեզ հետ վարվում: Իսկ նրանք կարող են դրսևորել երկու գործելակերպ՝ կամ ցույց տալ, որ պատրաստ են կիսել տիրակալի ճակատագիրը, կամ՝ ոչ: Առաջիններին, եթե նրանք շահադետ չեն, պետք է հարգել ու սիրաշահել, իսկ ինչ վերաբերում է երկրորդներին, ապա այստեղ պետք է տարբերել երկու դրդապատճառ: Եթե այդ մարդիկ իրենց այդպես են դրսևորում փոքրոգության կամ բնածին անվճռականության պատ-*

ճառով, այդպիսիներին պետք է օգտագործել, առավել ևս, եթե նրանք հմուտ են որևէ գործում: Իսկ եթե նրանք միտումնավոր կերպով ու պատվասիրությունից դրդված են այդպես վարվում, ապա դա նշանակում է, որ իրենց մասին ավելի շատ են հոգում, քան տիրակալի: Այդ ժամանակ նրանցից պետք է զգուշանալ ու վախենալ ոչ պակաս, քան բացահայտ հակառակորդներից, քանզի փորձության պահին նրանք միշտ կօգնեն տապալել տիրակալին:

Այնպես որ, եթե տիրակալն իշխանությունը ձեռք է բերել ժողովրդի օգնությամբ, պետք է աշխատի չկորցնել նրա համակրանքը, ինչն ամենևին էլ դժվար չէ, որովհետև ժողովուրդը լոկ պահանջում է, որ իրեն չկեղեքեն: Բայց, եթե տիրակալին, հակառակ ժողովրդի ցանկության, գահ է բարձրացրել ազնվականությունը, ապա նրա առաջնահերթ գործը պիտի լինի շահել ժողովրդի համակրանքը, ինչը նույնպես դժվար չէ, եթե նրան առնի իր հովանու ներքո: Մարդիկ, եթե մի լավ բան են տեսնում նրանց կողմից, ումից չարիք էին սպասում, առանձնահատուկ ձևով են կապվում բարերարի հետ: Այս դեպքում ժողովուրդն ավելի շատ կհա-

մակրի տիրակալին, քան այն դեպքում, եթե ինքը նրան հասցրած լիներ իշխանության: Իսկ ժողովրդի աջակցությունը կարելի է ստանալ տարբեր միջոցներով, որոնք ես չեմ քննարկի, քանի որ դրանք առանձին դեպքերում տարբեր են և չեն կարող ստորադաս լինել որևէ որոշակի կանոնի:

Իբրև եզրափակում ասեմ, որ տիրակալը պետք է հաշտ լինի ժողովրդի հետ, այլապես բախտորոշ իրավիճակում կզրկվի իր գահից: Սպարտայի տիրակալ Նաբիդոսը դիմակայեց ամբողջ Հունաստանի և հռոմեական հաղթական զորքերի պաշարմանը՝ փրկելով հայրենիքն ու իշխանությունը և դա այն դեպքում, երբ մոտալուտ վտանգից առաջ նրանից պահանջվեց հաշվեհարդար տեսնել ընդամենը մի քանի հոգու հետ, մինչդեռ, եթե նա թշնամություն ունենար ամբողջ ժողովրդի հետ, չէր կարող սահմանափակվել քչով: Եվ թող ինձ չառարկեն այն ծամծմված ասացվածքով, թե իբր հույսը դնել ժողովրդի վրա՝ նույնն է, թե ավազի վրա տուն շինել: Ասացվածքը ճիշտ է, երբ խոսքը սովորական քաղաքացու մասին է, որն ապավինելով ժողովրդին, հույս է փայփայում, թե ժո-

ղովուրդն իրեն կփրկի, եթե նա թշնամիների կամ մագիստրատի ձեռքն ընկնի: Այստեղ իսկապես որ կարելի է խաբվել, ինչպես խաբվեցին Գրաքոսը Հռոմում կամ մեսսեր Ջորջո Սկալին Ֆլորենցիայում: Բայց, եթե ժողովրդի մեջ հենարան է փնտրում այն տիրակալը, որը ոչ թե խնդրում, այլ հրամայում է, ընդսմին՝ անվախ է, փորձության պահին հոգու կորովը չի կորցնում, չի զլանում պաշտպանության համար անհրաժեշտ նախապատրաստություններ անել և կարող է իր կարգադրություններով ու արիությամբ խանդավառել շրջապատողներին, նա երբեք չի խաբվի ժողովրդի հարցում և կհամոզվի, թե որքան ամուր է այդ հենարանը:

Սովորաբար, նման դեպքերում տիրակալի դիրքը վտանգվում է քաղաքացիական կարգերից անսահմանափակ իշխանության անցնելու ժամանակ, քանի որ տիրակալները ղեկավարում են մագիստրատի միջոցով կամ միահեծան կերպով: Առաջին դեպքում տիրակալի վիճակը երերուն է ու խոցելի, քանի որ նա լիովին կախված է մագիստրատի անդամների կամքից: Նրանք ի զորու են ցանկացած և, առավել ևս, ճակատագրական պահի նրան զրկել իշխանու-

թյունից, այսինքն՝ կարող են ելնել նրա դեմ կամ չկատարել նրա կարգադրությունները: Եվ այստեղ, վտանգի դեմ-հանդիման, տիրակալն արդեն չի կարող իր համար բացարձակ իշխանություն ապահովել, որովհետև քաղաքացիներն ու հպատակները սովոր լինելով կատարել մագիստրատի կարգադրությունները, արտասովոր իրավիճակում չեն ենթարկվի տիրակալի հրամաններին: Այդ պատճառով էլ նման պարագայում տիրակալը միշտ կզգա հուսալի մարդկանց պահանջ, քանզի չի կարելի հավատ ընծայել խաղաղ ժամանակ տեսածիդ, երբ քաղաքացիները զգում են պետության կարիքը և յուրաքանչյուրը շտապում է հավաստիացումներ անել քանի դեռ մահվան շունչը չի զգացել, պատրաստակամություն է հայտնում իր կյանքը զոհել հանուն տիրակալի, բայց, երբ պետությունը վտանգի պահին զգում է իր քաղաքացիների կարիքը, նրանցից քչերն են հրապարակ գալիս: Եվ նման պահը վտանգավոր է նրանով, որ պատահում է միայն մեկ անգամ: Ուստի, իմաստուն տիրակալը պետք է միջոցներ ձեռք առնի, որպեսզի քաղաքացիները միշտ և ցանկացած պարագայում զգան տիրակալի ու պե-

*տության կարիքը. Միայն այդ դեպքում նա կարող է հույս դնել նրանց հավատարմության վրա*

## ԳԼՈՒԽ X
## Ուրիշ ինչպես պետք է չափել պետության ուժը

*Ուսումնասիրելով պետությունների առանձնահատկությունները, պետք է նկատի առնել հարցի մի կողմը ևս. Անհրաժեշտության դեպքում տիրակալն ի վիճակի՞ է սեփական ուժերով պաշտպանել իրեն, թե՞ նա ունի կողմնակի օգնության կարիք: Բացատրեմ, որ պաշտպանունակ եմ համարում այն տիրակալներին, ովքեր բավական թվով մարդիկ կամ անհրաժեշտ քանակությամբ փող ունենալով, կարող են պահանջված քանակի զորք ժողովել և մարտի ելնել ցանկացած թշնամու դեմ: Օգնության կարոտ եմ համարում նրանց, ովքեր թշնամու դեմ մարտադաշտ ելնել չեն կարող և ստիպված են պաշտպանվել քաղաքի պարիսպների ներսում: Թե ինչ պետք է անել առաջին դեպքում, այդ մասին կխոսենք ավելի ուշ, թեև ինչ-որ բան վերևում արդեն ասվել է. Ինչ վերաբերում է*

երկրորդ դեպքին, ապա ոչինչ չեմ կարող ասել բացի նրանից, որ տիրակալը պետք է ամրացնի ու անհրաժեշտ բոլոր պարագաներով պատսպարի քաղաքը՝ չհոգալով շրջակայքի մասին. Եթե տիրակալը հուսալիորեն ամրացնի քաղաքն ու հպատակների հետ այնպես վարվի, ինչպես նշվել է վերևում և կավելացվի ստորև, ապա հարևանները կզգուշանան նրա վրա հարձակվել: Որովհետև, մարդիկ առհասարակ չկամորեն են մասնակցում դժվար ձեռնարկումներին և ինչու պիտի նրանց հեշտ թվա հարձակումն այն տիրակալի վրա, որի քաղաքը հուսալիորեն ամրացված է, իսկ ժողովուրդը չարացած չէ:

Գերմանիայի քաղաքները ամենաազատներից են, ունեն ոչ մեծ շրջակայք, ենթարկվում են կայսերը, երբ իրենք են կամենում, ու չեն վախենում ոչ նրանից, ոչ էլ ուժեղ հարևաններից, որովհետև բավականաչափ ամրապինդ են. Ուստի բոլորը կհասկանան, որ դրանց գրավումը դժվար ու հոգնեցուցիչ գործ է: Քաղաքները շրջապատված են ամուր պարիսպներով ու խրամատներով, ունեն պահանջվածի չափ հրետանի, իսկ հանրային պահեստներում պահում

են մթերքի, խմիչքի ու վառելիքի տարեկան պաշար: Ընդամին, հասարակ ժողովրդին կերակրելու համար և գանձարանը չհյուծելու նպատակով նրանք մեկ տարվա աշխատանք են ապահովում այն բնագավառներում, որոնցով ապրում է քաղաքը: Եվ, անշուշտ, աչքաթող չանելով այն արհեստները, որոնք կերակրում են հասարակ ժողովրդին: Ռազմական արվեստը նրանց մոտ հարգի է և խրախուսվում է զանազան միջոցներով:

Այսպիսով, այն տիրակալի վրա, ում քաղաքը հուսալիորեն ամրացված է, իսկ ժողովուրդը չարացած չէ, ոչ ոք չի հարձակվի: Բայց, եթե դա պատահի էլ, թշնամին խայտառակ կերպով կնահանջի, որովհետև փոփոխվող աշխարհում իրադարձությունները այնպիսի արագությամբ են հաջորդում մեկը մյուսին, որ հազիվ թե որևէ մեկն ի վիճակի լինի քաղաքը պաշարելով մի ամբողջ տարի զորքին անգործության մատնել: Ինձ կարող են առարկել. մարդիկ տեսնելով քաղաքի շրջակայքում հրի մատնված իրենց դաշտերն ու կացարանները, չեն դիմանա երկարատև պաշարմանը, քանզի սեփական հոգսերը մոռանալ կտան տիրակալի նկատմամբ ունե-

ցած հավատարմությունը: Պատասխանեմ. ու-
ժեղ և համարձակ տիրակալը կհաղթահարի բո-
լոր դժվարությունները մերթ հպատակներին
հուսադրելով, որ չուտով աղետները վերջ կու-
նենան, հիշեցնելով, որ թշնամին անողորմ է,
մերթ հնազանդեցնելով չափից ավելի ըմբոստ-
ներին: Բացի այդ, թշնամին սովորաբար դաշ-
տերն այրում ու ամայացնում է քաղաքին մո-
տենալիս, երբ մարդիկ դեռևս լի են ցասումով
ու չհանձնվելու վճռականությամբ: Բայց, երբ
մի քանի օրից նրանց ավյունը սառի, ապա
վնասն արդեն հասցված է լինելու և չարիքը՝
պատճառված: Եվ այդժամ մարդիկ ուրիշ անե-
լիք չեն ունենա բացի իրենց տիրակալին զորա-
վիգ լինելուց: Հենց իրենք էլ նրանից երախտա-
գիտության կակնկալեն այն բանի համար, որ
նրան պաշտպանելով, թույլ տվեցին հրկիզել
իրենց տներն ու կողոպտել ունեցվածքը: Իսկ
մարդիկ բնույթով այնպիսին են, որ նույնպիսի
կապվածություն են դրսևորում նրանց հան-
դեպ, ում համար բարիք են գործել, որքան և
նրանց, ովքեր նրանց համար են բարիք գործել:
Այսպիսով, բոլոր հանգամանքները, քննության
ենթարկելուց հետո կասեմ, որ խելացի տիրա-

կալը կարող է ամբողջ պաշարման ընթացքում առանց դժվարության աննկուն պահել քաղաքացիների ոգին, եթե ունի բավականաչափ միջոցներ կերակրելու և պաշտպանելու քաղաքը:

## ԳԼՈՒԽ XI
## Եկեղեցական պետությունների մասին

Մեզ մնում է քննության առնել եկեղեցական պետությունները, որոնց մասին կարելի է ասել, որ դրանց տիրանալը դժվար գործ է, քանզի պահանջվում է քաջություն կամ ճակատագրի բարեհաճություն, իսկ պահպանելը հեշտ է, քանի որ չի պահանջվում ո՛չ մեկը, ոչ էլ մյուսը: Այդ պետությունները հենվում են կրոնով սրբագործված հիմքերի վրա, որոնք այնքան հզոր են, որ դրանք են տիրակալներին պահում իշխանության ղեկի մոտ, անկախ այն բանից, թե վերջիններս ինչպես են իրենց դրսևորում. Միայն այդ պետություններում տիրակալներն ունեն իշխանություն, որը չեն պաշտպանում, հպատակներ, որոնց չեն կառավարում, և, այդուհանդերձ, նրանց իշխանությունը ոչ ոք չի փորձում խլել: Նրանց հպա-

տակներն էլ չեն դժգոհում իրենց վիճակից ու չեն կամենում, ասենք՝ չեն էլ կարող նրանցից հեռանալ: Այնպես որ, միայն այդ տիրակալներն են մշտապես բարեկեցիկ ու անվրդով կյանք վայելում:

Բայց, քանի որ այդ պետությունները ղեկավարվում են վերուստ սահմանված օրենքներով, որոնք անհասանելի են մարդկային բանականությանը, ապա դրանց մասին ես չեմ խոսի, քանզի լոկ ինքնահավան ու հանդուգն մարդը կարող է հանձն առնել քննել աստվածախնամ գործերը: Այնուամենայնիվ, ինձ կարող են հարցնել, թե ինչպես է եկեղեցին հասել այնպիսի հզորության, որ նրանից վախենում է անգամ Ֆրանսիայի թագավորը: Եկեղեցուն ինչպես հաջողվեց Իտալիայից վտարել արքային ու ջախջախել վենետիկցիներին, չէ որ նախկինում նրա աշխարհիկ իշխանության հետ հաշվի չէին նստում նույնիսկ մանր իշխաններն ու բարոնները, էլ չենք խոսում Իտալիայի խոշոր պետությունների մասին: Եթե ինձ այդ մասին հարցնեն, ապա թեև այդ իրադարձությունները քաջ հայտնի են, ես ավելորդ չեմ համարի հիշեցնել, թե ինչպես է պատահել.

Քանի դեռ Կարլը՝ Ֆրանսիայի թագավորը, Իտալիա չէր ներխուժել, երկիրը գտնվում էր պապի, վենետիկցիների, Նեապոլի թագավորի, Միլանի դքսի և Ֆլորենցիացիների տիրապետության ներքո Այդ իշխողները երկու հիմնական հոգս ունեին. առաջինը՝ թույլ չտալ, որ Իտալիա ներխուժեն օտարերկրացիները և երկրորդը՝ որ մեկը մյուսին թույլ չտա խախտելու նախկին սահմանները: Բոլորից ավելի անվստահելի էին վենետիկցիներն ու պապը: Վենետիկցիների դեմ մյուսները դաշինք կազմեցին, ինչպես եղել էր Ֆեռարայի պաշտպանության ժամանակ, իսկ պապի դեմ օգտագործեցին հռոմեացի բարոններին՝ Կոլոննայի և Օրսինիի գլխավորությամբ գործող երկու զորախմբերի բաժանված՝ բարոններն անընդհատ կռիվներ էին հրահրում և, եկեղեցու առաջնորդի քթի տակ նիզակ ճոճելով, սասանում պապականության հզորությունն ու կայունությունը. Թեև արիակում պապեր էլ էին պատահում՝ ինչպես, օրինակ, Սիքստոսը, այնուամենայնիվ, նրանցից ոչ մեկին ամբողջ փորձվածությամբ ու բարենպաստ հանգամանքների առկայությամբ հանդերձ չէր հաջողվում գլուխն ազատել այդ պա-

տուհասից Դրա մեղավորը նրանց կառավարման կարճատևությունն էր, քանի որ այն տասը տարիների ընթացքում, որքան միջին հաշվով տևում էր ընտրությունից մինչև մահ պապի կառավարումը, նրան հազիվհազ հաջողվում էր ջախջախել թշնամական զորախմբերից միայն մեկին: Եվ, եթե պապը, ասենք, հասցնում էր համարյա ջախջախել Կոլոննայի կողմնակիցներին, ապա նրա հաջորդը, անձնական թշնամանք տածելով Օրսինիի հանդեպ, թույլ էր տալիս, որ Կոլոննայի զորախումբը վերակազմավորվի և արդեն ժամանակ չէր մնում ջախջախելու Օրսինիին Հենց այդ պատճառով էլ Իտալիայում պապի աշխարհիկ իշխանությունը հեղինակություն չուներ

Բայց, երբ պապական գահին բազմեց Ալեքսանդր VI-ը, նա իր բոլոր նախորդներից շատ ավելի լավ ապացուցեց, թե փողով և ուժով գործելու դեպքում ինչի կարող է հասնել եկեղեցու առաջնորդը Օգտվելով ֆրանսիացիների ներխուժումից, նա դուքս Վալենտինոյի միջոցով կատարեց այն ամենն, ինչի մասին պատմել եմ վերևում, այնտեղ, ուր խոսք է գնացել դքսի մասին: Ճիշտ է, նրա ջանքերն ուղղված էին ոչ

թե եկեղեցու, այլ դքսի մեծարմանը, սակայն դրանց շնորհիվ աճեց եկեղեցու հեղինակությունը, որը Ալեքսանդրի մահից և դքսի մեկուսացումից հետո ճաշակեց պապի ջանքերի պտուղները՝ Հուլիոս պապը գահ բարձրացավ արդեն հզոր եկեղեցու օրոք, որը տիրում էր Ռոմանիային, հնազանդեցրել էր հռոմեական բարոններին, որոնց ջոկատները ցաքուցրիվ էին եղել Ալեքսանդրի հարվածներից: Բացի այդ. բացել էր գանձարանը համալրելու մի նոր աղբյուր, որից, մինչև Ալեքսանդրը, ոչ ոք չէր օգտվել՝

Հուլիոսը ոչ միայն շարունակեց այս ամենը, այլև գործին մեծ թափ հաղորդեց: Նա որոշեց միացնել Բոլոնիան, ջախջախել Վենետիկը ու դուրս վռնդել ֆրանսիացիներին և այդ մտահղացումն իրականացրեց ոչ թե իր կամ ուրիշների փառքն ավելացնելու, այլ ի փառս և ի մեծություն եկեղեցու՝ Բացի այդ, նա չթողեց, որ Օրսինիի և Կոլոննայի զորախմբերն աճեն: Թեև այդ պարագլուխներից մեկնումեկը միշտ էլ պատրաստ էր խռովություն սերմանել, նրանց զսպում էր նախ եկեղեցու հզորությունը և ապա՝ իրենց շարքերում կարդինալների բացա-

կայությունը, որոնք միշտ էլ հրահրել են գժտություններ Երբեք այդ զորախմբերի միջև հաշտություն չի լինի, եթե նրանց շարքերում կարդինալներ լինեն Հռոմում և այլուր զորախմբերի միջև թշնամություն բորբոքելով, կարդինալները խռովության մեջ են ներքաշում բարոններին և, այսպիսով, բարձրաստիճան հոգևոր այրերի իշխանատենչության պատճառով բարոնների միջև անպակաս են գժտություններն ու թշնամանքը

Նորին սրբազանություն Լևոն պապը ստացել է հզոր եկեղեցի, և, եթե նրա նախորդները պապականությունը հզորացրել են զենքի ուժով, ապա եկեղեցու ներկայիս ղեկավարը հույս է ներշնչում, որ այն է՛լ ավելի կփառաբանի ու կպանծացնի իր բարությամբ, արիակամությամբ և բազում այլ շնորհներով.

## ԳԼՈՒԽ XII
## Զորքերի տեսակների և վարձկան զինվորների մասին

Վերևում հանգամանորեն քննարկեցինք այն պետությունների տարատեսակները, որոնք

հիշատակել էի սկզբում: Մասնակիորեն քննության առանք տիրակալների հզորացման և անկման պատճառները, պարզեցինք, թե ինչ միջոցներով են գործել նրանք, ովքեր ցանկացել են նվաճել ու պահպանել իշխանությունը: Հիմա տեսնենք, թե հարձակման ու պաշտպանության ինչ միջոցներ ունի վերոթվարկյալ պետություններից յուրաքանչյուրը: Ավելի վաղ արդեն ասվել է, որ տիրակալի իշխանությունը պետք է խարսխվի ամուր հիմքի վրա, այլապես կտապալվի: Իսկ բոլոր պետություններում, ինչպես ժառանգաբար ստացած, այնպես էլ խառը և նոր, իշխանության համար հիմք են ծառայում լավ օրենքներն ու լավ զորքը: Բայց լավ օրենքներ չեն լինում այնտեղ, որտեղ լավ զորք չկա, և, ընդհակառակն, որտեղ կա լավ զորք, այնտեղ լավ են նաև օրենքները, ուստի, չխոսելով օրենքների մասին, ուղղակի անցնում եմ զորքին՝

Սկսեմ նրանից, որ զորքերը, որոնց միջոցով տիրակալը պաշտպանում է իր երկիրը, լինում են սեփական, դաշնակցային, վարձկան կամ խառը: Վարձկան և դաշնակցային զորքերը անօգուտ են ու վտանգավոր. Երբեք ամուր կամ

հարատև չի լինի այն իշխանությունը, որը հենվում է վարձկան զորքի վրա, քանզի վարձկանները փառասեր են, անկարգապահ, հակված գժտությունների, ամբարիշտ են բարեկամների նկատմամբ և վախկոտ՝ թշնամու դիմաց, ուխտադրուժ են և սրբապիղծ առաջին իսկ վճռական գրոհը նրանց պարտության է մատնում: Իսկ խաղաղ ժամանակ նրանք քեզ կկեղեքեն ոչ պակաս չափով, քան թշնամին պատերազմի ժամանակ: Դա բացատրվում է նրանով, որ նրանք կռվում են ոչ թե խանդավառության կամ այլ կրքի թելադրանքով, այլ չնչին ռոճիկի համար, ինչն, անշուշտ, բավական չէ, որ նրանք անձնվիրաբար ծառայեն: Նրանք քեզ սիրով կծառայեն խաղաղ ժամանակ, բայց բավական է պատերազմ սկսվի, որ թիկունքը քեզ դարձնելով փախչեն:

Պե՞տք է արդյոք ապացուցել այն, ինչն առանց այդ էլ պարզ է: Ուրիշ ինչո՞վ բացատրել Իտալիայի անկումը, եթե ոչ նրանով, որ շատ տարիներ ապավինում էր վարձկանների զենքին. Ոմանց համար վարձկանները գործել են հաջողությամբ և մեկ անգամ չէ, որ խիզախություն են դրսևորել միմյանց դեմ կռվելիս,

բայց, երբ ներխուժեց օտար թշնամին, տեսանք, թե իրականում նրանք ինչ արժեն Այնպես որ, Կարլը՝ Ֆրանսիայի թագավորը, իրոք որ Իտալիան նվաճեց առանց ճիգ գործադրելու: Նա, ով ասել է, թե մենք մեր մեղքերի համար ենք զրկանքներ կրում, ճիշտ է ասել, միայն թե դրանք այն մեղքերը չեն, որոնք նա նկատի է ունեցել, այլ մեր թվարկածները Եվ, քանի որ դրանք տիրակալների մեղքերն էին, ապա նրանք էլ ստիպված եղան հատուցել դրա համար.

Ես կուզենայի հանգամանորեն բացատրել, թե ինչ վտանգներով է հղի վարձկան զորքերի ծառայությունները դիմելը: Կոնդոտիերները[1] տարբեր ձևով են տիրապետում իրենց արհեստին. ոմանք՝ գերազանց, մյուսները՝ միջակ. Առաջիններին չի կարելի վստահել, որովհետև նրանք իրենք են ձգտելու իշխանության և հանուն դրա կտապալեն կամ քեզ՝ իրենց տիրոջը, կամ ուրիշին՝ քո կարծիքը չհարցնելով· Երկրորդներին չի կարելի վստահել, որովհետև նրանք տանուլ կտան ճակատամարտը Ինձ կա-

---

1 Վարձկան զորախմբի պետեր (ծանոթ թարգմ)

սեն, թե դա կարելի է սպասել յուրաքանչյուրից, ում ձեռքին զենք կա՝ լինի վարձկան թե ոչ Կպատասխանեմ. զորքը գտնվում է կամ տիրակալի կամ հանրապետության տնօրինության ներքո առաջին դեպքում տիրակալն անձամբ պիտի զորքը գլխավորի՝ ստանձնելով զորապետի պարտականությունները, երկրորդ դեպքում հանրապետությունը պետք է զորքի հրամանատարությունը հանձնի քաղաքացիներից մեկին, և եթե նա անընդունակ դուրս գա՝ պաշտոնանկ անի կամ սահմանափակի օրենքներով, որպեսզի նա չափը չանցնի. Մենք փորձից գիտենք, որ միայն տիրակալ-զորավորներն ու զինված հանրապետություններն են մեծագույն հաջողությունների հասել, մինչդեռ վարձկանները միայն վնաս են բերել:

Հռոմն ու Սպարտան դարեր շարունակ անփոփոխ եղել են զինված ու ազատ· Շվեյցարացիները բոլորից ավելի լավ են զինված և բոլորից ավելի ազատ են. Հնում Կարթագենը հրավիրեց վարձկաններ, ովքեր մազ էր մնացել Հռոմի հետ առաջին պատերազմի ավարտից հետո տեր դառնային քաղաքին, թեև կարթագենցիներն իրենց քաղաքացիներին էին զորքի

գլուխ կարգել Էպամինոնդեսի մահից հետո Թեբեացիները Փիլիպոս Մակեդոնացուն հրավիրեցին գլխավորելու իրենց զորքերը, նա հաղթական վերադարձից հետո խլեց Թեբեի ազատությունը Միլանցիները դուքս Ֆիլիպի մահից հետո ծառայության կանչեցին Ֆրանչեսկո Սֆորցային, ով Կարավաջոյի մերձակայքում ջախջախելով վենետիկցիներին, միացավ թշնամուն՝ ընդդեմ իր տերերի միլանցիների: Հայր Սֆորցան, ծառայելով Նեապոլի թագուհուն՝ Ջովաննային, անսպասելիորեն լքեց նրան, այնպես որ թագավորությունը փրկելու համար թագուհին փութաց պաշտպանություն խնդրելու Արագոնի թագավորից:

Ինձ կասեն, որ վենետիկցիներն ու ֆլորենցիացիները վարձկանների օգնությամբ մեկ անգամ չէ, որ հաստատել են իրենց գերիշխանությունը և, այդուհանդերձ, նրանց կոնդոտիերները տիրակալներ չեն դարձել ու ազնվորեն պաշտպանել են տերերին. Դրան կպատասխանեմ, որ ֆլորենցիացիների բախտը պարզապես բերել է. այն քաջարի կոնդոտիերներից, որոնցից արժեր զգուշանալ, ոմանց չվիճակվեց հաղթանակ տանել, մյուսները մրցակիցներ ունեին,

երրորդների իշխանատենչ հայացքներն ուղղված էին դեպի այլ տեղավայրեր: Ինչպե՞ս կարող ենք դատել Ջովաննի Աուկուտայի հավատարմության մասին, եթե նրա անվան դիմաց չի գրված ոչ մի հաղթանակ, բայց բոլորն էլ կհամաձայնվեն, որ, եթե նա հաղթանակով վերադառնար, ֆլորենցիացիները լիովին կհայտնվեին նրա իշխանության ներքո: Սֆորցան ու Բրաչչոն իրարից աչք չէին հեռացնում դրա համար էլ Ֆրանչեսկոն իր շահախնդրություններն ուղղեց Լոմբարդիա, իսկ Բրաչչոն՝ պապական տիրույթներ ու Նեապոլի թագավորություն: Իսկ ինչպիսի՞ն էր իրադրությունը վերջերս: Ֆլորենցիացիները ծառայության հրավիրեցին Պաոլո Վիտելլիին՝ խելացի և դեռևս առօրյա կյանքում հսկայական հեղինակություն ունեցող մի մարդու: Եթե նա վերցներ Պիզան, մի՞թե պարզ չէ, որ ֆլորենցիացիները նրանից պրծում չէին ունենա: Որովհետև, եթե նա ծառայության անցներ հակառակորդի մոտ, նրանք ստիպված պիտի հանձնվեին, իսկ եթե մնար իրենց մոտ, ստիպված պիտի ենթարկվին նրան:

Իսկ ինչ վերաբերում է վենետիկցիներին,

ապա նրանք փայլուն և անվիճելի հաղթանակներ էին տանում լոկ այնքան ժամանակ, քանի դեռ պատերազմում էին իրենց ուժերով, այսինքն՝ մինչև ցամաքում ռազմական գործողություններ ծավալելը. Վենետիկի արիստոկրատիան և զինված հասարակ ժողովուրդը մեկ անգամ չէ, որ ցուցաբերել են մարտական խիզախության օրինակներ՝ կռվելով ծովում, բայց տեղափոխվելով ցամաք, նրանք ընդօրինակեցին ամբողջ Իտալիայում ընդունված զինվորական սովորույթները Երբ ցամաքում նրանց նվաճումները դեռ փոքր էին, իսկ նրանց տերությունն՝ անսասան, նրանք իրենց կոնդոտիերներից երկյուղելու պատճառներ չունեին, բայց երբ նրանց տիրույթներն ընդարձակվեցին, իսկ դա տեղի ունեցավ Կարմանյոլայի օրոք, ապա նրանք գիտակցեցին իրենց սխալը. Կարմանյոլային նրանք գիտեին որպես քաջարի զորավարի, ում գլխավորությամբ նրանք ջախջախեցին Միլանի դքսին, սակայն, տեսնելով, որ Կարմանյոլան կռվելու փոխարեն անվճռականություն է ցուցաբերում, մտածեցին, որ նա չի կարող հաղթել, որովհետև հաղթանակի ձգտում չունի, բայց չհամարձակվեցին նրան հե-

ռացնել, որովհետև վախեցան կորցնել նվաճածը և հարկադրված լինելով ինչ-որ ձևով իրենցից հեռացնել վտանգը, սպանեցին Կարմանյոլային. Ավելի ուշ, նրանք վարձեցին Բարտոլոմեո դա Բերգամոյին, Ռոբերտո դա Սան-Սևերինոյին, կոմս դի Պիտիլյանոյին ու նրանց նմաններին, որոնք էլ վախ էին ներշնչում ոչ թե նրա համար, որ կշահեն, այլ, որ տանուլ կտան ճակատամարտը: Այդպես պատահեց Վայլայի մոտ, որտեղ վենետիկցիները մեկ օրում կորցրին այն ամենը, ինչ մեծ դժվարությամբ ձեռք էին բերել ութ հարյուրամյակի ընթացքում. Քանզի, վարձկանները հայտնի են նրանով, որ հարձակվում են դանդաղ ու ծուլորեն, փոխարենը նահանջում են նախանձելի արագությամբ Եվ, եթե օրինակներ բերելու համար դիմեցի Իտալիային, որտեղ երկար տարիներ տեր ու տնօրինություն են անում վարձկան զորքերը, ապա գործի օգտի համար կուզենայի հետադարձ հայացք գցել, որպեսզի բացատրում, թե որտեղից են դրանք հայտնվել և ինչպես են այդքան հզորացել

Պետք է իմանալ, որ ոչ այնքան վաղուց, երբ կայսրությունը թուլացավ, իսկ պապի աշխար-

հիկ իշխանությունն ամրապնդվեց, Իտալիան բաժան-բաժան եղավ մի քանի պետություններ-ի: Խոշոր քաղաքներից շատերը ապստամբեցին իրենց կեղեքող նոբիլների դեմ, որոնց հովանավորում էր կայսրը, մինչդեռ քաղաքներին հովանավորում էր եկեղեցին ի շահ իր աշխարհիկ իշխանության: Քաղաքներից շատերում ընիկ քաղաքացիները դարձան տիրակալներ: Այդպես Իտալիան գրեթե ամբողջությամբ հայտնվեց պապի ու մի քանի հանրապետությունների իշխանության ներքո. Սակայն, իշխանության ղեկի մոտ կանգնած հոգևորականներն ու քաղաքացիները զենքի հետ գործ չէին ունեցել և սկսեցին ծառայության հրավիրել վարձկաններին: Ալբերիգո դա Կոնիոն, որը ծնունդով Ռոմանիայից էր, առաջինը փառաբանեց վարձու զենքը: Նրա հետևորդներ Բրաչչոն և Սֆորցան ժամանակին իրենց ձեռքում էին պահում ամբողջ Իտալիան Նրանց հետքերով գնացին բոլոր նրանք, ում ձեռքի տակ են առ այսօր վարձկան զորքերը: Նրանց «քաջությունը» հանգեցրեց այն բանին, որ Իտալիան ծայրից ծայր կտրեց-անցավ Կարլը, ամայացրեց Լյուդովիկոսը, ոտնակոխ արեց Ֆերդինանդն

ու անարգեցին չվեյցարացիները.

Վարձկաններն սկսեցին նրանից, որ իրենց մեծարելով, ամենուրեք նվաստացրին հետևակը։ Դա նրանց պետք էր, քանի որ ապրելով զինվորական արհեստով և տիրույթներ չունենալով, չէին կարող կերակրել մեծաքանակ հետևակին, իսկ փոքրաթիվ հետևակը չէր կարող նրանց փառք բերել։ Մինչդեռ, փոքրաքանակ հեծելազորով սահմանափակվելու դեպքում նրանք և կուշտ էին և հարգված: Բանը հասավ նրան, որ քսանհազարանոց բանակում հետևակ զինվորների թիվը երկու հազարի էլ չէր հասնում։ Հետագայում նրանք անսովոր հնարագիտություն դրսևորեցին՝ իրենց և զինվորներին վտանգից ու զինվորական կյանքի դժվարություններից զերծ պահելու համար. բախումների ժամանակ նրանք մեկմեկու չեն սպանում, այլ գերի են վերցնում՝ փրկագին չպահանջելով։ Պաշարման ժամանակ գիշերը գրոհի չեն ելնում։ Քաղաքը պաշտպանելիս վրանների վրա հարձակումներ չեն գործում, ռազմաճամբարը ցցերով ու խրամատներով չեն շրջափակում, ձմռանը պատերազմական գործողություններ չեն ձեռնարկում: Եվ այդ ամենը

նրանց թույլատրվում է իրենց իսկ հորինած զինվորական կանոնադրությամբ, որով ղեկավարվելով, ինչպես ասացինք, խուսափում են զինվորական կյանքի վտանգներից ու դժվարություններից՝ Ահա այդպես, նրանք Իտալիան մատնեցին խայտառակության ու ստրկության.

## ԳԼՈՒԽ XIII
## Դաշնակցային, խառը և սեփական զորքերի մասին

Դաշնակցային զորքերն անօգուտ զորքերի տարատեսակներից են, որոնք պատկանելով ուժեղ տիրակալի, այլոց կողմից հրավիրվում են օգնության և պաշտպանության համար. Ոչ այնքան վաղուց այդ զորքերի ծառայությունից օգտվեց Հուլիոս պապը Ֆեռարայի դեմ պատերազմելիս հիասթափվելով իր վարձկաններից, նա Իսպանիայի թագավոր Ֆերդինանդի հետ պայմանավորվեց, որ վերջինս օգնի հեծելազորով ու հետևակով: Այդ զորքերն ինքնին կարող են իրենց տիրակալին գերազանց ու օգտավետ ծառայություն մատուցել, բայց օգնության համար նրանց դիմելը հղի է վտանգավոր հետևանքներով, քանզի նրանց պարտությունը

կարող է տիրակալի կործանման, իսկ հաղթանակը կախվածության պատճառ դառնալ.

Ջնայած պատմական աշխատություններում կարելի է բազմաթիվ նմանատիպ օրինակների հանդիպել, այնուամենայնիվ, ես կուզենայի կանգ առնել Հուլիոս պապի հետ կապված վերոհիշյալ օրինակի վրա: Նա ծայրաստիճան անհեռատես գտնվեց, Ֆեռարան նվաճելու համար դիմելով օտարերկրացի տիրակալի. Եվ կարող էր պատժվել իր թեթևամիտ քայլի համար, եթե, ի բարեբախտություն նրա, ճակատագիրն այլ կերպ չտնօրիներ՝ Նրա դաշնակցային զորքերը պարտություն կրեցին Ռավեննայում, բայց շնորհիվ այն բանի, որ անսպասելիորեն հայտնվեցին շվեյցարացիներն ու փախուստի մատնեցին հաղթողներին, պապը կախվածության մեջ չընկավ ոչ թշնամուց, որովհետև նա փախավ, ոչ էլ դաշնակիցներից, որովհետև հաղթանակը ձեռք էր բերվել ոչ նրանց զենքով: Ֆլորենցիացիները, զորք չունենալով, Պիզայի դեմ դուրս բերեցին տասը հազար ֆրանսիացի, ինչը քիչ էր մնում նրանց համար շատ ավելի ահավոր աղետի պատճառ դառնար, քան մինչ այդ նրանց հետ երբևէ պատահել էր: Կոնստանդ-

նուպոլսի կայսրը, հարևանների հետ պատերազմելով, տասը հազար թուրք կանչեց Հունաստան, ովքեր պատերազմի ավարտից հետո չցանկացան վերադառնալ տուն, ահա թե ինչպես սկսվեց անհավատների կողմից Հունաստանի ստրկացումը՝

Եվ այսպես, թող դաշնակցային զորքեր հրավիրի նա, ում հաղթանակ պետք չէ, քանզի այդ զորքերը վարձկաններից ավելի վտանգավոր են և կարող են դառնալ հրավիրողի գերեզմանափորը: Նրանք գործում են միասնաբար և ենթարկվում են միայն իրենց տիրակալին, իսկ վարձու զորքերին հաղթանակից հետո և՛ ավելի երկար ժամանակ և՛ ավելի բարենպաստ հանգամանքներ են պետք քեզ վնասելու համար: Նրանց շարքերում պակասում է միասնությունը, նրանց դու ես հավաքել ու վճարել, և նա, ում կարգել ես նրանց ղեկավար, չի կարող միանգամից այնքան հզորանալ, որ դառնա քո ախոյանը. Կարճ ասած, վարձու զորքերում վտանգավոր է անփութաջանությունը, դաշնակցային զորքերում՝ քաջությունը:

Այդ իսկ պատճառով, խելացի տիրակալները միշտ գերադասել են ունենալ իրենց զորքը՝ հա-

մոգված լինելով, որ ավելի լավ է պարտություն կրել սեփական զորքով, քան հաղթել ուրիշի զորքի օգնությամբ, քանզի կատարյալ չէ այն հաղթանակը, որը ձեռք է բերվել ուրիշի զենքով։ Առանց տատանվելու դարձյալ կվկայակոչեմ Չեզարե Բորջայի օրինակը. Սկզբում, երբ դուքսը դեռ նոր էր մտել Ռոմանիա, նրա տրամադրության տակ էր ֆրանսիական հեծելազորը, որի օգնությամբ նա գրավեց Իմոլան և Ֆորլին: Ավելի ուշ, նա հասկացավ, թե որքան անհուսալի են դաշնակցային զորքերն ու գտնելով, որ իր համար վարձկանները նվազ վտանգավոր կլինեն, օգտվեց Օրսինիի և Վիտելիի ծառայություններից։ Բայց, տեսնելով, որ նրանք փոփոխամիտ են և կարող են դավաճանել, ազատվեց նրանցից ու ստեղծեց սեփական զորք: Թե զորքերի այդ բոլոր տեսակներից որն էր գերադասելի՝ դժվար չէր հասկանալ, տեսնելով, թե ինչպես փոխվեց դքսի նկատմամբ եղած վերաբերմունքը, երբ նրա մոտ միայն ֆրանսիացիներն էին, հետո՝ Օրսինիի ու Վիտելիի վարձկան զորքերը, և վերջապես՝ սեփական զորքը. Թեև դքսի նկատմամբ հարգանքը շարունակ աճում էր, այնուամենայնիվ, նրա հետ ամե-

նայն լրջությամբ սկսեցին հաշվի նստել միայն այն բանից հետո, երբ տեսան իր զորքն ունի:

Ես մտադիր էի չշեղվել ոչ վաղ անցյալում Իտալիայում տեղի ունեցած դեպքերից, բայց բերեմ նաև Հիերոն Սիրակուզացու օրինակը, քանի որ նրան վերևում արդեն հիշատակել եմ· Քաղաքացիների կամոք դառնալով, ինչպես ասվեց, Սիրակուզայի զորքերի պետ, նա շատ շուտ գլխի ընկավ, որ վարձու զորքի տված օգուտը չնչին է, որովհետև այն ժամանակվա կոնդոտիերները հիմիկվաններից գրեթե չէին տարբերվում· Եվ հասկանալով, որ նրանց չի կարելի ոչ վռնդել, ոչ էլ պահել, հրամայեց կոտորել և այդ ժամանակից ի վեր ապավինում էր միմիայն իր զորքին: Հիշեցնեմ նաև մի շատ տեղին պատմություն Հին կտակարանից երբ Դավիթը մենամարտի կանչեց փղշտացի հսկա Գողիաթին, Սավուղը, Դավթին քաջալերելու համար նրան հագցրեց իր հանդերձները, սակայն սա հրաժարվեց դրանցից, պատճառաբանելով, որ իրեն կաշկանդված է զգում ուրիշի զենքուզրահի մեջ, և, որ գերադասում է թշնամու դեմ գնալ սեփական պարսատիկով ու մահակով. Միշտ էլ այդպես է լինում՝ ուրիշի զրահները

կամ լայն են, կամ նեղ, կամ էլ՝ շատ ծանր.

Լյուդովիկոս XI-ի Հայրը՝ Կարլ VII-ը, բարեհաճ ճակատագրի և խիզախության շնորհիվ անգլիացներից Ֆրանսիան ազատագրելով, հասկացով, թե որքան անհրաժեշտ է զինված լինել սեփական զենքով և հրամայեց ստեղծել մշտական հեծելազոր ու հետևակ: Ավելի ուշ, նրա որդին՝ Լյուդովիկոսը, արձակեց հետևակն ու ծառայության վերցրեց շվեյցարացիներին: Այս սխալն ավելի խորացրին նրա հետնորդները, և հիմա դա թանկ է նստում ֆրանսիական թագավորության վրա Որովհետև, գերադասությունը շվեյցարացիներին տալով, Ֆրանսիան կոտրեց իր զորքերի մարտական ոգին: Հետևակի լուծարումից հետո, վարձկան զորքի աջակցությամբ կռվող հեծելազորն արդեն վստահ չէ, որ կարող է սեփական ուժերով ճակատամարտ շահել. Ստացվում է այնպես, որ շվեյցարացիների դեմ ֆրանսիացիները չեն կարող կռվել, իսկ առանց շվեյցարացիների ուրիշների դեմ՝ չեն համարձակվում· Հետևաբար, Ֆրանսիայի զորքերը խառն են՝ մասամբ սեփական, մասամբ՝ վարձու և այդ տեսքով մեծապես գերազանցում են ամբողջությամբ վերցված դաշ-

նակցային կամ ամբողջությամբ վերցված վարձու զորքին, բայց մեծապես զիջում են սեփական զինվորներից կազմված զորքին։ Սահմանափակվեմ արդեն հայտնի օրինակով. Ֆրանսիան անհաղթելի կլիներ, եթե կատարելագործեր կամ թեկուզ պահպաներ Կարլի օրոք ստեղծված զորքի կառուցվածքը։ Բայց մարդիկ անխելքության պատճառով հաճախ գեղեցիկ պաճուճանքի մեջ թույնը չեն տեսնում, ինչպես վերևում արդեն ասել եմ թոքախտային տենդի առիթով.

Եթե տիրակալի ուշադրությունից վրիպել է խորացող ախտը, ուրեմն նա մեծ խելքի տեր չէ, քանզի ժամանակին այն նկատելը տրված է քչերին: Խորհելով Հռոմեական կայսրության անկման մասին, տեսնում ենք, որ նրա անկումն սկսվեց այն պահից երբ, հռոմեացիներն սկսեցին ծառայության վերցնել վարձկան գոթերին, ինչից էլ սկսվեց կայսրության ուժերի հյուծումը. Ընդ որում, որքան թուլանում էին հռոմեացիները, այնքան ուժեղանում էին գոթերը. Իբրև եզրափակում կրկնում եմ, որ առանց սեփական զորքի պետությունն անկայուն է, ավելին, այն ամբողջովին կախված է ճակատագրի

*քմահաճույքից, որովհետև օրհասի ժամին միայն քաջությամբ չես պաշտպանվի: Իմաստուն մարդկանց կարծիքով ու գնահատմամբ* «Qund nıhıl sıt tam ınfirmum aut ınstabıle, quam fama potentıae non sua vı nıxa»[1]: *Սեփական զորքերն ըստ էության կազմվում են հպատակներից, քաղաքացիներից կամ հավատարիմ մարդկանցից, իսկ մնացած բոլորը կամ դաշնակցային են կամ վարձու: Իսկ թե դրանք ինչպես պետք է կառուցել՝ դժվար չէ եզրակացնել, եթե քննենք հիշատակածս այն չորս անձանց գործունեությունը և տեսնենք, թե ինչպես էին ստեղծում և զինում իրենց բանակները Ալեքսանդր Մակեդոնացու հայրը՝ Փիլիպոսը և շատ այլ հանրապետականներ ու տիրակալներ, որոնց օրինակն ինձ համար լիովին վստահելի է:*

---

*1 Չկա ոչինչ ավելի անկայուն ու վաղանցիկ, քան հմայքը, որը հենված չէ սեփական ուժի զորության վրա (լատ.)*

## ԳԼՈՒԽ XIV
## Ինչ պետք է անի տիրակալը ռազմական գործի առնչությամբ

*Այսպիսով, տիրակալը չպիտի ունենա այլ մտքեր, այլ հոգսեր ու այլ գործեր պատերազմից, ռազմական որոշումներից ու ռազմական գիտությունից բացի, որովհետև պատերազմը միակ պարտականությունն է, որը նա չի կարող ուրիշին հանձնարարել Պատերազմելու արվեստն օժտված է այնպիսի զորությամբ, առանց որի չի կարող իշխանությունը պահպանել նա, ով տիրակալ է ծնվել, և իշխանության հասնել հասարակ մահկանացու ծնվածը. Եվ, ընդհակառակն, երբ տիրակալներն ավելի շատ հաճույքների մասին են հոգացել, քան զինավարժությունների, կորցրել են նաև ունեցած իշխանությունը Համահրանքն այդ արվեստի նկատմամբ իշխանությունը կորցնելու գլխավոր պատճառն է, մինչդեռ դրան տիրապետելը՝ իշխանության հասնելու գրավականը:*

*Ֆրանչեսկո Սֆորցան հմուտ ռազմիկ լինելու շնորհիվ դարձավ Միլանի դուքս, իսկ նրա զավակները, պատերազմի դժվարություններից*

խուսափելով, կորցրին դքսի տիտղոսը Ով ռազմական արվեստին չի տիրապետում, շատ փորձություններ է բերում իր գլխին, և մասնավորապես արժանանում է շրջապատի արհամարհանքին: Դրանից պետք է ամեն կերպ զգուշանալ, ինչպես կասվի ստորև Որովհետև, զինվածն ու անզենը իրար հետ անհամատեղելի են, և երբեք զինվածը հոժար կամքով չի ենթարկվի անզենին, իսկ անզենը երբեք ապահով չի զգա զինված ծառաների շրջապատում: Ինչպե՞ս կարող են երկու մարդ հաշտ ու խաղաղ ապրել, եթե նրանցից մեկը կասկածում է մյուսին, իսկ սա էլ նրան ատում է Այդպես էլ այն տիրակալը, ով գլուխ չի հանում ռազմական գործից, շատ անախորժությունների է հանդիպում, որոնցից մեկն էլ այն է, որ չի վայելում զորքի հարգանքն ու իր հերթին՝ չի կարող նրան վստահել

Ուստի, տիրակալի մտքով անգամ չպիտի անցնի աչքաթող անել զինավարժությունները և խաղաղ օրերին դրանց պիտի ավելի մեծ ուշադրություն հատկացնի, քան պատերազմի ժամանակ. Դա պետք է անել նախ գործերով, և ապա՝ այդ մասին անընդհատ մտածելով. Ինչ

վերաբերում է գործերին, ապա տիրակալը պետք է ոչ միայն հետևի զորքում տիրող կարգուկանոնին ու զինավարժություններին, այլև հաճախ ինքն էլ որսի դուրս գա՝ մարմինը կոփելու և միաժամանակ տեղանքն ուսումնասիրելու համար, պարզելու, թե որտեղ և ինչ բարձունքներ կան, դեպի ուր են ձգվում դաշտավայրերը, ինչ տարածք են զբաղեցնում տափարակները, ինչ առանձնահատկություններ ունեն գետերն ու ճահիճները. Այսպես ուսումնասիրելը կրկնակի օգտակար է՝ Ամենից առաջ, դրա շնորհիվ ավելի լավ ես ճանաչում քո երկիրը և կարող ես ավելի ստույգ որոշել, թե ինչ միջոցներով այն պաշտպանես. Ընդսմին, քաջածանոթ լինելով տեղանքներից մեկին, մյուսի առանձնահատկությունները հեշտությամբ ես հասկանում՝ առաջին անգամ այնտեղ ընկնելով, քանզի լեռնալանջերը, դաշտավայրերը, հարթավայրերը, ճահիճներն ու գետերը, ենթադրենք Տոսկանայում, հար և նման են մյուս երկրամասերի բնաշխարհին, ուստի նա, ով ուսումնասիրել է տեղանքից մեկը, արագորեն կկողմնորոշվի մնացած տեղերում: Եթե տիրակալի համար այս ամենը խորթ է, ապա նա զուրկ է

զորապետի գլխավոր հատկությունից, քանզի հենց նշվածի լավ իմացությունն է թույլ տալիս առավելություն ստանալ այնպիսի հարցերում, ինչպիսիք են թշնամու գտնվելու վայրը որոշելը, ռազմաճամբար խփելը, թշնամուն մոտենալը, կռվի մեջ մտնելն ու ամրոցներ պաշարելը.

Աքայան դաշինքի պարագլուխ Փիլոպեմենեսին անտիկ հեղինակները շատ գովեստներ են շռայլել մասնավորապես այն բանի համար, որ նա խաղաղ ժամանակ էլ ռազմական գործից բացի ուրիշ ոչ մի բանի մասին չի մտածել. Ընկերների հետ քաղաքի մերձակայքում շրջելիս, նա հաճախ է կանգ առել ու հարցրել. եթե թշնամին գրավի այն բլուրը, իսկ մեր զորքն այստեղ կանգնած լինի ապա՞ ում դիրքն է գերադասելի, այդ պայմաններում ինչպե՞ս հարձակվել պահպանելով մարտակարգը, ինչպե՞ս նահանջել, եթե մեզ հարկադրեն նահանջել, ինչպե՞ս հետապնդել հակառակորդին, եթե նա փախուստի դիմի: Եվ այսպես, առաջ չարժվելով, առաջարկում էր պատերազմի ժամանակ հանդիպող նորանոր իրավիճակներ և ընկերների կարծիքը լսելով, իր կարծիքն էր հայտնում ու դրա օգտին փաստարկներ բերում Այսպես,

մշտական դատողությունների շնորհիվ նա հասել է այն բանին, որ պատերազմի ժամանակ ոչ մի պատահականություն իրեն անակնկալի չբերի՝

Ինչ վերաբերում է մտավարժանքներին, ապա տիրակալը պետք է կարդա պատմական աշխատություններ, ընդսմին, խորությամբ ուսումնասիրի ականավոր զորավարների գործունեությունը, փորձի ըմբռնել, թե ինչպես են նրանք պատերազմել, ինչն է կանխորոշել նրանց հաղթանակներն ու ինչը՝ պարտությունները, որպեսզի հասնի առաջիններին և խուսափի երկրորդներից Իսկ ամենագլխավորն է՝ ընդօրինակելով անցյալի մեծագույն հերոսներից շատերին, որպես օրինակ ընտրել հին ժամանակների փառապանծ ու հարգարժան մարդկանցից որևէ մեկին և հիշողության մեջ ամրակայել նրա սխրագործությունները. Պատմում են, որ Ալեքսանդր Մեծը ընդօրինակում էր Աքիլեսին, Կեսարը՝ Ալեքսանդրին, Սցիպիոնը՝ Կյուրոսին: Ծանոթանալով Կյուրոսի վարքին, որը գրի է առել Քսենոփոնը, բոլորն էլ կհամաձայնվեն, որ Կյուրոսին ընդօրինակելով Սցիպիոնը շատ բանով է նպաստել իր փառքին, և, որ

ողջախոհության, բարեկրթության, մարդկայնության ու առատաձեռնության առումներով Սցիպիոնը հետևել է այն Կյուրոսին, որին մենք գիտենք Քսենոփոնի նկարագրածով Խելացի տիրակալը հետևելով նշյալ բոլոր կանոններին, խաղաղ ժամանակ պիտի երբեք անգործության չմատնվի, քանզի նրա բոլոր ջանքերը կփոխհատուցվեն, երբ վրա հասնեն դժվար ժամանակներ, և այդժամ, եթե ճակատագիրը կամենա նրան խորտակել, նա ի զորու կլինի դիմակայել այդ հարվածներին.

## ԳԼՈՒԽ XV
## Թե ինչու են մարդկանց և մասնավորապես տիրակալներին գովաբանում կամ նախատում

Այժմ մնում է քննել, թե տիրակալն ինչպես պիտի իրեն պահի հպատակների և դաշնակիցների հետ Տեղյակ լինելով, որ այդ մասին շատերն են գրել, ես վախենում եմ մեծամտության մեջ մեղադրվելուց, քանզի միևնույն նյութը պիտի բացատրեմ ուրիշներից մեծապես տարբերվելով· Սակայն մտքիս դրած լինելով հասկացող մարդկանց համար մի օգտակար բան

գրել, նախընտրեցի հետևել ոչ թե կարծեցյալ, այլ իրական ճշմարտությանը, ի տարբերություն այն գրչակների, ովքեր հանրապետություններ ու պետություններ են նկարագրել՝ իրականության փոխարեն մատուցելով ցանկալին: Բայց այնքան մեծ է այն հասկացությունների միջև եղած տարբերությունը, թե մարդիկ ինչպես են ապրում և ինչպես պիտի ապրեն, որ նա, ով հանուն պատշաճի մերժում է իրականը, իրեն ավելի շատ վնաս է տալիս, քան օգուտ, որովհետև ցանկանալով բարի մնալ կյանքի բոլոր հանգամանքներում, նա անխուսափելիորեն կկործանվի՝ բախվելով շատ շատերի հետ, ովքեր չգիտեն, թե ինչ ասել է բարություն: Ինչից էլ հետևում է, որ իշխանությունը պահպանել ցանկացող տիրակալը, պետք է ձեռք բերի բարուց հրաժարվելու հմտություն և այն կիրառի ըստ անհրաժեշտության:

Իսկ եթե խոսենք տիրակալների ոչ թե մտացածին, այլ իրական հատկությունների մասին, ապա պետք է ասել, որ տիրակալների և ընդհանրապես բոլոր արտոնյալ մարդկանց մեջ, տեսնում ենք բնավորության զանազան գծեր, որոնք արժանի են գովեստի կամ նախատինքի.

Մասնավորապես ասում են, որ մեկն առատաձեռն է, մյուսը՝ ժլատ, եթե գործածենք տոսկանական բառը, որովհետև մեր լեզվում դա նաև նշանակում է ագահ. դա այն մարդն է, ով ուզում է նաև ուրիշինը խլել, իսկ «կծծի» անվանում ենք նրան, ով շատ ամուր է կառչում իր ունեցվածքին,-մեկը վատնող է, մյուսն՝ ձեռնփակ, մեկը դաժան է, մյուսը գթասիրտ, մեկն ազնիվ է, մյուսը՝ ուխտադրուժ, մեկը ստոր է ու փոքրոգի, մյուսն արիասիրտ է ու համարձակ, սա ներողամիտ է, նա՝ ամբարտավան, այս մեկն անառակ է, մյուսը՝ ողջամիտ, սա խորամանկ է, նա՝ պարզամիտ, սա համառ է, նա համակերպվող, սա թեթևամիտ է, նա՝ ծանրաբարո, սա բարեպաշտ է, նա՝ սրբապիղծ,- և այսպես շարունակ. Ի՞նչը կարող է տիրակալի համար ավելի գովելի լինել, քան այն, որ նա իր մեջ անձնավորի թվարկյալ բոլոր առաքինությունները: Բայց, քանի որ մարդն իր էությամբ չի կարող կազմված լինել միայն առաքինություններից, ոչ էլ կարող է անշեղորեն հետևել դրանց, ապա խելամիտ տիրակալը պետք է խուսափի այն արատներից, որոնք կարող են նրան զրկել իշխանությունից, իսկ մնացածներից ուժերի նե-

*րածին չափով ձեռնպահ մնա, բայց՝ ոչ ավելին Թող տիրակալները չվախենան այնպիսի արատների համար մեղադրանքներ լսելուց, առանց որոնց դժվար կլինի պահպանել իշխանությունը, որովհետև, եթե խորը մտածենք, շատ գործեր կան, որոնք առաջին հայացքից կարող են առաքինի թվալ, բայց իրականում կործանարար են տիրակալի համար, և, ընդհակառակը, թվում է արատ է, բայց գործնականում տիրակալին բարօրություն ու անվտանգություն է բերում*

## ԳԼՈՒԽ XVI
## Առատաձեռնության և խնայողության մասին

*Սկսեմ առաջինից և ասեմ, որ առատաձեռն տիրակալի համբավ ունենալը լավ բան է· Այնուամենայնիվ, նա, ով անուն վաստակելու համար է առատաձեռնություն ցուցաբերում, ինքն իրեն վնասում է Քանզի, եթե դա անես խոհեմաբար ու համեստորեն, դրա մասին ոչ ոք չի իմանա, իսկ քեզ, միևնույնն է, կմեղադրեն ժլատության մեջ. Այդ իսկ պատճառով, քո առատաձեռության համբավը տարփողելու համար, պիտի ստիպված լինես ավելի ու ավելի մեծ*

հնարամտության դրսևորել՝ անիմաստ ձեռնարկումներ իրականացնելու նպատակով, ինչի հետևանքով գանձարանը կդատարկվի, որից հետո, չցանկանալով ձեռք քաշել առատաձեռն տիրակալի համբավից, ստիպված կլինես ժողովրդին ծանրաբեռնել չափից ավելի մեծ տուրքերով և դիմել փող կորզելու անվայել միջոցների, ինչով հպատակներիդ մեջ շարունակ աճող ատելություն կհարուցես քո հանդեպ, իսկ ժամանակի ընթացքում, երբ քո առատաձեռնության պատճառով շատերին կաղքատացնես, իսկ ոմանց էլ բարերարություն արած կլինես, առաջին իսկ դժվարությունը քեզ համար կդառնա աղետ, առաջին իսկ վտանգը՝ խորտակում Իսկ եթե ժամանակին սթափվես ու կամենաս գործերդ կարգի բերել, քեզ իսկույն կմեղադրեն ժլատության մեջ·

Եվ այսպես, եթե տիրակալը չի կարող առանց իրեն վնասելու առատաձեռնություն դրսևորել այնպես, որ դա ընկալվի հարկ եղածին պես, ապա խելամիտ չի՞ լինի արդյոք հաշտվել ժլատ տիրակալի համբավի հետ· Քանզի ժամանակի ընթացքում, երբ մարդիկ տեսնեն, որ խնայողության շնորհիվ նա բավարար-

վում է իր եկամուտներով և ռազմական գործողություններ ձեռնարկելով ժողովրդին լրացուցիչ հարկերով չի ծանրաբեռնում, կհամոզվեն, որ գործ ունեն առատաձեռն տիրակալի հետ: Եվ նա, իրոք, առատաձեռն կհամարվի բոլոր նրանց կարծիքով, որոնցից ոչինչ չի խլել, իսկ այդպիսիք մեծամասնություն են կազմում, և ժլատ՝ նրանց բոլորի, ում կարող էր հարստացնել, իսկ այդպիսիք հատուկենտ են. Մեր օրերում միայն այն տիրակալներին է հաջողվել մեծ գործեր կատարել, ովքեր ժլատ են համարվել, մյուսներն անհիշատակ կորել են: Հուլիոս պապը ցանկանում էր առատաձեռն համարվել միայն մինչև այն պահը, քանի դեռ պապական իշխանության չէր հասել, որից հետո, պատերազմի նախապատրաստվելով, իսպառ մոռացավ առատաձեռնության մասին: Ֆրանսիայի ներկայիս թագավորը մի քանի պատերազմ վարեց առանց արտակարգ հարկեր մտցնելու միայն այն բանի շնորհիվ, որ կանխատեսելով լրացուցիչ ծախսերը, հույժ խնայողություն էր դրսևորել: Իսպանիայի ներկայիս թագավորն այդքան պատերազմներ չէր մղի և չէր հաղթի, եթե նրա համար որևէ արժեք ունենար առատա-

ձեռն տիրակալի համբավը

Եվ այսպես, հպատակներին չթալանելու, պաշտպանության համար միջոցներ ունենալու, չաղքատանալու, արհամարհանքի չարժանանալու և ակամա ագահ չդառնալու համար տիրակալը պետք է չվախենա ժլատի անուն վաստակելուց, քանզի ժլատությունն այն արատներից է, որը նրան թույլ կտա իշխել։ Եթե ինձ ասեն, որ Կեսարն իր ճանապարհը հարթել է առատաձեռնությամբ և ուրիշ շատերն էլ այն բանի շնորհիվ, որ եղել ու համարվել են առատաձեռն, հասել ամենաբարձր աստիճանների, ես կպատասխանեմ՝ կամ դու հասել ես իշխանության, կամ դրան հասնելու ճանապարհին ես։ Առաջին դեպքում առատաձեռնությունը վնասակար է, երկրորդում՝ անհրաժեշտ. Կեսարը Հռոմում բացարձակ իշխանություն ձեռք բերելու ճանապարհին էր, ուստի առատաձեռնությունը չէր կարող նրան վնասել, բայց նրա իշխանությունը կտապալվեր, եթե դրան հասնելով նա ավելի երկար ապրեր՝ չչափավորելով ծախսերը։ Իսկ, եթե ինձ առարկեն, ասելով, թե շատերն արդեն տիրակալ լինելով զորքերի գլուխն անցած մեծ գործեր են կատարել, ընդսմին, համարվելով ան-

չափ առատաձեռն, ես դրան կպատասխանեմ, որ կարելի է ծախսել կամ քոնը, կամ ուրիշինը Առաջին դեպքում դերադասելի է տնտեսել, երկրորդում՝ հնարավորինս առատաձեռն լինել:

Եթե ձեռքիդ տակ զորք կա, որը կերակրվում է ռազմավարով, կողոպուտով, շորթումներով և ուրիշի բարիքով, պետք է անպայման առատաձեռն լինել, այլապես զինվորները քեզ չեն հետևի· Եվ միշտ այն ունեցվածքը, որը քոնը կամ քո հպատակներինը չէ, կարող ես ամենայն առատաձեռնությամբ բաշխել, ինչպես արել են Կյուրոսը, Կեսարն ու Ալեքսանդրը, որովհետև ուրիշինը շռայլելով, դու քեզ համար համբավ ես ստեղծում, մինչդեռ քոնը շռայլելով՝ միայն վնասում ես: Ոչ մի բան քեզ այնպես չի սպառում, որքան առատաձեռնությունը, ինչը դրսևորելով միաժամանակ կորցնում ես նաև այն դրսևորելու հնարավորությունը և կամ ընկնում արհամարհանք ծնող աղքատության գիրկը, կամ էլ ցանկանալով աղքատությունից խուսափել, սնանկացնում ես ուրիշներին, ինչով ատելություն ես հարուցում քո հանդեպ: Մինչդեռ տիրակալն ամենից ավելի պետք է զգուշանա հպատակների արհամարհանքից ու ատելու-

թյունից, իսկ առատաձեռնությունը տանում է թե՛ դեպի մեկը, թե՛ դեպի մյուսը: Ուստի, ավելի խելամիտ կլինի ժլատ համարվելով վատ համբավ ունենալ՝ առանց ատելի լինելու, քան թե կամենալով առատաձեռն համարվել և այդ պատճառով ուրիշներին ակամա սնանկացնելով, միաժամանակ արժանանալ և՛ վատ համբավի, և՛ ատելության:

## ԳԼՈՒԽ XVII
## Դաժանության ու գթասրտության և այն մասին, թե ինչ ներշնչես, որ ավելի լավ լինի՝ սե՞ր, թե՞ վախ

Քննելով վերոհիշյալ հատկությունները, կասեմ, որ թեև յուրաքանչյուր տիրակալ կուզենար, որ իրեն գթասիրտ համարեն և ոչ թե դաժան, այնուամենայնիվ, չպիտի չարաշահել գթասրտությունը. Զեզարե Բորջային շատերն էին դաժան համարում, բայց այդ դաժանությամբ նա կարգուկանոն հաստատեց Ռոմանիայում, միավորեց այն, խաղաղեցրեց ու հնազանդության բերեց: Ու, եթե խորը մտածենք, դրանով նա ավելի մեծ գթասրտություն ցուցաբերեց, քան Ֆլորենցիայի ժողովուրդը, որը վախե-

*նալով դաժանության մեջ մեղադրվելուց, թույլ տվեց ավերել Պիստոյան: Ուստի, հպատակներին հնազանդ պահելու համար տիրակալը պիտի պատրաստ լինի դաժանության պատճառով իրեն ուղղվելիք մեղադրանքներին: Մի քանի հաշվեհարդար կազմակերպելով, նա ավելի մեծ գթասրտություն կդրսևորի, քան նրանք, ում ավելորդ գթասրտության պատճառով անկարգություններ են սկսվում: Քանզի անկարգության հետևանքով, որը կողոպուտների ու սպանությունների պատճառ է դառնում, տուժում է ամբողջ բնակչությանը, մինչդեռ տիրակալի վճռով իրագործվող պատիժներից տուժում են սոսկ հատուկենտ մարդիկ: Նոր տիրակալին դաժանության համար ավելի քիչ են մեղադրում, քան որևէ մեկ այլ մարդու, քանզի նոր իշխանությանը շատ վտանգներ են սպառնում: Վերգիլիոսը Դիդոնայի բերանով ասում է.*

Rea dura, et regni novitas me talia cogunt
Moliri et late fines custode tueri[1]

---

*1 «Երիտասարդ է մեր թագավորությունը, մեծ է վտանգը, միայն դա է ստիպում ինձ այդպես աչալրջորեն պաշտպանել մեր սահմանները» (լատ.)*

Սակայն նոր տիրակալը չպիտի լինի դյուրահավատ ու հապճեպ վճիռներ արձակի: Նա իրեն պետք է դրսևորի որպես զուսպ, շրջահայաց և ուղղամիտ իշխող, բայց այնպես, որ ավելորդ դյուրահավատությունը չվերածվի անզգուշության, իսկ ավելորդ կասկածամտությունը չչարացնի հպատակներին:

Այս առթիվ կարող է վեճ ծագել՝ տիրակալին սիրե՞լն է գերադասելի է, թե՞ նրանից վախենալը: Ասում են՝ լավն այն է, որ միաժամանակ և՛ սիրում են, և՛ վախենում: Սակայն սերը դժվարությամբ է համատեղվում վախի հետ, ուստի, եթե հարկադրված ենք ընտրություն կատարել, ապա վախը գերադասելի է: Որովհետև, մարդկանց մասին ընդհանրապես կարելի է ասել, որ նրանք երախտամոռ են ու փոփոխամիտ, կեղծավոր են ու խաբեբա, վախկոտ ու շահամետ: Քանի դեռ նրանց համար բարիք ես գործում, նրանք քոնն են ամբողջ հոգով, խոստանում են քեզ համար ոչինչ չխնայել, ոչ իրենց արյունը, ոչ կյանքը, ոչ երեխաներին, ոչ էլ ունեցվածքը, բայց երբ նրանց կարիքը զգաս, իսկույն երես կթեքեն քեզանից: Եվ վա՜յ այն տիրակալին, ով խոստումներին հավատ ընծայելով, ոչ մի միջոց

չի ձեռնարկի ընդդեմ վտանգի՝ Քանզի գնված և ոչ թե մեծահոգությամբ ու ազնվությամբ ձեռք բերված բարեկամությունը փորձության պահին քեզ նեցուկ չի լինի: Բացի դրանից, մարդիկ ավելի քիչ են զգուշանում վիրավորել նրան, ում սիրում են, քան նրան, ումից վախենում են, քանզի սերը գոյատևում է երախտագիտության շնորհիվ, ինչը մարդիկ, ապիկարության պատճառով կարող են հանուն իրենց շահի քամահրել, միշդեռ վախը կենսունակ է պատժի սպառնալիքով, որը քամահրել չես կարող:

Այսուհանդերձ, տիրակալը պետք է վախն այնպես ներշնչի, որ եթե սիրո էլ չարժանանա, ապա գոնե խուսափի ատելությունից, քանզի միանգամայն հնարավոր է վախ ներշնչել առանց ատելության: Ատելության չարժանանալու համար տիրակալը պետք է խուսափի քաղաքացիների ու հպատակների ունեցվածքի ու նրանց կանանց վրա աչք տնկելուց Նույնիսկ, երբ անհրաժեշտ է համարում որևէ մեկին կյանքից զրկել, ապա համապատասխան հիմնավորում ու ակնհայտ պատճառ լինելու դեպքում կարող է դա անել, բայց պետք է զգուշանա ուրիշի ունեցվածքը սեփականելուց, քանզի

հնարավոր է, որ մարդիկ քեզ ներեն իրենց հոր սպանությունը, բայց ունեցվածքի կորստի հետ հաշտվել չեն կարող Առավել ևս, որ ունեցվածքի առգրավման պատճառներ միշտ էլ կան, ու, եթե սկսես գռփել, ապա ուրիշինը յուրացնելու առիթ միշտ էլ կգտնվի, մինչդեռ որևէ մեկին կյանքից զրկելու հիմքերն անհամեմատ քիչ են և պատրվակ գտնելն՝ ավելի դժվար

Բայց, երբ տիրակալն իր տնօրինության տակ բազմահազարանոց զորք ունի, առավել ևս չպիտի անհանգստանա դաժան համարվելուց, քանզի, եթե դաժան մարդու համբավ չունենա, չի կարող պահպանել զորքի միասնությունն ու մարտունակությունը Հանիբալի զարմանալի գործերի թվում հիշատակում են նաև հետևյալը կռվելու համար օտար երկրներ ուղևորվելով, նա իր հսկայաքանակ ու բազմացեղ զորքը զերծ էր պահում խռովություններից ու գժտություններից՝ թե՛ հաղթանակի, թե՛ պարտության օրերին, ինչը կարելի է բացատրել միայն նրա անմարդկային դաժանությամբ, որը նրա խիզախության ու տաղանդի հետ միասին զորքին պատկառանք ու սարսափ էր ներշնչում Եթե նա դաժան չլիներ, նրա մյուս հատկու-

թյուններն էլ ըստ արժանվույն չէին գնահատվի: Մինչդեռ, պատմական աշխատությունների հեղինակները մի կողմից փառաբանում են բուն սխրանքը, մյուս կողմից՝ առանց խորը մտածելու՝ պարսավում այն ծնող գլխավոր պատճառը:

Թե որքանով է ճիշտ այն պնդումը, թե զորավարի համար բավական չէ օժտված լինել միայն խիզախությամբ ու տաղանդով, ցույց է տալիս Սցիպիոնի օրինակը, որը մի բացառիկ անձնավորություն էր ոչ միայն իր ժամանակակիցների, այլև ընդհանրապես բոլոր մարդկանց մեջ: Նրա զորքերը Իսպանիայում խռովություն բարձրացրին, քանի որ չափից ավելի մեղմաբարո լինելով, նա զինվորներին ավելի մեծ ազատություն էր տվել, քան թույլատրելի էր զինվորական կանոնադրությամբ: Հենց այս հատկության համար էլ Ֆաբիոս Մաքսիմուսը սենատում նրան անվանեց Հռոմեական զորքի ապականիչ: Խստակամության նույն այդ պակասի պատճառով Սցիպիոնը չպաշտպանեց լոկրեցիներին[1]: Լսելով, որ իր լեգատներից մեկը թալա-

---

1 Հարավային Իտալիայում գտնվող հունական Լոկրի քաղաքի բնակիչներ (ծանոթ թարգմ.)

նում է նրանց, նա լեգատին չպատժեց անպատկառության համար: Իզուր չէ, որ սենատում, ցանկանալով նրան արդարացնել, մեկն ասել էր, թե նա պատկանում է մարդկանց այն տեսակին, ում համար ավելի հեշտ է սխալներ չգործել, քան սխալների համար պատժել ուրիշներին. ժամանակի ընթացքում Սցիպիոնի բնավորության այդ գծի պատճառով կարող էր տուժել նաև նրա բարի անունն ու մթագնվել փառքը, եթե նա գործեր միանձնյա: Բայց նա գտնվում էր սենատի իշխանության ներքո, ուստիև նրա բնավորության այդ գծերը ոչ միայն աղետաբեր հետևանքներ չունեցան, այլև ավելի մեծ փառք բերեցին նրան:

Եվ այսպես, վերադառնալով այն վեճին, թե տիրակալին սիրե՞լն է գերադասելի, թե՞ նրանից վախենալը, կասեմ, որ տիրակալներին սիրում են սեփական հայեցողությամբ, բայց վախենում են տիրակալների հայեցողությամբ, ուստի խելացի տիրակալը պետք է հույսը դնի այն բանի վրա, ինչն իրենից է կախված և ոչ թե ուրիշից. Կարևորն այստեղ լոկ այն է, որ հպատակներիդ մեջ քո հանդեպ ատելություն չհարուցես, ինչպես ասվել է վերևում:

## ԳԼՈՒԽ XVIII
## Այն մասին, թե տիրակալներն ինչպես պիտի իրենց խոսքը պահեն

*Ավելորդ է ասել, թե որքան գովելի են տիրակալի խոստումնապահությունը, ուղղամտությունն ու բարեխղճությունը։ Սակայն, մենք փորձից գիտենք, որ մեր օրերում մեծ գործեր կատարել հաջողվել է միայն նրանց, ովքեր միշտ երդմնազանց են եղել և կարողացել են, ում որ պետք է մատների վրա խաղացնել։ Այդպիսի տիրակալները շատ ավելի մեծ հաջողություններին են հասել, քան նրանք, ովքեր գերադասել են ազնիվ լինել։*

*Պետք է գիտենալ, որ թշնամու դեմ կարելի է պայքարել երկու եղանակով. առաջին՝ օրենքներով, երկրորդ՝ ուժով. Առաջին եղանակը բնորոշ է մարդուն, երկրորդը՝ գազանին, բայց քանի որ առաջինը հաճախ անբավարար է, ապա ստիպված ենք լինում դիմել նաև երկրորդին։ Այստեղից հետևում է, որ տիրակալը պետք է յուրացնի այն, ինչը բնորոշ է և՛ մարդուն և՛ գազանին։ Արդյո՞ք այլաբանորեն սա չե՞ն մեզ հուշում անտիկ հեղինակները, պատ-*

մելով, թե ինչպես են Աքիլեսին ու Հնադարյան մյուս հերոսներին դաստիարակության տվել իմաստուն կենտավրոս Քիրոնին. Այլապես ո՞րն է որպես դաստիարակ կես մարդ-կես գազան ընտրելու իմաստը, եթե ոչ այն, որ տիրակալն իր մեջ պետք է համատեղի այդ երկու էությունները, քանզի մեկն առանց մյուսի բավականաչափ ուժ չունի

Այսպիսով, բոլոր գազաններից տիրակալը թող նմանվի երկուսին՝ առյուծին ու աղվեսին Առյուծը վախենում է թակարդներից, իսկ աղվեսը՝ գայլերից, ուրեմն պետք է աղվեսի նմանվել, որպեսզի կարողանաս թակարդները շրջանցել և առյուծի, որպեսզի գայլերին վախեցնես Միշտ առյուծի նմանվողը, կարող է չնկատել թակարդը Այդտեղից հետևում է, որ խելամիտ տիրակալը չի կարող և չպիտի հավատարիմ մնա խոստմանը, եթե դա վնաս է հասցնում իր շահերին և, առավել ևս, եթե արդեն վերացել են այն պատճառները, որոնք նրան հարկադրել են խոստում տալ Սույն խորհուրդը կարող էր անարժան համարվել, եթե մարդիկ ազնվորեն տեր կանգնեին իրենց խոսքին, բայց ապիկարության պատճառով նրանք դրժում են խոս-

տումը, ուստի դու էլ պիտի նրանց հետ նույն կերպ վարվես: Իսկ խոստումը խախտելու հարմար պատրվակ միշտ էլ կգտնվի. Դրա օրինակները բազմաթիվ են. որքա՜ն խաղաղության պայմանագրեր, որքա՜ն համաձայնություններ ուժի մեջ չմտնելով հող ու մոխիր են դարձրել միայն այն պատճառով, որ տիրակալներն իրենց խոսքին հավատարիմ չեն եղել, ընդ որում, միշտ շահել է նա, ով աղվեսի բնույթ է ունեցել: Սակայն այդ բնույթը պետք է նաև քողարկել կարողանալ: Պետք է հնարամտություն դրսևորել խաբելու և կեղծավորություն անելու գործում, թեև մարդիկ այնքան միամիտ են ու այնպես թաղված առօրյա հոգսերի մեջ, որ խաբողը միշտ էլ կգտնի նրան, ով թույլ կտա իրեն հիմարացնել:

Ժամանակի առումով մեզ մոտակա օրինակներից չեմ կարող չհիշել մեկը. Ալեքսանդր VI-ը ամբողջ կյանքում վարպետանում էր խաբեությունների մեջ, բայց նրան հավատացողներ միշտ էլ գտնվում էին· Ամբողջ աշխարհում չկար մեկը, որը կեղծ երդումներ տալով այդպես հավատացներ, այդպես համոզիչ ձևով խոստանար և այդքան քիչ մտահոգվեր խոս-

տումները կատարելու մասին. Այնուամենայ-նիվ, նրան միշտ հաջողվում էր իր ուզածի պես խաբել, որովհետև գիտեր նման գործելակերպի օգուտը. Սրանից հետևում է, որ տիրակալի հա-մար պարտադիր չէ օժտված լինել նշված բոլոր առաքինություններով, բայց հույժ անհրաժեշտ է ցույց տալ, որ օժտված է կհանդգնեմ ավե-լացնել, որ առաքինություններով օժտված լի-նելն ու անշեղորեն դրանց հետևելը վնասակար է, մինչդեռ այդպիսին երևալը՝ օգտակար. Այլ կերպ ասած, մարդկանց աչքում պետք է երևալ կարեկից, խոստումնապահ, գթասիրտ, անկեղծ, բարեպաշտ և իրականում լինել այդպիսին, բայց ներքուստ պետք է պատրաստ լինել անհ-րաժեշտության դեպքում դրսևորել նաև հակա-ռակը: Պետք է հասկանալ, որ տիրակալը, հատ-կապես նոր տիրակալը չի կարող կատարել այն ամենը, ինչը համապատասխանում է լավ մար-դու մասին մեր ունեցած պատկերացումներին, քանզի պետությունը պահպանելու համար նա հաճախ է ստիպված լինում երդմնազանց լինել՝ ընդամին, դրսևորելով անգթություն, դաժանու-թյուն ու անազնվություն· Ներքուստ նա պետք է միշտ պատրաստ լինի փոխել գործելակերպը,

եթե դեպքերն այլ ընթացք ստանան, կամ ճակատագրի քամին այլ ուղղությամբ փչի, այսինքն, ինչպես ասվել է, կարելվույն չափ չհեռանա բարուց, բայց հարկ եղած դեպքում չխորշի նաև չարից՝

Եվ այսպես, տիրակալը պետք է աչալրջորեն հետևի, որ բերանից այնպիսի մի խոստում չթռցնի, որը չի կարող կատարվել նշված հինգ առաքինություններով օժտված լինելու դեպքում: Իրեն տեսնողներին ու լսողներին նա թող ներկայանա իբրև համակ գթասրտություն, ուղղամտություն, մարդկայնություն ու բարեպաշտություն, հատկապես բարեպաշտություն: Որովհետև, մարդիկ մեծ մասամբ դատում են ըստ արտաքին հատկանիշների, քանզի տեսնել կարող են բոլորը, բայց ի մոտո զննել՝ քչերը. Ամեն մեկն էլ տեսնում է, թե դու ինչպիսին ես թվում, քչերն են զգում, թե իրականում ով ես դու, սակայն այս վերջինները չեն համարձակվի վիճարկել մեծամասնության կարծիքը, որի թիկունքին պետությունն է կանգնած: Օրենքից վեր կանգնած բոլոր մարդկանց, հատկապես, տիրակալների գործերի մասին դատում են ըստ արդյունքի, ուստի տիրակալները թող աշխա-

տեն պահպանել իշխանությունն ու հաղթանակ տանել: Այդ նպատակների համար ինչ միջոցներ էլ որ գործադրվեն, դրանք միշտ էլ կարդարացվեն ու կխրախուսվեն, քանզի ամբոխը հմայվում է լոկ արտաքին փայլից, իսկ աշխարհում ամբոխից զատ ուրիշ ոչինչ չկա՝ Փոքրամասնությունն այնտեղ ձայն չունի, որովհետև պետությունը կանգնած է մեծամասնության թիկունքին: Ներկայիս տիրակալներից մեկը, որի անունը չեմ ուզում տալ, շարունակ իրեն ցուցադրում է որպես խաղաղ և փոխվստահելի հարաբերությունների կողմնակից, մինչդեռ իրականում թե մեկ և թե մյուս սկզբունքի կատաղի թշնամին է, քանզի, եթե հետևեր իր որդեգրած կեցվածքին, ապա վաղուց զրկված կլիներ կամ հզորությունից կամ պետությունից:

## ԳԼՈՒԽ XIX
## Ինչպես խուսափել ատելությունից ու արհամարհանքից

Հիշյալ հատկություններից ամենակարևորները քննարկեցինք, իսկ ինչ վերաբերում է մյուսներին, ապա դրանց մասին կխոսեմ համառոտակի, խոհերս նախադրելով մի ընդհանուր

կանոնով: Տիրակալը, ինչպես վերևում մասնավորապես ասվել է, պետք է այնպիսի մի բան չանի, որով կարող է հարուցել հպատակների ատելությունն ու արհամարհանքը: Եթե դա հաջողվի, ուրեմն նա հասել է իր նպատակին և այլևայլ թերությունները չեն կարող նրան վնասել: Տիրակալներն ատելություն են հարուցում ընչաքաղցության և իրենց հպատակների ունեցվածքի ու կանանց վրա կատարած ոտնձգությունների պատճառով, որովհետև մարդկանց մեծամասնությունն իր վիճակից գոհ է այնքան ժամանակ, քանի դեռ չեն դիպել նրա արժանապատվությանը կամ գույքին, այնպես որ, եթե տիրակալը ժողովրդի համար ատելի չէ, նրանից դժգոհել կարող են լոկ հատուկենտ գոռոզամիտ մարդիկ, որոնց բերանը դժվար չէ փակել Տիրակալներն արհամարհանքի են արժանանում փոփոխամտության, թեթևամտության, փափկակեցության, փոքրոգության ու անվճռականության պատճառով: Այդ հատկություններից պետք է զգուշանալ, ինչպես կրակից, աշխատելով հակառակն անել՝ յուրաքանչյուր արարքի մեջ ներդնելով մեծահոգություն, անվեհերություն, լրջմտություն ու վճ-

ռականություն. Հպատակների անձնական գործերին վերաբերող տիրակալի վճիռները պետք է անբեկանելի լինեն՝ ստեղծելով այնպիսի կարծիք, որ ոչ մեկի մտքով անգամ չանցնի, թե կարելի է խաբել կամ խորամանկությամբ գերազանցել նրան: Իր անվան շուրջը նման կարծիք ստեղծած տիրակալին հարգանքով կվերաբերվեն, իսկ եթե լուր տարածվի, որ նա օժտված է ակնառու արժանիքներով ու վայելում է հպատակների հարգանքը, թշնամիները չեն հանդգնի նրա վրա հարձակվել, կամ նրա դեմ դավադրություն կազմակերպել: Քանզի տիրակալին երկու վտանգ է դարանակալում. մեկը ներքին՝ հպատակների կողմից, մյուսն՝ արտաքին՝ ուժեղ հարևանների կողմից: Արտաքին վտանգը կարելի է հաղթահարել լավ զորքի ու լավ դաշնակիցների օգնությամբ, ընդ որում, լավ զորք ունեցողը լավ դաշնակիցներ էլ կգտնի: Իսկ եթե արտաքին վտանգը հաղթահարվի, ապա երկրի ներսում էլ խաղաղություն կհաստատվի, եթե միայն գաղտնի դավադրություններ չնյութվեն: Բայց հարձակման դեպքում էլ տիրակալը պիտի չկորցնի արիությունը, քանզի, եթե գործի ասածիս համաձայն, կդիմակայի

ցանկացած թշնամու, ինչպես Նաբիդոս Սպարտացին, ում մասին պատմվել է վերևում։

Ինչ վերաբերում է հպատակներիդ, ապա, երբ դրսից վտանգ չկա, միակ բանը, որից պետք է զգուշանալ՝ գաղտնի դավերն են, որոնցից խուսափելու համար, ինչպես արդեն ասվել է, հպատակներիդ մեջ պիտի սեր ու հարգանք ներշնչես անձիդ նկատմամբ. Դավադրությունը կանխելու բոլոր միջոցներից ամենաստույգը ժողովրդի աչքում ատելի չլինելն է. Չէ որ դավադիրը միշտ հույս է տածում տիրակալին սպանելով գոհացնել ժողովրդին, բայց, եթե նա համոզված լինի, որ դրանով կշարժի ժողովրդի զայրույթը, կհրաժարվի իր մտադրությունից, քանզի անթիվ են այն դժվարությունները, որոնք ուղեկցում են ցանկացած դավադրությանը: Ինչպես փորձն է ցույց տալիս, դավադրություններ հաճախ են պատահել, բայց դրանցից քչերն են պսակվել հաջողությամբ. Իսկ դա բացատրվում է նրանով, որ դավադիրը չի կարող միայնակ գործել և կարող է համաձայնության գալ լոկ նրանց հետ, ովքեր, իր կարծիքով, դժգոհ են իշխանությունից: Բայց սիրտդ բացելով դժգոհի առջև, դու նրան նույն պահին էլ

հնարավորություն ես տալիս դառնալ գոհ մարդկանցից մեկը, որովհետև քեզ մատնելով, նա կարող է իր համար քաղել ամենատարբեր օգուտներ Այսպիսով, երբ մի կողմից շահն ակնհայտ է, մյուս կողմից՝ կասկածելի, ընդսմին լի բազում վտանգներով, ապա քեզ չի մատնի լոկ այն գործակիցը, ով կամ ամենահավատարիմ ընկերդ է կամ տիրակալի կատաղի թշնամին.

Կարճ ասած, դավադրի ուղեկիցներն են երկյուղը, կասկածը, հատուցման վախը, իսկ տիրակալը պաշտպանված է իշխանության վեհությամբ, օրենքներով, բարեկամներով ու պետության ամբողջ հզորությամբ, այնպես որ, եթե դրան միանում է նաև ժողովրդի համակրանքը, ապա հազիվ թե որևէ մեկը համարձակվի դավադրություն կազմակերպել: Քանզի, դավադրի համար վախենալու պատճառ կա դեռ մինչև չարիք գործելը, բայց այն դեպքում, երբ նրա դեմ ժողովուրդն է լարվում, նա վախենալու պատճառ ունի նաև հետո, որովհետև այլևս ոչ ոքից չի կարող ապաստան խնդրել

Այս առումով ես կարող էի շատ օրինակներ բերել, բայց կսահմանափակվեմ մեկով, որը մեր

հայրերը դեռ հիշում էին. Բոլոնիայի տիրակալ մեսսեր Աննիբալե Բենտիվոլյոն՝ ներկայիս մեսսեր Աննիբալեի պապը, սպանվեց դավադիր Կանեսկիների կողմից, ուրիշ ժառանգ չթողնելով մեսսեր Ջովաննիից բացի, որը տակավին օրորոցի երեխա էր: Սպանությունից անմիջապես հետո զայրույթով լցված ժողովուրդը կոտորեց բոլոր Կանեսկիներին, որովհետև Բենտիվոլյոների տոհմը այն ժամանակ համընդհանուր սիրո առարկա էր: Եվ այդ սերն այնքան զորեղ էր, որ երբ Բոլոնիայում Բենտիվոլյոներից ոչ ոք չմնաց, որն ընդունակ լիներ կառավարելու պետությունը, քաղաքացիները, լսելով Բենտիվոլյոներին արյունակից մի մարդու մասին, որը նախկինում դարբնի որդի էր համարվել, գնացին նրա մոտ՝ Ֆլորենցիա և իշխանությունը հանձնեցին նրան, այնպես որ նա քաղաքը կառավարեց այնքան ժամանակ, քանի դեռ մեսսեր Ջովաննին կառավարելու համար պատշաճ տարիքի չէր հասել:

Խոսքս ավարտելով , մի անգամ էլ ասեմ, որ տիրակալը կարող է չվախենալ դավադրություններից, եթե վայելում է ժողովրդի համակրանքը, և, ընդհակառակն, պետք է վախենա բո-

լորից ու յուրաքանչյուրից, եթե ժողովուրդն ատելություն ու արհամարհանք է տածում նրա հանդեպ: Բարեշեն պետություններն ու խելացի տիրակալները ջանք չեն խնայում ազնվականությանը չգչգռելու և ժողովրդին սիրաշահելու համար, քանզի դա իշխանավորների ամենակարևոր հոգսերից մեկն է:

Մեր օրերում լավագույնս կառուցված և լավագույնս կառավարվող երկրի օրինակ կարող է ծառայել Ֆրանսիան՝ Այնտեղ գործում են թագավորի ազատությունն ու անվտանգությունն ապահովող բազմաթիվ օգտակար հաստատություններ, որոնցից առաջնայինը լիազորություններով օժտված խորհրդարանն է: Այդ միապետությունը կառուցողը, քաջատեղյակ լինելով ազնվականության իշխանասիրությանն ու լպիրշությանը, հասկացել է, որ նրա սանձը պիտի ձիգ պահել, մյուս կողմից՝ հաշվի առնելով ազնվականության նկատմամբ տածած ժողովրդի ատելությունը, որը հիմնված է վախի վրա, ցանկացել է պաշտպանել ազնվականությանը: Սակայն վերոհիշյալը նա չի մտցրել թագավորի պարտականությունների մեջ, որպեսզի ազնվականությունն արքային չմեղադրի

ժողովրդին երես տալու, իսկ ժողովուրդը՝ ազնվականությանը հովանավորելու համար՝ ստեղծելով մի միջնորդ հաստատության, որը թագավորին չեզոք պահելով, սանձում է ուժեղներին և սատարում թույլերին. Դժվար է պատկերացնել ավելի լավ և ավելի կշռադատված համակարգ, ինչպես նաև՝ թագավորի և թագավորության անվտանգության ավելի հուսալի գրավական. Այստեղից կարելի է ևս մեկ օգտակար դաս քաղել այն, որ տիրակալները հպատակների համար անցանկալի գործերը պետք է հանձնարարեն ուրիշներին, իսկ ցանկալիներն իրենք կատարեն. Իբրև ամփոփում ասեմ, որ տիրակալը պետք է հարգանք ցուցաբերի ազնվականության նկատմամբ, բայց այնպես, որ ժողովրդի արհամարհանքին չարաժանանա:

Թերևս, շատերը կասեն, որ հռոմեական կայսրերից ոմանց կյանքի և մահվան օրինակը հակասում է վերոհիշյալ կարծիքին. Ես նկատի ունեմ այն կայսրերին, ովքեր արժանավայել կերպով ապրելով ու քաջակորով լինելով կամ զրկվել են իշխանությունից կամ սպանվել դավադրության հետևանքով. Ցանկանալով վիճարկել նման առարկությունները, կվերլուծեմ

կայսրերից մի քանիսի հատկություններն ու կապացուցեմ, որ նրանց կործանման են հասցրել հենց մատնանշածս պատճառները Միաժամանակ, կուզենայի առանձնացնել այն առավել ուսանելին, որ առկա է կայսրերի՝ սկսած Մարկոս-փիլիսոփայից մինչև Մաքսիմինուս, այսինքն՝ Մարկոսի, նրա որդու Կոմոդի, Պերտինաքսեսի, Հուլիանոսի, Սևերուսի, նրա որդու՝ Անտոնինոս Կարակալլայի, Մաքրինոսի, Հելիոհոբալեսի, Ալեքսանդրի և Մաքսիմինուսի կենսագրության մեջ

Նախ՝ ասեմ, որ եթե տիրակալը սովորաբար հարկադրված է լինում զսպել ազնվականության փառասիրությունն ու ժողովրդի ապերեսանությունը, ապա հռոմեական կայսրերը ստիպված էին լինում զսպել նաև զորքի դաժանությունն ու ընչաքաղցությունը. Այդ տհաճ պարտականությունը շատերին է կործանման հասցրել, քանզի դժվար է եղել միաժամանակ գոհացնել և՛ ժողովրդին, և՛ զորքին՝ ժողովուրդը խաղաղություն ու անդորր էր տենչում, ուստի գերադասում էր խաղաղասեր կայսրերին, մինչդեռ զինվորները նախապատվությունը տալիս էին ռազմատենչ, մոլեգին, դաժան ու

գիշատիչ տիրակալներին, բայց միայն այն պայմանով, որ այդ հատկությունները գործադրվեն ժողովրդի դեմ այնպես, որ իրենք կրկնակի ռոճիկ ստանան ու հագեցնեն իրենց կրքերը:

Այս ամենն անխուսափելիորեն կործանման է հասցրել այն կայսրերին, ովքեր բնածին շնորհք չեն ունեցել կամ ճիգ չեն թափել իրենց անձի նկատմամբ այնպիսի պատկառանք ներշնչել, որպեսզի կարողանան հնազանդ պահել ժողովրդին ու զորքը: Կայսրերի մեծ մասը, հատկապես նրանք, ովքեր ոչ թե ժառանգաբար են ստացել կայսերական իշխանությունը, այլ օժտվել դրանով, հայտնվելով երկու քարի արանքում, գերադասելով հաճոյանալ զորքին, անտեսել են ժողովրդին. Բայց նրանք այլ ելք չեն ունեցել, որովհետև, եթե տիրակալը չի կարող խուսափել հպատակներից ոմանց ատելությունից, ապա պետք է նախ փորձի խուսափել համընդհանուր ատելությունից: Եթե դա հնարավոր չէ, նա պետք է բոլոր ջանքերը գործադրի, որպեսզի ատելի չդառնա ավելի ուժեղների համար: Ահա թե ինչու, նոր տիրակալները, պաշտպանության ավելի սուր կարիք ունենալով, գերադասել են ոչ թե ժողովրդի, այլ զին-

վորների կողմն անցնել. Բայց այս դեպքում էլ են անհաջողություն կրել, եթե չեն կարողացել նրանց մեջ պատշաճ հարգանք ներշնչել։

Նշված պատճառով, չափավորության կողմնակից, արդարամիտ ու դաժանության թշնամի, հեզահամբույր ու գթասիրտ երեք կայսրերից՝ Մարկոսից, Պերտինաքսեսից և Ալեքսանդրից երկուսը տխուր վախճան են ունեցել. Միայն Մարկոսն է ապրել ու մահացել մեծագույն փառք ու պատվի մեջ, որովհետև կայսերական իշխանությունը ժառանգակալել էր iure hereditario[1] և ժողովրդի կամ զորքի կողմից ճանաչվելու կարիք չուներ Ավելին, նա իր բազում առաքինությունների շնորհիվ վայելում էր հպատակների հարգանքը, ուստի կարողացավ անհրաժեշտ շրջանակներում պահել և՛ ժողովրդին և՛ զորքը՝ նրանց համար լինելով ոչ ատելի, ոչ էլ արհամարհելի։ Ի տարբերություն նրա, Պերտինաքսեսը կայսր դարձավ զինվորների կամքին հակառակ, որոնք Կոմոդի օրոք չվայտ կյանքի վարժվելով, չկարողացան համակերպվել ազնվորեն ապրելու Պերտինաքսեսի պա-

---

1 Ժառանգության իրավունքով (լատ.)

հանջներին, և քանի որ նրան ատում էին ու, դրանից բացի, նաև արհամարհում ծերության պատճառով, ուստի նրան սպանեցին կառավարման հենց սկզբում։

Այս կապակցությամբ պետք է նշել, որ լավ գործերով էլ կարելի է սեփական անձի նկատմամբ ատելություն հարուցել ճիշտ այնպես, ինչպես վատ գործերով, ուստի տիրակալը, ինչպես արդեն ասել եմ, հաճախ է ստիպված լինում հանուն պետության պահպանման հրաժարվել լավից, որովհետև եթե հպատակների այն մասը, որի պաշտպանության կարիքն ունի տիրակալը, լինի դա ժողովուրդը, ազնվականությունը թե զորքը, բարոյալքված է, ապա տիրակալն էլ նրանց համակրանքը շահելու համար ստիպված պետք է գործի համապատասխան ձևով. Այդ դեպքում լավ գործերը կարող են նրան վնասել։ Բայց անցնենք Ալեքսանդրին. Նա, ինչպես գովեստով պատմում են, այնքան մեղմաբարո մարդ էր, որ նրա կառավարման տասնչորս տարիների ընթացքում առանց դատվելու ոչ ոք մահապատժի չի ենթարկվել. Եվ, այնուամենայնիվ, նրան արհամարհում էին չափից ավելի փափկակյաց լինելու և մոր խորհր-

դով շարժվելու համար, ուստի նա ևս սպանվեց գորքերի մեջ տեղ գտած դավադրության հետևանքով

Ի տարբերություն այդ երեքի, Կոմոդը, Սևերուսը, Անտոնինոս Կարակալլան և Մաքսիմինուսը աչքի էին ընկնում ծայրահեղ ագահությամբ ու դաժանությամբ Զորքի համակրանքը շահելու համար նրանք ամեն կերպ հարստահարում ու ճնշում էին ժողովրդին, և Սևերուսից բացի, նրանք բոլորն էլ տխուր վախճան ունեցան Իսկ Սևերուսը հռչակվեց այնպիսի քաջագործություններով, որ զինվորների համակրանքը չկորցրեց մինչև կյանքի վերջն ու բարեհաջող կառավարեց, թեև կեղեքում էր ժողովրդին Նրա բացառիկ խիզախությունը ժողովրդին վախեցնում ու ապշեցնում էր, իսկ զորքին ակնածանք էր ներշնչում Եվ քանի որ որպես նոր տիրակալ նրա կատարած գործերը հիանալի են և ուշագրավ, ապա կուզենայի մանրամասների մեջ չմտնելով, ցույց տալ, թե ինչպես է նա կարողացել նմանվել մեկ առյուծի, մեկ աղվեսի, որոնց, ինչպես արդեն ասել եմ, հարկ է, որ նմանվեն տիրակալները

Լսելով Հուլիանոս կայսեր թուլակամության

մասին, Սևերուսը Սլավոնիայում իր ենթակայության տակ գտնվող զինվորներին համոզեց, որ պետք է գնալ Հռոմ՝ առնելու պրետորականների կողմից սպանված Պերտինաքսես կայսեր մահվան վրեժը: Այդ պատրվակով էլ նա զորքերը շարժեց դեպի Հռոմ՝ թաքուն պահելով կայսերական իշխանության հասնելու իր մտադրությունը և Իտալիա ժամանեց ավելի շուտ, քան այնտեղ կհասներ նրա գալու լուրը: Երբ նա մտավ Հռոմ, սենատը, վախից դրդված նրան կայսր հռչակեց՝ հրամայելով սպանել Հուլիանոսին: Սակայն, Սևերուսի ճանապարհին դեռ էլի երկու արգելք կար. Ասիայում ասիական զորքերի հրամանատար Պեսցենիոս Նիգերն էր իրեն կայսր հռչակել, իսկ արևմուտքում նրա մրցակիցը դարձավ Ալբինոսը: Երկուսի դեմ բացեիբաց գործելը վտանգավոր էր, ուստի Սևերուսը որոշեց Նիգերի դեմ ճակատամարտ տալ, իսկ Ալբինոսին վերացնել խորամանկությամբ: Վերջինիս նա գրեց, որ սենատից կայսեր կոչում ստանալով՝ կամենում է այդ պատիվը նրա հետ կիսել, ուստի խնդրում է ընդունել կայսեր տիտղոսն ու սենատի որոշմամբ նրան հռչակում է իշխանակից: Ալբինոսն այդ ամենն

ընդունեց իբրև ճշմարտություն: Բայց այն բանից հետո, երբ Նիգերի զորքը ջախջախվեց, իսկ նա սպանվեց, և արևելքում գործերը կարգի բերվեցին, Սևերուսը վերադառնալով Հռոմ, սենատին մի բողոք ներկայացրեց, որով Ալբինոսին մեղադրեց երախտամոռության և իր՝ Սևերուսի դեմ մահափորձ կատարելու մեջ, ինչի պատճառով նա իբր հարկադրված է մեկնել Հռոմից, որպեսզի պատժի Ալբինոսին: Որից հետո նա Ալբինոսին Ֆրանսիայում բռնեցնելով, նրան զրկեց և՛ իշխանությունից, և՛ կյանքից:

Խորհելով Սևերուսի գործողությունների մասին, համոզվում ենք, որ նա գործել է մերթ որպես կատաղի առյուծ, մերթ որպես խորամանկ աղվես, որ նա բոլորին վախ ու հարգանք է ներշնչել և չի հարուցել զորքի ատելությունը: Ուստի մեզ համար զարմանալի չէ, թե ինչպես է նրան՝ նոր տիրակալին հաջողվել այդպես ամրապնդել իր իշխանությունը: Հպատակներին հարստահարելով, նա ատելի չէր դառնում, որովհետև անխոցելի էր դարձել իր փառքի շնորհիվ: Նրա որդին՝ Անտոնինոսը, նույնպես նշանավոր դեմք էր, մի իսկական ռազմիկ, որը կարողացավ ոչ միայն ժողովրդի վրա մեծ

տպավորություն գործել, այլև խստակյաց ու սակավապետ լինելով շահել նաև զինվորների համակրանքը: Բայց անսանձ կատաղության ու դաժանության պատճառով, որը նրան դրդեց բազմաթիվ սպանություններ կատարել՝ ոչնչացնելով Ալեքսանդրիայի բոլոր բնակիչներին ու Հռոմի բնակիչների կեսին, նա ատելի դարձավ բոլոր հպատակների աչքում, և սարսափազդու նույնիսկ մերձավորների համար, ուստի սպանվեց իր ցենտուրիոններից մեկի ձեռքով՝ զորքի աչքի առաջ:

Այստեղ տեղին է նշել, որ ամեն ոք, ում համար կյանքը արժեք չունի, կարող է տիրակալի դեմ մահափորձ կատարել, այնպես որ չկա մի ստույգ միջոց, որի շնորհիվ կարելի լիներ խուսափել մոլագար մեկի ձեռքով սպանվելուց: Բայց դրանից պետք չէ այդքան էլ վախենալ, որովհետև նման մահափորձերը խիստ հազվադեպ են պատահում:

Կարևորն այն է, որ քեզ շրջապատող պաշտոնյաներին ու քեզ մոտ ծառայության մեջ գտնվող մարդկանց չվիրավորես, այսինքն՝ Անտոնինոսի նման չվարվես, որն անարգ մահվան էր դատապարտել այն ցենտուրիոնի եղբորն ու

ամեն օր մահվամբ էր սպառնում նաև նրան, պահելով, սակայն, իր թիկնապահների թվում Դա անմտություն էր և չէր կարող չավարտվել Անտոնինոսի սպանությամբ, ինչն էլ, ինչպես գիտենք, տեղի ունեցավ:

Հիմա անցնենք Կոմոդին Մարկոսի որդին լինելով, նա կարող էր առանց ճիգ թափելու պահպանել ժառանգությամբ իրեն բաժին հասած իշխանությունը: Եթե նա հետևեր հոր օրինակին, ապա դրանով մեծապես կշահեր և՛ ժողովրդի և՛ զորքերի բարեհաճությունը, բայց որպես դաժան ու եղկելի մարդ, նա սկսեց անկարգապահություն խրախուսելով հաճոյանալ զորքին՝ նրա օգնությամբ ժողովրդին թալանելու համար՝ Սակայն, զորքի արհամարհանքին արժանացավ նրանով, որ իր կայսերական աստիճանը նսեմացնելով, արենայում մենամարտի էր բռնվում գլադիատորների հետ, ընդսմին, կատարելով կայսերական մեծությանն անհարիր բազմաթիվ այլ նողկալի գործեր: Ոմանց համար ատելի, մյուսներից արհամարհված՝ նա սպանվեց իր մերձավորների շրջանում հասունացած դավադրության հետևանքով.

Մնում է պատմել Մաքսիմինուսի հատկու-

թյունների մասին: Սա մի բացառիկ ռազմատենչ մարդ էր, և այն բանից հետո, երբ Ալեքսանդրն իր փափկակեցությանն պատճառով զայրացրեց զորքին, վերջինս կայսր հռչակեց Մաքսիմինուսին: Բայց նրան չհաջողվեց երկար կառավարել, որովհետև զորքի մեջ ատելություն ու արհամարհանք առաջացրեց նախ նրանով, որ մի ժամանակ խաշնարած էր եղել Թրակիայում, և այդ հանրահայտ փաստը հպատակների աչքում անպատիվ բան էր համարվում, և ապա՝ կայսր դառնալով, նա չշտապեց Հռոմ գնալ՝ ընդունելու կայսերական տիտղոսանշանները: Բացի այդ, հռչակվեց դաժանությամբ՝ իր պրեֆեկտների միջոցով Հռոմում և այլուրեք արյունալի հաշվեհարդարներ կազմակերպելով: Ստորին ծագման պատճառով նրա նկատմամբ եղած արհամարհանքը խորացավ նրա վայրագությունների հանդեպ ունեցած վախից ծնված ատելությամբ: Այնպես որ, նրա դեմ նախ ոտքի կանգնեց Աֆրիկան, ապա՝ սենատն ու ամբողջ հռոմեական ժողովուրդը և, վերջապես, դավադրության մեջ ներքաշվեց ամբողջ Իտալիան: Դավադրությանը միացան նաև Ակվիլեան պաշարած նրա զինվորները, որոնք

նրա դաժանության ու պաշարման դժվարությունների պատճառով զայրացած լինելով և տեսնելով, որ կայսրը շատ թշնամիներ ունի, սիրտ առան ու սպանեցին նրան.

Ես չեմ անդրադառնա Հելիոհոբալեսին, Մակրինոսին ու Հուլիանոսին, որովհետև դրանք եղել են միանգամայն աննշան ու անփառունակ տիրակալներ, այլ կանցնեմ եզրափակմանը:

Մեր ժամանակներում տիրակալներն այդքան էլ կարիք չունեն զորքին հաճոյանալու: Ճիշտ է, զորքը հիմա էլ է հոգածություն պահանջում, սակայն դա դյուրավ հաղթահարելի խնդիր է, որովհետև մեր օրերում տիրակալը կարիք չունի շփվելու զինվորների հետ, որոնք անմիջականորեն գտնվում են առանձին նահանգների կառավարիչների ու իշխանությունների ենթակայության ներքո, ինչպես եղել է Հռոմեական կայսրության օրոք: Ուստի, եթե այն ժամանակ ստիպված էին լինում նախ զինվորներին գոհացնել, որովհետև զորքն էր մեծ ուժ ներկայացնում, ապա մեր ժամանակներում թուրքական ու եգիպտական սուլթաններից բացի, բոլոր տիրակալների գլխավոր հոգսը ժո-

ղովրդին գոհացնելն է, որովհետև ժողովուրդը մեծ ուժ է ներկայացնում։

Թուրքական սուլթանը մյուս տիրակալներից տարբերվում է նրանով, որ իր տրամադրության տակ ունի տասներկուհազարանոց հետևակ և տասնհինգհազարանոց հեծելազոր, որոնք ապահովում են նրա տերության ամրությունն ու անվտանգությունը. Այդպիսի տիրակալը հարկադրված է մի կողմ թողնելով մյուս հոգսերը, ջանք թափել զորքի հետ հաշտ լինելու համար։ Նույն կերպ էլ Եգիպտոսի սուլթանը, որը կախման մեջ է զինվորներից: Նա ստիպված է, թեկուզև ի վնաս ժողովրդի, լեզու գտնել զորքերի հետ։ Նկատի ունեցեք, որ Եգիպտոսի սուլթանի պետությունն իր կառուցվածքով տարբերվում է մնացած բոլոր պետություններից և քրիստոնեական աշխարհում համեմատելի է միայն պապականության հետ. Այն չի կարելի ժառանգական անվանել, քանի որ սուլթանի հաջորդներ են համարվում ոչ թե նրա զավակները, այլ նա, ով հաջորդ է ընտրվում հատուկ դրա համար լիազորված անձանց կողմից: Բայց այն չի էլ կարելի նաև նոր անվանել, քանզի այդ կարգը վաղուց է գործում, և սուլ-

թանի առաջ չեն ծառանում այն դժվարություններից և ոչ մեկը, որոնց բախվում են նոր տիրակալները. Այսպիսով, թեև պետության մեջ նոր սուլթան է ընտրվում, սակայն այնտեղ շարունակում են գործել հին հաստատությունները՝ իշխանության հաջորդափոխությունն ապահովելով ճիշտ այնպես, ինչպես սովորական ժառանգականության դեպքում.

Բայց դառնանք խնդրո առարկային. Վերևում ասվածից հետևում է, որ կայսրերի կործանման գլխավոր պատճառը եղել է կամ նրանց նկատմամբ գոյություն ունեցող ատելությունը կամ արհամարհանքը. Ուստի հասկանալի է դառնում, թե ինչու են հակոտնյա միջոցներով գործող անձանցից միայն երկուսը երջանիկ վախճան ունեցել, իսկ մյուսները սպանվել անգթաբար. Բանն այն է, որ Պերտինաքսեսն ու Ալեքսանդրը չհասկացան, որ իրենց համար, որպես նոր տիրակալների, անօգուտ և նույնիսկ վնասակար է ընդօրինակել ժառանգության իրավունքով կայսր դարձած Մարկոսին, իսկ Կոմոդի և Մաքսիմինուսի համար կործանարար եղավ Սևերուսին ընդօրինակելը, որովհետև նրանք օժտված չէին այնպիսի

խիզախությամբ, որը նրանց թույլ տար կրկնել նրա արարքները: Ըստ էության, նոր տիրակալը նոր պետության մեջ չպիտի նմանվի Մարկոսին կամ ընդօրինակի Սևերուսին, բայց պետք է Սևերուսից փոխ առնի այն, առանց որի չի կարելի նոր պետություն ստեղծել, իսկ Մարկոսից՝ այն ամեն լավագույնն ու արժեքավորը, ինչն անհրաժեշտ է արդեն կայունություն ու ամրություն ձեռք բերած պետությունը պահպանելու համար:

## ԳԼՈՒԽ XX
## Ամրոցների և շատ այլ բաների օգտակարության մասին

Տիրակալներից ոմանք իրենց իշխանությունն ամրապնդելու համար զինաթափում են հպատակներին, մյուսները նվաճված քաղաքներում քաղաքացիների միջև երկպառակություններ հրահրում, ոմանք կանխամտածված ձևով իրենց համար թշնամիներ են ստեղծում, մյուսները, իշխանություն ձեռք բերելով, գերադասում են արժանանալ նրանց բարեհաճությանը, ում կասկածով են վերաբերվել, ոմանք ամրոցներ են կառուցում, ոմանք էլ կողոպտում ու

հիմնահատակ ավերում դրանք Դժվար է ասել, թե այդ միջոցներից որն է նախընտրելի, եթե չգիտենք, թե ինչպիսին են եղել հանգամանքներն այն պետություններում, որտեղ կայացվել է այս կամ այն վճիռը: Այնուամենայնիվ, կփորձեմ խոսել դրանց մասին՝ մանրամասնությունները բաց թողնելով այնքանով, որքանով որ թույլ է տալիս բուն նյութը·

Եվ այսպես. երբեք չի պատահել, որ նոր տիրակալները զինաթափեն հպատակներին, ընդհակառակը, նրանց միշտ զինել են, եթե նրանք եղել են անզեն, որովհետև զինելով հպատակներիդ քո բանակն ես ստեղծում. Ձեռք բերելով ոմանց, և ամրապնդելով մյուսների հավատարմությունը՝ հպատակներիդ դարձնում ես քեզ կողմնակից. Բոլոր հպատակներին անհնար է զինել, բայց եթե գերադասություն տրվի թեկուզև նրանց մի մասին, ապա դա թույլ կտա մեծ վստահությամբ հույս դնել նաև մյուսների վրա: Առաջինները, տեսնելով, որ գերադասությունն իրենց է տրվել, երախտապարտ կլինեն քեզ, իսկ մյուսները կներեն, մտածելով, որ ընտրյալներ են դառնում նրանք, ում վրա ավելի մեծ պարտականություններ են դրված և ով-

*քեր ավելի մեծ վտանգների են ենթարկվում։ Բայց հպատակներիդ զինաթափելով, քո անվստահությամբ կվիրավորես նրանց և դրանով իսկ վախկոտություն ու կասկածամտություն կդրսևորես, իսկ այդ երկու հատկությունների համար տիրակալներին չեն ներում: Եվ քանի որ առանց զորքի կառավարել չես կարող, ուրեմն պիտի ստիպված լինես դիմել վարձկաններին, իսկ թե ինչ արժեն վարձկան զորքերը, այդ մասին արդեն ասել ենք, բայց դրանք, եթե նույնիսկ գերազանց զինվորներ էլ լինեն, միևնույն է՝ քեզ չեն կարող պաշտպանել հզոր թշնամիներից ու անհավատարիմ հպատակներից*

*Ի դեպ, ինչպես արդեն ասել եմ, նոր տիրակալները նոր պետություններում միշտ սեփական զորք են ստեղծել, ինչը հաստատվում է պատմական բազմաթիվ օրինակներով Բայց, եթե տիրակալը նոր տիրույթները միացնում է հին պետությանը, ապա նոր հպատակներին հարկավոր է զինաթափել, բացառություն կատարելով միայն նրանց համար, ովքեր աջակցել են նվաճմանը, բայց պետք է այնպես անել, որ վերջիններս փափկակեցության վարժվեն ու*

թուլանան, ի վերջո բանը հանգեցնելով նրան, որ ամբողջ զորքի մեջ մնան միայն տիրակալի հարևանությամբ ապրող բնիկ հպատակներ.

Մեր իմաստուն նախնիներից ոմանք այն կարծիքն են հայտնել, որ Պիստոյան պետք է պահել երկպառակություններով, իսկ Պիզան՝ ամրոցներով, ուստի իշխանությունն ամրապնդելու համար իրենց ենթակա որոշ քաղաքներում հրահրել են երկպառակություններ: Այն օրերին, երբ Իտալիան գտնվում էր հարաբերական հավասարակշռության մեջ, նման գործելակերպը կարող էր արդարացվել Բայց հազիվ թե վերոհիշյալ պատգամը պիտանի լինի մեր ժամանակներում, քանզի համոզված չեմ, որ պառակտումները երբևէ կարող են լավ բանի հասցնել. Ավելին, թշնամու հարձակման դեպքում պարտությունն անխուսափելի կլինի, որովհետև ավելի թույլ կողմը կմիանա հարձակվողներին, իսկ ուժեղը չի կարող միայնակ պաշտպանել քաղաքը՝

Վենետիկցիներն իրենց ենթակա քաղաքներում հավանաբար, նշածս նույն պատճառներով, խրախուսում էին գվելֆների ու գիբելինների թշնամությունը: Զթողնելով, որ բանն ար-

յունահեղության հասնի, նրանք քաղաքացիներին հրահրում էին միմյանց դեմ, որպեսզի թշնամություն սերմանելով նրանց թուլացնեն: Բայց, ինչպես տեսնում ենք, դա վենետիկցիներին օգուտ չտվեց: Վայլայի մոտ կրած ջախջախիչ պարտությունից հետո, նախ քաղաքներից մի քանիսը, իսկ այնուհետև՝ նաև մյուսները, համարձակվեցին անջատվել նրանցից:

Այսպիսով, նման միջոցները վկայում են իշխողի թուլության մասին, որովհետև ամուր և վճռական իշխանությունը երբեք պառակտում չի հանդուրժի, որը եթե խաղաղ ժամանակ տիրակալի համար օգտակար է, քանզի օգնում է զսպել հպատակներին, ապա պատերազմի ժամանակ ակնհայտորեն ունենում է կործանարար հետևանքներ:

Անվիճելի է, որ, տիրակալներն ազդեցություն են ձեռք բերում խոչընդոտներ հաղթահարելով և թշնամիներին ջախջախելով: Ահա թե ինչու, ճակատագիրը, կամենալով մեծարել նոր տիրակալին, որին ինքնահաստատումն ավելի է հարկավոր, քան գահը ժառանգողին,- ինքն է նրան թշնամիներ ուղարկում՝ հարկադրելով մենամարտել ու հաղթել նրանց, որպես-

զի նրանց դիակների վրայով ըստ հնարավորին՝ ավելի վեր բարձրանա. Սակայն շատերի կարծիքով, խելացի տիրակալը, բարենպաստ հանգամանքների առկայության դեպքում ինքը պիտի արհեստականորեն իր համար թշնամիներ ստեղծի, որպեսզի նրանց հաղթելով է՛լ ավելի մեծարվի:

Հաճախ է պատահում, որ հատկապես նոր տիրակալները ժամանակի ընթացքում համոզվում են, որ առավել նվիրված ու օգտակար են այն մարդիկ, ովքեր սկզբում վստահելի չեն թվացել: Սիենայի տիրակալ Պանդոլֆո Պետրուչին իր պետությունը կառավարելիս մյուսներից ավելի վստահում էր նրանց, ում նախկինում կասկածելի էր համարել Բայց այստեղ չի կարելի վերացական դատողություններ անել, քանզի ամեն ինչ կախված է փոփոխվող հանգամանքներից: Կասեմ միայն, որ նախկինում տիրակալի նկատմամբ թշնամաբար տրամադրված անձանց համակրանքը հեշտությամբ կարելի է շահել, եթե նրանց լինել-չլինելու հարցը կախված լինի տիրակալի բարեհաճությունից Այսպիսի դեպքերում նրանք կրկնակի եռանդով կծառայեն նրան, որպեսզի գործով ապացուցեն,

որ իրենց մասին նախկինում թյուր կարծիք է եղել. Ուստի, տիրակալի համար նրանք միշտ ավելի օգտակար կլինեն, քան այն մարդիկ, ովքեր չարաշահելով իրենց արտոնյալ վիճակը, մտահոգված են միայն սեփական բարօրությամբ:

Այսպիսով, քննարկվող նյութի թելադրանքով կուզենայի հիշեցնել այն տիրակալներին, ովքեր իշխանության են հասել քաղաքացիների մի մասի օգնությամբ: Հարկ է խորհել այն դրդապատճառների մասին, որոնցով առաջնորդվել են քեզ օգնողները, ու եթե պարզվի, որ բանը ոչ թե անձնական նվիրվածությունն է, այլ դժգոհությունը նախկին կառավարումից, ապա նրանց բարեկամությունը պահպանելը չափազանց դժվար կլինի, քանզի անհնար է գոհացնել այդ մարդկանց: Եթե փորձենք անցյալի ու ներկայի օրինակներով հասկանալ դրա պատճառը, կտեսնենք, որ միշտ ավելի դյուրին է ձեռք բերել այն մարդկանց բարեկամությունը, ովքեր գոհ են եղել նախկին իշխանությունից, ուստիև թշնամաբար են ընդունել նոր տիրակալին, քան պահպանել նրանց բարեկամությունը, ովքեր դժգոհ լինելով նախկին իշխա-

նությունից՝ աջակցել են հեղաշրջմանը

Վաղուց ի վեր տիրակալներն իրենց իշխանությունն ամրապնդելու համար ամրոցներ են կառուցում, դրանց շնորհիվ նախ՝ դավադիր մարդկանց զսպելու և ապա՝ թշնամու անակնկալ հարձակման դեպքում հուսալի պատսպարան ունենալու համար Կարող եմ գովեստով խոսել հնուց եկող այդ սովորույթի մասին Սակայն, մենք դեռ հիշում ենք, թե ինչպես մեսսեր Նիկոլո Վիտելին քաղաքն իր ձեռքում պահելու համար հրամայեց քարուքանդ անել Չիտա դի Կաստելլոյի երկու ամրոցները Գվիդո Ուբալդոն, վերադառնալով իր կալվածքները, որտեղից նրան քշել էր Չեզարե Բորջան, հիմնահատակ ավերեց այդ երկրամասի բոլոր ամրոցները՝ կարծելով, որ այդպես ավելի հեշտ կլինի պահպանել պետությունը Բոլոնիա վերադառնալուց հետո նույն կերպ վարվեց նաև Բենտիվոլիոների ընտանիքը Սրանից հետևում է, որ ամրոցների օգտակար լինելու կամ չլինելու հարցը կախված է հանգամանքներից Ու, եթե մի դեպքում դրանք օգտակար են, ապա մյուս դեպքում դրանցից միայն վնաս է գալիս Բացատրեմ ավելի հանգամանորեն Այն տիրակալ-

ներին, ովքեր ժողովրդից ավելի շատ են վախենում, քան արտաքին թշնամիներից, ամրոցները պետք են, իսկ նրանց, ովքեր արտաքին թշնամիներից են ավելի շատ վախենում, քան ժողովրդից, ամրոցներ հարկավոր չեն: Միլանում դուքս Ֆրանչեսկո Սֆորցայի կառուցած ամրոցը Սֆորցաների ընտանիքին ավելի մեծ վնաս պատճառեց, քան նրանց պետության մեջ տեղի ունեցած բոլոր խռովությունները: Դրա համար էլ բոլոր ամրոցներից լավագույնը ժողովրդի համար ատելի չլինելն է: Ինչ ամրոց էլ որ կառուցես, դա քեզ չի փրկի, եթե ժողովուրդը՝ քեզ ատում է, քանզի, երբ ժողովուրդը զենքի է դիմում, նրան օգնելու համար միշտ էլ հայտնվում են օտարերկրացիները: Մեր օրերում ամրոցները ոչ ոքի չեն օգնել, թերևս, կոմսուհի Ֆորլիից բացի, նրա ամուսնու՝ կոմս Ջիրոլամոյի մահվանից հետո: Ամրոցի շնորհիվ կոմսուհուն հաջողվեց թաքնվել ապստամբ ժողովրդից, սպասել մինչև Միլանից օգնություն կգա և վերստին ստանձնել իշխանությունը: Ժամանակն այնպիսին էր, որ ժողովրդին ոչ ոք չէր կարող դրսից օգնել: Սակայն, հետագայում ամրոցներն էլ չօգնեցին կոմսուհուն, երբ նրա ամ-

*րոցը պաշարեց Զեզարե Բորջան, իսկ ժողովուրդը, որը թշնամաբար էր տրամադրված կոմսուհու հանդեպ, միացավ օտարերկրացիներին: Այնպես որ, նրա համար և՛ այն ժամանակ և՛ նախկինում շատ ավելի խելացի կլիներ ոչ թե ամրոցներ կառուցել, այլ փոքր ինչ ջանք թափել ժողովրդի ատելությունը չհարուցելու համար:*

*Այսպիսով, քննության ենթարկելով ամբողջ ասվածը, կավելացնեմ, որ հավանություն եմ տալիս և՛ ամրոցներ կառուցողներին, և չկառուցողներին, բայց դատապարտում եմ յուրաքանչյուրին, ով հույսը դնելով ամրոցի վրա, մտահոգված չէ, որ ժողովրդի աչքում ատելի է դարձել:*

## ԳԼՈՒԽ XXI
## Ինչ պիտի անի տիրակալը հարգանքի արժանանալու համար

*Ոչ մի բան այնպես չի վեհացնում տիրակալին, որքան ռազմական ձեռնարկումներն ու բացառիկ արարքները: Ներկայիս տիրակալների մեջ ուսանելի է Իսպանիայի թագավոր Ֆեր-*

դինանդ Արագոնացու օրինակը. Նրան կարելի կլիներ անվանել նոր տիրակալ, քանզի սկզբում թույլ լինելով, կարճ ժամանակամիջոցում իր փառքով ու շուքով նա դարձավ քրիստոնեական աշխարհի առաջին թագավորը: Նրա բոլոր գործերը կրում են մեծության դրոշմ, իսկ որոշ գործեր ուղղակի ապշեցնում են: Նա իր հզորության հիմքը դրեց Գրենադայի համար մղած պատերազմում, որը ձեռնարկեց գահ բարձրանալուց շատ չանցած: Նա, նախ պատերազմն սկսեց այն ժամանակ, երբ երկրի ներսում հանգիստ իրավիճակ էր տիրում, և ոչ մեկից երկյուղելու պատճառ չկար: Ընդսմին, նա պատերազմի մեջ ներգրավեց կաստիլիացի բարոններին և վերջիններս պատերազմով զբաղված լինելով, մոռացան խռովությունների մասին: Այդ ժամանակամիջոցում նա անաղմուկ իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ իշխանությունն ու նրանց հնազանդեցրեց. Բանակը պահելու փողը նրան տվեցին եկեղեցին ու ժողովուրդը: Քանի դեռ պատերազմը շարունակվում էր, նա կազմավորեց նաև բանակը, որը հետագայում նրան փառք բերեց: Դրանից հետո է՛լ ավելի նշանակալից ձեռնարկումներ ծրագրելով և

դարձյալ գործելով որպես հավատի պաշտպան, նա հանդես բերեց բարեպաշտությամբ քողարկված դաժանություն՝ վտարելով մառանոսներին[1] ու նրանցից մաքրելով թագավորությունը: Դժվար է պատկերացնել ավելի անգութ և միաժամանակ ավելի բացառիկ քայլ. Նույն պատրվակով նա հողեր գրավեց Աֆրիկայում, զորքերը մտցրեց Իտալիա և, վերջապես, պատերազմի մեջ մտավ Ֆրանսիայի հետ: Ահա այսպես, նա ծրագրում ու իրականացնում էր մեծ գործեր՝ մշտական հիացմունքի ու լարման մեջ պահելով հպատակներին, որոնք ակնդետ հետևում էին դեպքերի ընթացքին: Եվ այդ բոլոր ձեռնարկումներն այնպիսի արագությամբ էին հաջորդում մեկը մյուսին, որ տիրակալի դեմ դավեր նյութելու ժամանակ չէր մնում :

Տիրակալի հզորացմանը նպաստում են նաև պետության ներսում ձեռնարկած քայլերը, որոնք վերագրվում են մեսսեր Բեռնաբո դա Միլանոյին, այլ կերպ ասած, երբ որևէ մեկը քաղաքացիական կյանքում որևէ նշանակալի

---

1 Առերես քրիստոնեություն ընդունած, սակայն թաքուն հուդայականություն դավանող հրեաներ ու մավրեր (ծանոթ թարգմ )

բան է անում վատ կամ լավ, ապա անհրաժեշտ է արժանացնել պարգևի կամ պատժի այնպես, որ դա հնարավորինս ավելի երկար հիշվի: Բայց տիրակալի համար ամենագլխավորն այն է, որ նա իր բոլոր արարքներով աշխատի իր համար ստեղծել խելամիտ մարդու համբավ:

Տիրակալին նաև հարգում են, երբ նա բացեիբաց իրեն թշնամի կամ բարեկամ է հայտարարում, այսինքն, երբ առանց տատանվելու հանդես է գալիս ի պաշտպանություն մեկի և ընդդեմ մյուսի,-դա միշտ ավելի լավ է, քան չեզոք մնալը: Որովհետև, երբ երկու հզոր տիրակալ գոտեմարտի են բռնվում, ապա հնարավոր հաղթողը քեզ համար կամ վտանգավոր է, կամ ոչ: Երկու դեպքում էլ շահավետ է առանց վարանելու մտնել պատերազմի մեջ: Քանզի առաջին դեպքում պատերազմին չմասնակցելով կդառնաս հաղթողի ավարը՝ հուրախություն և ի գոհացումն պարտվածի: Այդ ժամանակ այլևս ոչ մեկից չես կարող պաշտպանություն ակնկալել. հաղթողը երեսը շուռ կտա դաշնակցից, որը նրան լքել է փորձության պահին, իսկ պարտվածը չի կամենա քեզ ապաստանել, քանզի զլացել ես նրան օգնության ձեռք մեկնել: Ան-

տիոքոսը, որին էտոլացիները հրավիրել էին Հունաստան՝ հռոմեացիներին դուրս քշելու համար, բանագնացներ ուղարկեց աքայացիների մոտ, որոնք հռոմեացիների դաշնակիցներն էին, նրանց համոզելու, որ չմիջամտեն: Հռոմեացիներն, ընդհակառակը, աքայացիներին համոզեցին մտնել պատերազմի մեջ. Այնժամ, իրենց անելիքը որոշելու համար աքայացիները խորհուրդ գումարեցին, որի ժամանակ Անտիոքոսի պատվիրակը նրանց կոչ արեց զենքի չդիմել, իսկ հռոմեացիների պատվիրակն այսպես ասաց «Quod autem isti dicunt non interponendi vos bello nihil magis alienum rebus vestris est, sine gratia, sine dignitate, premium victoris eritis»[1]:

Եվ միշտ թշնամին կոչ է անում մի կողմ քաշվել, մինչդեռ բարեկամն առաջարկում է

---

1 «Ինչ վերաբերում է այն որոշմանը, որը ձեզ առաջարկվում է իբրև ձեր պետության համար ամենալավն ու ամենաշահավետը, այն է՝ չմիջամտել պատերազմին, ապա ձեզ համար ավելի վատ բան լինել չի կարող, քանզի այդպիսի որոշում ընդունելով կմնաք առանց պարգևի ու պատվի՝ դառնալով հաղթողի ավարը» (լատ.)

դառնալ իր զինակիցը. Անվճռական տիրակալ-ները, որպես կանոն, գերադասում են չմիջամ-տել, որպեսզի խուսափեն վերահաս վտանգից, և, որպես կանոն, դա նրանց կործանում է:

Բայց եթե անվարան անցնես կռվողներից մեկի կողմը և քո դաշնակիցը հաղթի, ապա որ-քան էլ որ նա հզոր լինի, ինչքան էլ որ նրանից կախված լինես, միևնույնն է՝ նա քեզ պարտա-կան է, իսկ մարդիկ այդքան էլ ապերախտ չեն, որ հարվածեն նաև դաշնակցին: Բացի այդ, հաղթանակը երբեք այնքան կատարյալ չի լի-նում, որ հաղթողը համարձակվի իրեն սան-ձարձակ պահել և նույնիսկ կոխկրտել արդա-րությունը: Իսկ եթե քո դաշնակիցը պարտվի, նա քեզ կպատսպարի, և քանի դեռ ի վիճակի է՝ կօգնի, այնպես որ դժբախտության առումով կդառնաս նրա բախտակիցը, իսկ բախտն այն-պիսի բան է, որ գուցե մի օր ժպտա նրան:

Երկրորդ դեպքում, երբ պատերազմողներից ոչ մեկից էլ վախենալու հարկ չկա, մեկին կամ մյուսին միանալը է՛լ ավելի խելամիտ քայլ կլի-նի. Քանզի մեկի օգնությամբ կջախջախես մյուսին, թեև, եթե այդ առաջինը խելացի լինի, պիտի ոչ թե կործանի այլ փրկի հակառակոր-

դին. Իսկ հաղթանակից հետո դաշնակցիդ կենթարկես քո իշխանությանը, չէ որ միայն քո օգնությամբ է նրա հաղթանակն ապահովվում.

Այստեղ տեղին է նշել. որ ավելի լավ է խուսափել քեզանից ուժեղների հետ դաշինք կնքելուց, եթե դա թելադրված չէ անհրաժեշտությամբ, որովհետև, ուժեղ դաշնակցիդ հաղթանակի դեպքում կհայտնվես նրա բռի մեջ, իսկ տիրակալները պիտի զգուշանան իրենց նմաններից կախման մեջ ընկնելուց

Վենետիկցիներն, օրինակ, դաշինք կնքեցին Ֆրանսիայի հետ ընդդեմ Միլանի դքսի, թեև կարող էին խուսափել դրանից՝ Հենց դա էլ դարձավ նրանց կործանման պատճառը՝ Եթե դաշինքից խուսափելու հնարավորություն չկա, ինչպես Ֆլորենցիացիների պարագայում, երբ պապն ու Իսպանիան զորքերը շարժեցին դեպի Լոմբարդիա, ապա տիրակալը պարտավոր է մտնել պատերազմի մեջ, ինչի պատճառները վերևում նշել եմ՝ Միայն թե մի կարծիր, որ ընդունածդ որոշումն այլընտրանք չունի, ընդհակառակն, պետք է կանխավ հաշտվել այն մտքի հետ, որ բոլոր որոշումներն էլ կասկածահարույց են, քանզի հայտնի բան է՝ մի անախոր-

ժությունից խուսափելով ընկնում ես մյուսի մեջ հեղացի է նա, ով ծանրութեթև անելով բոլոր հնարավոր անախորժությունները, չարյաց փոքրագույնը համարում է որպես բարիք.

Տիրակալը նաև պետք է հովանավորի տաղանդներին, հյուրընկալի շնորհալի մարդկանց, խրախուսի այս կամ այն արհեստի կամ արվեստի բնագավառում աչքի ընկածներին Նա պետք է քաղաքացիներին խթանի հանգիստ խղճով զբաղվել առևտրով, հողագործությամբ ու արհեստներով, որպեսզի ոմանք կարգի բերեն իրենց կալվածքները՝ չվախենալով դրանք կորցնել, մյուսներն առևտուր անեն՝ չվախենալով, որ հարկերի պատճառով կսնանկանան· Ավելին, նա պետք է պարգևներ ունենա նրանց համար, ովքեր հոգ են տանում քաղաքի կամ պետության բարգավաճման համար: Նա նաև պետք է ժողովրդին զբաղեցնի տոնակատարություններով ու հանդիսություններով՝ դրանց համար տարվա մեջ հարմար պահ ընտրելով: Հարգանք ցուցաբերելով համքարությունների նկատմամբ, որոնք միավորում են քաղաքների արհեստավորներին, տիրակալը երբեմն պետք է մասնակցի նրանց ժողովներին՝ իրեն դրսևորե-

*լով որպես առատաձեռնության ու մեծահոգության տիպար, ընդսմին, ամենայն բծախնդրությամբ ընդգծելով իր վսեմությունը, ինչը պիտի տեսանելի լինի նրա յուրաքանչյուր շարժման մեջ:*

## ԳԼՈՒԽ XXII
## Տիրակալի խորհրդականների մասին

*Տիրակալի համար պակաս կարևոր չէ խորհրդականների ընտրությունը, իսկ թե ինչպիսին կլինեն նրանք՝ լավ թե վատ, կախված է տիրակալների խոհեմությունից Իշխողի խելքի մասին ամենից առաջ դատում են ըստ այն բանի, թե ովքեր են շրջապատում նրան: Եթե դրանք նվիրված ու ընդունակ մարդիկ են, ապա կարելի է վստահորեն ասել, որ նա խելացի մարդ է, որովհետև կարողացել է նկատել այդ անձանց ընդունակություններն ու անխախտ պահել նրանց նվիրվածությունը: Եթե նրանք այդպիսին չեն, ապա տիրոջ մասին էլ համապատասխան կարծիք կկազմվի, քանզի վատ օգնականներ ընտրելով, նա արդեն իսկ թույլ է տվել առաջին սխալը Նրանք, ովքեր ճանաչում*

էին Սիենայի տիրակալ Պանդոլֆո Պետրուչոյի օգնական Անտոնիո դե Վենաֆրոյին, կասկած անգամ չունեն իր՝ Պանդոլֆոյի արժանիքների մասին, որ այդպիսի օգնական էր ընտրել:

Քանզի խելքը երեք տեսակի է լինում. մեկը ինքն է ամեն ինչի հասու դառնում, մյուսը կարող է հասկանալ, թե ինչի է հասել առաջինը, երրորդը՝ ինքը ոչնչի չի հասնում և անկարող է հասկանալ, թե ինչի են հասել մյուսները: Առաջին խելքը բացառիկ է, երկրորդը՝ երևելի, երրորդն՝ անպետք: Ասվածից անառարկելիորեն հետևում է, որ Պանդոլֆոյի խելքը եթե ոչ առաջին, ապա գոնե երկրորդ տեսակին էր պատկանում, քանզի, եթե մարդը կարող է ուրիշների խոսքերում ու գործերում ճանաչել չարն ու բարին, ապա նա առանձնապես ճարտարամիտ չլինելով էլ իր խորհրդականների ասածների մեջ կտարբերի վատը լավից և լավի համար վարձահատույց կլինի, իսկ վատի համար կպատժի· Ասենք, նրա օգնականներն էլ չեն համարձակվի տիրակալին խաբել և բարեխղճորեն կծառայեն նրան:

Կա օգնականի արժեքը պարզելու մի անսխալ միջոց. եթե նա ավելի շատ իր մասին է

հոգ տանում, քան տիրակալի, և յուրաքանչ-
յուր գործի մեջ իր շահն է փնտրում, ապա եր-
բեք լավ ծառա չի լինի տիրոջ համար: Վերջինս
էլ երբեք չի կարող նրա վրա հույս դնել: Քան-
զի այն նախարարը, որին պետական գործեր են
վստահված, պարտավոր է մտածել ոչ թե իր, այլ
տիրակալի մասին՝ նրան չանհանգստացնելով
զանազան մանրուքներով: Բայց տիրակալն էլ
իր հերթին պետք է աշխատի պահպանել իր նա-
խարարի նվիրվածությանը՝ ըստ արժանվույն
գնահատելով նրա ծառայությունները, բազմա-
պատկելով նրա կարողությունը, նրան իր հետ
կապելով երախտագիտության թելերով, նրա
հետ կիսելով պարտականություններն ու մեծա-
րանքները, որպեսզի նա գիտակցի իր անհրա-
ժեշտությունը և, բավականաչափ հարստու-
թյուն ու պատիվ ունենալով, նոր հարստու-
թյուններ ու մեծարանքներ չտենչա, ինչպես
նաև, իր պաշտոնի վրա դողալով, սարսափի հե-
ղաշրջումներից: Երբ տիրակալն ու նախարարը
երկուստեք իրենց այդպես են դրսևորում,
նրանք կարող են միմյանց վստահել, իսկ, երբ
նրանք իրենց այլ կերպ են պահում, ապա դա
վատ է վերջանում թե մեկի, թե մյուսի համար՝

## ԳԼՈՒԽ XXIII
## Ինչպես խուսափել քծնողներից

*Կուզենայի կանգ առնել ևս մի կարևոր հանգամանքի, ավելի ճիշտ՝ մի թուլության վրա, որից տիրակալները դժվարությամբ են ձերբազատվում, եթե չունեն բացառիկ խելք ու խորաթափանցություն Ես նկատի ունեմ քծնանքն ու քծնողներին, որոնք վխտում են տիրակալների շուրջը, քանզի մարդիկ այնքան փառասեր են ու այնքան ինքնահավան, որ մեծ ջանքեր են հարկավոր այդ թուլություններին տուրք չտալու համար: Բայց ցավն այն է, որ փորձելով քծնանքն արմատախիլ անել, տիրակալը կարող է արհամարհանք հարուցել սեփական անձի նկատմամբ: Քանզի, քծնանքից պաշտպանվելու այլ միջոց չկա, քան մարդկանց համոզել, որ եթե նրանք քեզ ճշմարտությունն ասեն, նրանցից չես նեղանա, բայց եթե ամեն ոք քեզ ճշմարտությունն ասելու իրավունք ունենա, ապա կդադարեն քեզ պատշաճ ձևով հարգել:*

*Ուստի, խելացի տիրակալը պետք է ընտրի երրորդ ուղին, այն է՝ առանձնացնի խելացի մարդկանցից մի քանիսին՝ միայն նրանց իրա-*

վունք տալով հայտնել իրենց կարծիքը, բայց միայն իր տված հարցերի շուրջը. Սակայն, պետք է հարցնել ամեն ինչի մասին և լսել պատասխանները, իսկ որոշումներն ընդունել միանձնյա և սեփական հայեցողությամբ՝ Խորհրդականների հետ հանդիպման ժամանակ անհրաժեշտ է նրանցից յուրաքանչյուրին այնպես վերաբերվել, որ բոլորի համար պարզ դառնա, որ ինչքան ավելի համարձակ արտահայտվեն, այնքան ավելի կգոհացնեն տիրակալին՝ Բայց պետք է նրանցից բացի ուրիշ ոչ մեկին չլսել և անխոտոր ընթանալով դեպի նպատակը, հավատարիմ մնալ կայացրած վճռին Ով այլ կերպ է վարվում, նա կամ տեղի է տալիս քծնանքին, կամ լսելով տարբեր խորհուրդներ, հաճախ է փոխում իր կարծիքը, որի պատճառով ընկնում է հպատակների աչքից՝

Բերեմ մի ժամանակակից օրինակ: Հայր Լուկան՝ Մաքսիմիլիան կայսեր վստահյալ անձը, խոսելով նորին մեծության մասին, նշել է, որ նա ոչ ոքից խորհուրդ չի հարցնում, ինքնուրույնաբար ոչինչ չի անում հենց այն պատճառով, որ նրա գործելակերպը հակասում է վերը նշվածին: Ծածկամիտ մարդ լինելով, կայսրն իր

մտադրությունները ոչ ոքի չի վստահում, ոչ մեկի խորհուրդին չի դիմում: Բայց, երբ այդ մտադրությունները կամաց-կամաց սկսում են մարմին ու ձև ստանալ, ապա նրա շրջապատն սկսում է դրանք վիճարկել, և տիրակալը, թուլակամ մարդ լինելով, դրանցից ձեռք է քաշում: Ուստի, այսօր սկսվածը վաղը դադարեցվում է, և երբեք չես հասկանա, թե կայսրն ինչ է ուզում, ինչ է մտադիր անել, ու չի կարելի հավատ ընծայել նրա խոսքին:

Այսպիսով, տիրակալը միշտ պետք է խորհրդակցի ուրիշների հետ, բայց միայն այն ժամանակ, երբ ինքն է դա ուզում, և ոչ թե այն ժամանակ, երբ դա ուզում են ուրիշները: Նա պետք է սաստի յուրաքանչյուրին, ում մտքով կանցնի նրան ինքնակոչ խորհուրդներ տալ: Սակայն, նա ինքը պետք է ամեն ինչի մասին հանգամանալից հարցուփորձ անի, համբերությամբ լսի հարցի վերաբերյալ ճշմարիտ պատասխանները, և ավելին, անհանգստություն ցուցաբերի, նկատելով, որ ինչ-որ մեկը, ինչ-որ պատճառով վախենում է ճշմարտությունն ասել: Շատերն են ենթադրում, որ տիրակալներից ոմանք, ովքեր խելացի մարդու համբավ են

ունեցել, իրենց փառքով պարտական են ոչ թե անձամբ իրենց, այլ մերձավորների խելացի խորհուրդներին, բայց դա սխալ կարծիք է Քանզի, բացառություն չճանաչող կանոնը հավաստում է. անխելք տիրակալին անիմաստ է խելացի խորհուրդներ տալ, եթե միայն նա պատահաբար չվստահի մի իմաստուն խորհրդականի, որը նրա փոխարեն բոլոր որոշումներն ինքը կընդունի: Ու, թեև նման իրադրությունը բացառված չէ, սակայն այդ տիրակալի վերջը շուտով կգա, քանզի խորհրդականն ինքը կդառնա տիրակալ: Իսկ երբ տիրակալն ունի մեկից ավելի խորհրդականներ, ապա, եթե խելացի չէ, չի կարող կողմնորոշվել իրարամերժ կարծիքների մեջ, և բացի այդ, խորհրդականներից յուրաքանչյուրը մտածելու է միայն սեփական բարօրության մասին, իսկ տիրակալը դա չի նկատի ու միջոցներ ձեռք չի առնի: Իսկ այլ խորհրդականներ չեն լինում, քանզի մարդիկ միշտ վատն են, քանի դեռ անհրաժեշտությունը նրանց չի պարտադրում լավը լինել: Սրանից կարելի է եզրակացնել, որ խելացի խորհուրդները, ովքեր էլ որ դրանք տան, ծնվում են տիրակալների խելամտությունից, և ոչ թե տիրա-

կալների խելամտությունն է ծնվում խելացի խորհուրդներից:

## ԳԼՈՒԽ XXIV
## Թե ինչու Իտալիայի տիրակալները զրկվեցին իրենց պետություններից

Եթե նոր տիրակալը խելամտորեն է հետևում նշված կանոններին, նա արագորեն կամրապնդի իր դիրքերը և այդ պետությունում իրեն ավելի ապահով ու վստահ կզգա, քան իշխանությունը ժառանգաբար ստացած լինելու դեպքում: Քանզի նոր տիրակալի հանդեպ հետաքրքրությունն ավելի մեծ է, քան ժառանգական իշխանի: Ու, եթե նրա արարքները տոգորված են խիզախությամբ, ապա դրանք մարդկանց համար շատ ավելի հետաքրքիր են ու գրավիչ, քան տոհմի հնությունը: Չէ որ մարդիկ ավելի շատ ապրում են ոչ թե երեկվա, այլ այսօրվա օրով, ու եթե ներկա պահին բարեկեցություն են ձեռք բերում, ապա գոհանում և ուրիշ բանի հետևից չեն ընկնում: Ավելին, նրանք սարի պես կկանգնեն նոր տիրակալի թիկունքին, եթե նա գործի պատշաճ ձևով: Եվ

կրկնակի փառքի կարժանանա նա, ով պետություն կստեղծի ու այն կամրապնդի լավ օրենքներով, լավ դաշնակիցներով, լավ զորքով ու ընդօրինակելի արարքներով: Ճիշտ այդպես՝ երիցս խայտառակ կլինի նա, ով տիրակալ ծնված լինելով՝ անխելքության պատճառով կզրկվի իշխանությունից:

Եթե հիշենք Իտալիայի այն տիրակալներին, ովքեր կորցրել են իշխանությունը, ինչպես օրինակ Նեապոլի թագավորը, Միլանի դուքսը և ուրիշներ, ապա կտեսնենք, որ նրանց առավել խոցելի տեղը եղել է բանակը, ինչի մասին հանգամանորեն խոսվել է վերևում: Բացի դրանից, նրանցից ոմանք հաշտ չեն եղել ժողովրդի հետ և կամ ժողովրդին իրենց կողմը գրավելով չեն կարողացել մեկուսացնել ազնվականներին: Քանզի, այնտեղ, որտեղ նման բացթողումներ չկան, տիրակալը չի կարող կորցնել իշխանությունը, եթե բավականաչափ ուժ ունի թշնամու զորքին հակահարված տալու համար: Փիլիպոս Մակեդոնացին, խոսքս Ալեքսանդր Մեծի հոր մասին չէ, այլ նրա, ով պարտություն կրեց Տիտուս Կվինկցուսից, իր վրա հարձակված մեծ պետությունների՝ Հռոմի և Հունաստանի հետ

համեմատած՝ մի ոչ մեծ պետություն ուներ, բայց, ռազմիկ լինելով, ինչպես նաև՝ ընդունակ ժողովրդին իր կողմը գրավելու և իրեն վերնախավից վտանգազերծելու, դիմացավ հռոմեացիների և հույների դեմ մղված բազմամյա պատերազմին ու թեև վերջում մի քանի քաղաք կորցրեց, այնուամենայնիվ, պահպանեց իր թագավորությունը

Այնպես որ, մեր տիրակալներից նրանք, ովքեր երկար տարիներ իշխելուց հետո զրկվել են իրենց պետություններից, թող մեղքը բարդեն ոչ թե ճակատագրի, այլ իրենց անփութության վրա: Խաղաղ ժամանակ նրանք չկանխատեսեցին հնարավոր աղետները, մի թերություն, որը ներհատուկ է բոլոր մարդկանց՝ անդորրի ժամանակ չմտածել փոթորկի մասին, իսկ երբ վրա հասան դժվար ժամանակներ, նրանք պաշտպանվելու փոխարեն գերադասեցին փախուստի դիմել, հուսալով, որ հպատակները, գազազելով հաղթողների սանձարձակություններից, իրենց հետ կկանչեն: Եթե ուրիշ ելք չկա, դա էլ լավ ելք է: Վատը՝ հանուն դրա մնացած բոլոր ելքերից հրաժարվելն է, ճիշտ այնպես, ինչպես որ՝ չարժե վայր ընկնել, հուսալով, որ քեզ կբարձ-

բացնեն. Բայց, նույնիսկ, եթե քեզ փորձանքից ազատեն էլ, դա անհետևանք չի մնա, որովհետև կհայտնվես կախյալ ու նվաստացած վիճակում: Եվ պաշտպանության լոկ այն միջոցներն են լավ, հիմնավոր ու հուսալի, որոնք կախված են քեզանից ու քո խիզախությունից.

## ԳԼՈՒԽ XXV

## Ինչ ազդեցություն ունի ճակատագրի իշխանությունը մարդկանց գործերի վրա և ինչպես կարելի է դրան դիմակայել

Գիտեմ, թե որքան հաճախ են նախկինում պնդել ու հիմա էլ պնդում են, թե աշխարհում ամեն ինչ գտնվում է ճակատագրի ու աստծո իշխանության ներքո, իսկ մարդիկ ոչինչ չեն որոշում և ոչ մի բանի դիմակայել չեն կարող. Սրանից էլ եզրակացություն է արվում, որ կարիք չկա հոգսերով ծանրաբեռնվել, իսկ ավելի լավ է հաշտվել սեփական բախտի հետ՝ Հատկապես վերջին տարիներին շատերը հակվեցին այդ կարծիքի կողմը, քանզի մեր աչքի առաջ այնպիսի անսպասելի փոփոխություններ են կատարվում, որոնց կանխատեսումը վեր է մարդկային ուժերից: Երբեմն, խորհելով այդ

ամենի շուրջը, ես էլ եմ միանում ընդհանուր կարծիքին:

Եվ, այնուամենայնիվ, հանուն այն բանի, որ չկորցնեմ կամքիս ազատությունը, ենթադրում եմ, որ, գուցե, ճակատագիրը տնօրինում է մեր գործերի միայն կեսը, իսկ մյուս կեսը, կամ՝ մոտավորապես կեսը, թողնում է մարդկանց: Ես ճակատագիրը կնմանեցնեի մի կատաղահոս գետի, որը վարարելով հեղեղում է ափերը, տապալում ծառերը, ավերում տները, իր ճանապարհին սրբում-տանում է ամեն ինչ: Բոլորը փախչում, բոլորն ընկրկում են դրա բուռն գրոհի դեմ՝ անզոր լինելով այն կասեցնել: Այսուամենայնիվ, մի՞թե դա մարդկանց խանգարում է նախազգուշական միջոցներ ձեռք առնել, այսինքն՝ արգելապատնեշներ ու ամբարտակներ կառուցել, որպեսզի գետն ափերից դուրս գալով կամ հոսի դեպի ջրանցքները, կամ էլ դադարեցնի իր անզուսպ ու սպառնալի վազքը:

Ճիշտ այդպես էլ ճակատագիրն իր զորությունը դրսևորում է այնտեղ, որտեղ նրա դեմ որպես արգելք չի ծառանում քաջությունը, և իր գրոհն ուղղում է դեպի այն կողմը, որտեղ արգելապատնեշներ չի տեսնում: Նայեցեք

Իտալիային, որը շնչահեղձ է լինում իր իսկ առաջ բերած բուռն իրադարձությունների հորձանուտում, և կտեսնեք, որ նա նման է մի հարթ տարածքի, որտեղ չկան ոչ ամբարտակներ, ոչ էլ արգելապատնեշներ: Բայց չէ որ, եթե նա պաշտպանված լիներ քաջությամբ, ինչպես Գերմանիան, Իսպանիան կամ Ֆրանսիան, այդ հորձանքը կարող էր նրան շրջանցել կամ ծայրահեղ դեպքում սոսկալի ավերածությունների պատճառ չէր դառնա: Կարծում եմ, այսքանը բավական է ճակատագրին դիմակայելու մասին՝ ընդհանրապես.

Իսկ ինչ վերաբերում է, տիրակալներին, ապա տեսնում ենք, որ նրանցից ոմանք, ովքեր դեռ երեկ բարգավաճում էին, այսօր զրկվում են իշխանությունից, թեև, ինչպես թվում է, նրանց բնավորությունը ոչ հիմնովին ոչ էլ մասամբ չի փոխվել: Կարծում եմ, դա բացատրվում է այն պատճառներով, որոնք հանգամանորեն քննվեցին վերևում, այսինքն՝ եթե տիրակալն ամբողջ հույսը կապում է ճակատագրի հետ, նա չի կարող դիմակայել դրա հարվածներին· Կարծում եմ նաև, որ միայն նրանք են շարունակում բարգավաճել, ում գործելակերպը

համապատասխանում է ժամանակի ոգուն և կորցնում են նրանք, ում գործելակերպը ժամանակավրեպ է:

Քանզի տեսնում ենք, որ մարդիկ տարբեր եղանակներ են ընտրում իրենց առջև դրած նպատակին՝ այսինքն, հարստության ու փառքի հասնելու համար: Մեկը գործում է զգուշությամբ, մյուսը՝ շեշտակիորեն, մեկը՝ ուժով, մյուսը՝ հնարագիտությամբ, մեկը՝ համբերատար է, մյուսը՝ ոչ, և յուրաքանչյուրին իր նախընտրած ձևը կարող է հասցնել նպատակին: Բայց երբեմն տեսնում ենք, որ թեև երկուսն էլ գործել են նույն ձևով, օրինակ՝ զգուշությամբ, բայց երկուսից միայն մեկն է հաջողության հասել, և, ընդհակառակն, թեև երկուսն էլ գործել են յուրովի՝ մեկը զգուշությամբ, մյուսը՝ շեշտակիորեն, երկուսն էլ հավասարապես հաջողության են հասել Իսկ դա կախված է հենց այն բանից, որ մի գործելակերպը համապատասխանում է ժամանակի պահանջներին, իսկ մյուսը՝ ոչ: Ուստի, պատահում է, որ երկուսն էլ, գործելով տարբեր եղանակներով, միատեսակ հաջողության են հասնում, իսկ պատահում է, որ երկուսն էլ գործում են միատեսակ, բայց նրանցից

միայն մեկն է նպատակին հասնում

Դրանով է պայմանավորված նաև բարեկեցության փոփոխությունը Նա, ով գործում է զգուշությամբ ու համբերատարությամբ, քանի դեռ ժամանակն ու հանգամանքները բարենպաստ են, բարգավաճում է, բայց բավական է, որ ժամանակն ու հանգամանքները փոխվեն՝ սկսվում է ճգնաժամը, որովհետև նա չի փոխել իր գործելակերպը Եվ չկա մեկը, որ կարողանա վերափոխվել, որքան էլ որ խելացի լինի նախ՝ իր էության պատճառով, և երկրորդ՝ մարդն իրեն չի կարող ստիպել շեղվել այն ուղուց, որով ընթանալիս մինչ այդ կայուն հաջողություն է ունեցել Ահա թե ինչու, երբ գալիս է թափով գործելու պահը, զգույշ տիրակալը չի կարողանում դա անել, ինչի պատճառով էլ կործանվում է, բայց եթե նրա բնավորությունը ժամանակի ու հանգամանքների թելադրանքով փոխվեր, ապա նրա բարեկեցությունն էլ հարատև կլիներ

Հուլիոս պապը միշտ գործում էր շեշտակի ժամանակն ու հանգամանքները նպաստում էին նման գործելակերպին, ուստի նա ամեն անգամ հաջողության էր հասնում Հիշենք նրա առա-

ջին ձեռնարկումը՝ Բոլոնիայի զավթումը դեռևս մեսսեր Ջովաննի Բենտիվոլիոյի կենդանության օրոք: Վենետիկցիները դրան դեմ էին, Իսպանիայի թագավորը նույնպես, Ֆրանսիայի հետ այդ առթիվ բանակցություններ էին վարվում, բայց պապը միայնակ ռազմերթի ելավ իրեն հատուկ անզսպությամբ ու վճռականությամբ: Եվ ոչ ոք դրան չընդդիմացավ, վենտիկցիները՝ վախից, Իսպանիան՝ հուսալով իր իշխանության մեջ միավորել Նեապոլի թագավորությունը: Զիջեց նաև Ֆրանսիայի թագավորը, քանզի տեսնելով, որ պապն արդեն արշավանքի է ելել, և ցանկություն ունենալով վենետիկցիների դեմ նրա հետ դաշինք կնքել, մտածեց, որ զինված օգնության ցույց չտալով կարող է բացահայտ վիրավորանք հասցնել նրան:

Այդ շեշտակի ու անակնկալ հարձակումով պապը հասավ այն բանին, ինչին մարդուն մատչելի խելամտությամբ չէր կարող հասնել եկեղեցու որևէ այլ առաջնորդ, քանզի, եթե նա մնար Հռոմում, սպասելով, մինչև որ ամեն ինչ խաղաղվի ու կարգավորվի, ինչպես յուրաքանչյուր ոք կվարվեր նրա փոխարեն, Ֆրանսիայի թագավորը օգնությունից հրաժարվելու

հազար ու մի պատրվակ կգտներ, իսկ մյուս-ներն էլ՝ հազար ու մի փաստարկ կբերեին ընդ-դեմ նվաճման Ես չեմ խոսի նրա մյուս քայլե-րի մասին բոլորն էլ նույն կարգի էին և բոլորն էլ նրան հաջողվում էին Կարճատև կառավար-ման պատճառով նա այդպես էլ անհաջողու-թյան չհանդիպեց, բայց, եթե նա ավելի երկար ապրեր ու գային այնպիսի ժամանակներ, երբ զգուշություն կպահանջվեր, նրա բարեհաջո-ղությունը կավարտվեր, քանզի նա երբեք չէր շեղվի իր էությամբ նախընտրած ուղուց

Եվ այսպես, իբրև եզրափակում ասեմ, որ ճակատագիրը փոփոխական է, իսկ մարդն՝ իր գործելակերպով՝ համառ, դրա համար էլ քանի դեռ մարդու գործելակերպը համահունչ է ժա-մանակի ոգուն, նա բարգավաճում է, իսկ երբ այդ դաշնությունը խաթարվում է, բարգավա-ճումն էլ կանգ է առնում· Եվ, այնուամենայ-նիվ, ես կարծում եմ, որ հարձակումն ավելի լավ է քան զգուշությունը, որովհետև ճակա-տագիրը կնոջ նման է, և, եթե մեկը կամենում է նրա հետ ընդհանուր լեզու գտնել, պետք է նրան քոթակի, այդպիսիներին նա ավելի շուտ է հանձնվում, քան նրանց, ովքեր սառնու-

թյամբ են գործի անցնում Ուստիև նա, որպես կին, ջահելների ընկերուհին է, որովհետև նրանք այնքան էլ շրջահայաց չեն, ավելի խիզախ են և ավելի մեծ հանդգնությամբ են նրան զարդեր նվիրում:

## ԳԼՈՒԽ XXVI
## Իտալիան բարբարոսների ձեռքից ազատելու և երկրի տերը դառնալու կոչ

Խորհրդածելով ամբողջ ասվածի շուրջը և ինքս ինձ խորհելով, թե Իտալիայի համար չի՞ եկել արդյոք նոր տիրակալի մեծարելու ժամանակը և կա՞, արդյոք, այնտեղ մի նյութ, որից օգտվելով խելացի ու արիակամ մարդը կարենար դրան իր ուզած ձևը տալ՝ ի փառս իրեն և ի բարօրություն հայրենիքի,- եզրակացնում եմ, որ այնքան շատ են նոր տիրակալի հայտնվելուն նպաստող հանգամանքները, որ հազիվ թե որևէ մի այլ ժամանակ դրա համար ավելի հարմար լիներ, քան մերը Ինչպես մի ժամանակ Իսրայելի ժողովուրդը պետք է գտնվեր ստրկության մեջ, որպեսզի Մովսեսն իր խիզախությունը դրսևորեր, պարսիկները գտնվեին միդացիների լծի տակ, որպեսզի Կյուրոսն ի հայտ բե-

ըեր իր հոգեկան մեծ կորովը, աթենացիները՝ բաժան-բաժան եղած, որպեսզի Թեսևսն իր սխրանքը գործեր, այդպես էլ հիմա՝ ազգային ոգու զարթոնքի համար հարկ էր, որ Իտալիան հասնի ներկայիս ամոթալի վիճակին՝ ավելի ծանր ստրկության, քան հրեաները, ավելի մեծ ստորացման քան պարսիկները, ավելի խորը մասնատվածության քան աթենացիները· Չկա այնտեղ ոչ առաջնորդ, ոչ կարգուկանոն, Իտալիան ջախջախված է, կողոպտված, բզկտված, գեսնատարած ու մոխրացած

Պահեր են եղել, երբ թվացել է, թե մեր առջև նա է, ում աստված կամեցել է դարձնել Իտալիայի փրկիչ, բայց անողորմ ճակատագիրը նրան կասեցրել է նպատակի մատույցներում Իտալիան ուժասպառ լինելով սպասում է նրան, ով կամոքի նրա վերքերը, ով ավարառությունից կփրկի Լոմբարդիան, ծանր տուրքերից՝ Նեապոլի թագավորությունն ու Տոսկանան, ով կբուժի նրա թարախակալած խոցերը· Ինչպե՞ս է Իտալիան աստծուն աղերսում վերուստ առաքել մեկին, ով նրան կազատի բարբարոսների դաժանությունից ու բռնությունից Որքա՞ն լի է նա միավորող դրոշի տակ կանգնելու տենչով

ու պատրաստակամությամբ, միայն թե գտնվի դրոշակակիրը:

Եվ ամենամեծ հույսերը նա այժմ կապում է ձեր փառապանծ տան հետ, որը, խիզախության և ճակատագրի բարեհաճության, աստծո և եկեղեցու (որի առաջնորդը ձեր տոհմից է) հովանավորության շնորհիվ, կարող է ստանձնել Իտալիայի ազատագրման գործը. Դա այնքան էլ դժվար չի լինի, եթե դուք ընդօրինակեք այն այրերի կյանքն ու գործունեությունը, որոնց վերևում հիշատակել եմ. Որքան էլ որ բացառիկ ու զարմանարժան թվան այդ մարդիկ, այնուամենայնիվ, դրանք մարդիկ են, և նրանցից յուրաքանչյուրին բաժին է ընկել մի դիպված, որն ավելի բարեհաջող չի եղել, քան ձերը· Քանզի նրանց գործն ավելի արդար կամ ավելի հեշտ կամ ավելի աստվածահաճո չի եղել: Այստեղ հիրավի գործն արդար է,-«Iustum enim est bellum guibus necessarium, et pia arma ibi nulla nisi in armis spes est»[1]· Այստեղ պայմաններն իսկապես բարենպաստ են, իսկ որտեղ պայման-

---

1 Քանզի այն պատերազմն է արդարացի, որն անհրաժեշտ է, և այն զենքն է սրբազան, որի վրա է միակ հույսը (լատ )

ները բարենպաստ են, այնտեղ դժվարություն-ները նահանջում են, հատկապես, եթե հետևենք այն այրերի օրինակին, որոնց վերևում հիշատակել եմ· Մենք ականատես եղանք աստծո առաքած անսովոր, անօրինակ նախանշաններին՝ ծովը հետ քաշվեց, ժայռից ջուր բխեց, երկնից մանանա թափվեց գետնին ամեն ինչ համընկավ՝ մեծություն գուշակելով ձեր տոհմին, իսկ մնացյալը դուք պիտի անեք: Աստված ամեն ինչ չէ, որ ինքն է անում, որպեսզի մեզ չզրկի ազատ կամքից ու մեր բաժին փառքից:

Զարմանալի չէ, որ վերոհիշյալ իտալացիներից և ոչ մեկը նպատակին չի հասել, որին, ինչպես կարելի է հուսալ, կհասնի ձեր փառապանծ տունը, և դա նույնիսկ այն դեպքում, երբ Իտալիայում տեղի ունեցած բազմաթիվ հեղաշրջումներից ու ռազմական գործողություններից հետո այնտեղ կարծես թե մարել է մարտական ոգին: Դա բացատրվում է նրանով, որ հին կարգերը լավը չեն, իսկ լավերը ոչ ոք չի կարողացել մտցնել: Մինչդեռ ոչ մի գործ տիրակալին այնպես հռչակ չի բերում, որքան նոր օրենքների ու կարգերի հաստատումը Ամրապնդվելով

ու հավանության արժանանալով, դրանք տիրակալին փառք ու պատիվ են բերում. Իսկ Իտալիայում բավականաչափ նյութ կա, որին կարելի է ուզած ձևը տալ Մեծ է խիզախությունը նրա որդիներից յուրաքանչյուրի մեջ, բայց, ավա՜ղ, փոքր՝ առաջնորդների մեջ· Ներկա գտնվելով մենամարտերին ու ոչ մեծ ընդհարումներին, կտեսնեք, թե ինչ հնարամտությամբ, ինչ ճարպկությամբ և ուժով են աչքի ընկնում իտալացիները, բայց ճակատամարտի ժամանակ նրանք անճանաչելիորն փոխվում են: Այդ ամենի մեղավորը զորապետերի անգիտությունն է: Եթե մեկն էլ կա, որ գործից հասկանում է, նրան էլ չեն լսում, ու, թեև իրենց գիտակ են համարում բոլորը, ցայժմ չի գտնվել մեկը, որն իր խիզախությամբ ու հաջողակությամբ այնպես աչքի ընկներ, որ նրա առջև բոլորը խոնարհվեին· Ուստի, վերջին քսան տարվա ընթացքում տեղի ունեցած բոլոր պատերազմների ժամանակ միայն իտալացիներից կազմված զորքերը միշտ անհաջողություն են կրել, ինչի վկաներն են ամենից առաջ Տարոն, ապա՝ Ալեքսանդրիան, Կապուան, Ջենովան, Վայլան, Բոլոնիան և Մեստրին:

Եթե ձեր փառապանծ տունը կամենա գնալ այն մեծագույն այրերի հետքերով, որոնք դարձան հայրենիքի փրկիչներ, ապա նախ և առաջ պետք է սեփական զորք ստեղծի, առանց որի բոլոր ձեռնարկումներն անիմաստ կլինեն, քանզի նա չի կարող ունենալ ավելի հավատարիմ, ավելի քաջ, ավելի լավ զինվորներ, որոնք որքան էլ որ անհատապես լավը լինեն, միասին ավելի լավը կլինեն, եթե զորքի առջևում տեսնեն իրենց տիրակալին, որը նրանց հարգում ու մեծարում է Այդպիսի զորքը հիրավի անհրաժեշտ է, օտարերկրացիների ներխուժումը իտալացու քաջությամբ կասեցնելու համար Ծիշտ է, իսպանական ու շվեյցարական հետևակը ահեղ է համարվում, սակայն և մեկում և մյուսում կան թերություններ, այնպես որ այլ ձևով կազմված զորքը կարող է ոչ միայն դիմակայել, այլև գերազանցել նրանց. Քանզի, իսպանացիները նահանջում են հեծելազորի առջև, իսկ շվեյցարացիներին կարող է սարսափեցնել հետևակը, եթե մարտում համառությամբ նրանց չզիջի Արդեն մեկ անգամ չէ, որ համոզվել ենք և էլի կհամոզվենք, որ իսպանացիները նահանջել են ֆրանսիական հեծելազորի առջև,

իսկ շվեյցարացիները պարտություն են կրել իս-
պանական հետևակից Վերջինը դեռ մեզ չի
հաջողվել ամբողջությամբ տեսնել, բայց բանը
դրան էր գնում Ռավեննայի մոտ տեղի ունեցած
ճակատամարտում, երբ իսպանական հետևակը
դուրս եկավ գերմանական ջոկատների դեմ,
որոնք կազմված էին շվեյցարականների նմանո-
ղությամբ. Քաջավարժ իսպանացիներին հաջող-
վեց, իրենց փոքրիկ վահաններով պաշտպանվե-
լով, առաջանալ ու մտնել թշնամու նիզակների
տակ, և, գտնվելով անվտանգության մեջ, նրան
մահացու հարվածներ հասցնել այնպես, որ նա
դրան ոչինչ չկարողացավ հակադրել, և, եթե
իսպանացիների դեմ հեծելազոր դուրս չբերեին,
նրանք գլխովին կոչնչացնեին թշնամու
հետևակը. Այսպիսով, ուսումնասիրելով այս
կամ այն զորատեսակի թերությունները, պետք
է կառուցել նորը, որը կարողանա դիմակայել
հեծելազորին և չերկնչի օտար հետևակից, ին-
չին հանում են ինչպես զենքի նոր տեսակով,
այնպես էլ զորքի նոր կառուցվածքով: Եվ այդ
բոլորը վերաբերում է այն նորամուծություննե-
րին, որոնք նոր տիրակալին ամենից ավելի շատ
են փառք ու մեծություն բերում:

Այսպիսով, չի կարելի ձեռքից բաց թողնել առիթը: Այսքան տարիներ սպասելուց հետո Իտալիան թող վերջապես տեսնի իր փրկչին Բառերով չեմ կարող արտահայտել, թե օտարերկրացիների ներխուժումներից տուժած բնակիչներն ի՛նչ սիրով կընդունեն նրան, վրեժի ի՛նչ ծարավով, ի՛նչ աներեր հավատով, ի՛նչ արցունքներով: Ի՞նչ դռներ փակ կլինեն նրա առջև: Ո՞վ չի հնազանդվի նրան: Ո՞ւմ նախանձը կփակի նրա ճանապարհը՝ Ո՞ր իտալացին նրան հարգ ու պատիվ չի մատուցի Բոլորն էլ զգում են, թե ինչ գարշահոտություն է արձակում բարբարոսների տիրապետությանը Ուրեմն, թող ձեր փառապանծ տունն այդ պարտականությունը ստանձնի այն քաջությամբ ու հավատով, որով կատարվում են արդար գործերը, որպեսզի նրա դրոշի հովանու ներքո փառավորվի մեր հայրենիքը և նրա առաջնորդությամբ իրականանա Պետրարկայի սաածը

***Քաջությունը կխրոխտանա***
***վայրագության դեմ,***
***Ու կընկնի ոտքը,***
***Քանզի, չի մարել դեռ քաջությունը***
***Իտալացու սրտում:***

# ԹԱՐԳՄԱՆՉԻ ՎԵՐՋԱԲԱՆԸ

Ցավոք, բնագրի լեզուն չիմանալով, թարգմանությունը կատարել եմ միջնորդ լեզվից՝ ռուսերենից, անհրաժեշտության դեպքում խորհուրդների համար դիմելով բնագրի ռուսերեն թարգմանչուհի Գալինա Մուրավյովային, որի տված բացատրությունները զգալիորեն դյուրացրել են աշխատանքս, ինչի համար անչափ երախտապարտ եմ նրան: Թվում է, այլ կերպ չէր էլ կարող լինել. Մաքիավելին այնպիսի հեղինակ է, որի մտքերը հեղեղի նման հորդալով, երբեմն չեն գտել արտահայտության այն ձևը, որը երկն ավելի դյուրընթեռնելի կդարձներ 21-րդ դարում ապրողներիս համար: «Տիրակալի» մեջ բավական շատ են հանդիպում մշուշապատ, երկարաշունչ նախադասություններ, որոնք հարկ է եղել նախ վերծանել, ապա նոր միայն ըստ պատշաճի շարադրել՝ աշխատելով չխաթարել հեղինակի բուն ասելիքը: Բայց ավելի հաճախ նրա մտքերն այնպես են խտացել, որ վերածվել են աֆորիզմների, որոնք առատորեն սփռված են գրքի գրեթե բոլոր գլուխներում: Կարող եմ հավաստիացնել, որ թարգմանու-

թյան ամբողջ աշխատանքի ընթացքում ինձ չի լքել պատասխանատվության զգացումը հեղինակի և հայ ընթերցողի առջև, ինչի թելադրանքով էլ տեղ-տեղ հեռացել եմ ռուսերենի տառից ու բառից՝ փորձելով հասկանալ կես հազարամյակ առաջ ապրած հեղինակի մտքերի ընթացքն ու դրանք հնչեցնել հայերեն. Եվ այդ գործում անուրանալի է գրքի հրատարակիչ և խմբագիր Ալբերտ Իսոյանի դերը, որի խորաթափանց մտքի ու բանիմաց միջամտության շնորհիվ երկի խրթին թվացող կամ ակնարկով ասված բազմաթիվ կտորներ ճշտգրտվեցին ու հստակվեցին՝ բարելավելով կատարածս աշխատանքը:

Հիմա, երբ թարգմանության ձեռագիրը ծալել ու մի կողմ եմ դրել, պարզապես զարմանում եմ հանդգնությանս վրա, որն ինձ մղեց ձեռնարկելու այս գործը. Եվ այն ցատկորդի նման, որը պահի ազդեցությամբ մի ոստյունով կտրելանցել է անդունդն ու չրջվելով սահմռկել դրա խորությունից, ես ևս՝ թարգմանության ավարտից ու տեքստի վերընթերցումից հետո պարզապես սարսափեցի՝ նոր միայն տեսնելով այն անհատակ խորխորատը, որի անունը Մաքիա-

*վելի է և ում մտքերը դարերի բովով անցնելով, ժամանակակիցների ու հետնորդների կողմից ընկալվել են եթե ոչ ամեն դեպքում որպես ընդունելի, ապա գոնե՝ ուշագրավ, իսկ ավելի հաճախ՝ ճշմարիտ և նույնիսկ՝ ընդօրինակելի: Իսկ այդպես պատահում է միայն մեծերի հետ:*

*Ալբերտ ԲԱՐՍԵՂՅԱՆ*
*2009թ նոյեմբեր Մոսկվա-Երևան*
*a_barsegyan@bk.ru*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Նիկոլո ՄԱՔԻԱՎԵԼԻԻ ընծայագիրը նորին պայծառափայլություն Լորենցո ՄԵԴԻՉԻՆ 3*

**ԳԼՈՒԽ I**

*Քանի տեսակի պետություններ են լինում և ինչպես են ձեռք բերվում 5*

**ԳԼՈՒԽ II**

*Ժառանգական մենիշխանության մասին 6*

**ԳԼՈՒԽ III**

*Խառը պետությունների մասին . . . . . .8*

**ԳԼՈՒԽ IV**

*Թե ինչու Դարեհի թագավորությունը, որը նվաճվել էր Ալեքսանդրի կողմից, Ալեքսանդրի մահից հետո չապստամբեց նրա հաջորդների դեմ. . . . . .25*

ԳԼՈՒԽ V

*Ինչպես կառավարել այն քաղաքներն ու պետությունները, որոնք մինչև նվաճվելը ապրել են սեփական օրենքներով . .. .. . . .31*

ԳԼՈՒԽ VI

*Նոր պետությունների մասին, որոնք ձեռք են բերվում սեփական զենքով կամ քաջությամբ. . 34*

ԳԼՈՒԽ VII

*Նոր պետությունների մասին, որոնք ձեռք են բերվում ուրիշի զենքով կամ ճակատագրի բարեհաճությամբ.... .. .... . ..... .... . .. . . .42*

ԳԼՈՒԽ VIII

*Նրանց մասին, ովքեր իշխանության են հասնում ոճրագործությամբ. .. . . .... .. .. . .. . .. . ... .57*

ԳԼՈՒԽ IX

*Քաղաքացիական մենիշխանության մասին 66*

ԳԼՈՒԽ X

*Ուրիշ ինչպես պետք է չափել պետության ուժը . 74*

ԳԼՈՒԽ XI

*Եկեղեցական պետությունների մասին . . . . .78*

ԳԼՈՒԽ XII

*Զորքերի տեսակների և վարձկան զինվորների մասին..... ..... . ... ..... .. . .. ..... . ..... . .83*

ԳԼՈՒԽ XIII

*Դաշնակցային, խառը և սեփական զորքերի մասին ..94*

ԳԼՈՒԽ XIV

*Ինչ պետք է անի տիրակալը ռազմական գործի առնչությամբ.... .. .... . ... ..... .. . ... . ..... 102*

ԳԼՈՒԽ XV

*Թե ինչու են մարդկանց և մասնավորապես տիրակալներին գովաբանում կամ նախատում 107*

ԳԼՈՒԽ XVI

*Առատաձեռնության և խնայողության մասին...110*

ԳԼՈՒԽ XVII

*Դաժանության ու գթասրտության և այն մասին, թե ինչ ներշնչես, որ ավելի լավ լինի՝ սե՞ր, թե՞ վախ . . .. . .. .. . . .. .....115*

ԳԼՈՒԽ XVIII

*Այն մասին, թե տիրակալներն ինչպես պիտի իրենց խոսքը պահեն .. . .. .. .. .... .... . . .. 122*

ԳԼՈՒԽ XIX

*Ինչպես խուսափել ատելությունից ու արհամարհանքից . .. .. ... .. . . .127*

ԳԼՈՒԽ XX

*Ամրոցների և շատ այլ բաների օգտակարության մասին . . . . . ... . .. . ... .. . 148*

ԳԼՈՒԽ XXI

*Ինչ պիտի անի տիրակալը հարգանքի արժանանալու համար . . . ... . . .... 157*

ԳԼՈՒԽ XXII

*Տիրակալի խորհրդականների մասին . . . ... 165*

ԳԼՈՒԽ XXIII

*Ինչպես խուսափել քծնողներից. .. .. . .. . . 168*

ԳԼՈՒԽ XXIV

*Թե ինչու Իտալիայի տիրակալները զրկվեցին իրենց պետություններից . . . 172*

ԳԼՈՒԽ XXV

*Ինչ ազդեցություն ունի ճակատագրի իշխանությունը մարդկանց գործերի վրա և ինչպես կարելի է դրան դիմակայել . ... .. . . 175*

ԳԼՈՒԽ XXVI

*Իտալիան բարբարոսների ձեռքից ազատելու Վ. երկրի տերը դառնալու կոչ... . ..... .. . .  182*

*Թարգմանչի վերջաբանը . .. .. . .....  . .. .. 190*

Նիկոլո Մաքիավելի

# ՏԻՐԱԿԱԼԸ

*Խմբագիր՝* *Ա. Իսոյան*
*Շարվածք՝* *Ա. Բաղդասարյան*
*Էջադրող՝* *Վ. Իսոյան*
*Սրբագրիչ՝* *Ա. Բարսեղյան*

Գիրքը տպագրված է
«Հայրապետ» հրատարակչության
տպարանում

**Никколо Макьявелли**

# ГОСУДАРЬ

*На армянском языке*

Переводчик
Альберт Барсегян

Ереван, 2010

# ՆԻԿՈԼՈ ՄԱՔԻԱՎԵԼԻ

Մարդկային հոծ բազմություն ղեկավարելու համար դերադասելի է լինել մարդկային, քան մեծամիտ և ավելի լավ է լինել դթասիրտ, քան դաժան:

Ամեն մեկն էլ տեսնում է, թե դու ինչպիսին ես թվում. քչերն են զգում, թե իրականում՝ ով ես դու:

Չարյաց փոքրագույնը հարկ է ընդունել որպես բարիք:

ՆԻԿՈԼՈ ՄԱՔԻԱՎԵԼԻ

# ՏԻՐԱԿԱԼԸ